

ԱՐԵՎԵԼԱԱՍԻԱԿԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

II

ԵՐԵՎԱՆ 2011





6 89872



NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA  
INSTITUTE OF ORIENTAL STUDIES


**EASTERN ASIAN STUDIES**

**II**

**Editor**

**Nikolay Hovhannisyan**  
**Doctor of History, Professor**  
**Correspondent Member NAS Armenia**

YEREVAN 2011




7  
A99273

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐԵՎԵԼԱՍՍԻԱԿԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

II

ԵՐԵՎԱՆ 2011





ՀՏԴ 070  
ԳՄԴ 76.12  
Ա 862

*Տպագրվում է*  
**Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի  
Արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ**

**Գլխավոր խմբագիր՝  
Նիկոլայ Հովհաննիսյան  
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
ՀՀ ԳԱԱ քոթակից անդամ**

*Պատասխանատու քարտուղար՝ Եվա Հարությունյան*

Ա 862 Արևելասիական ուսումնասիրություններ / ՀՀ ԳԱԱ;  
Արևելագիտության ին-տ; Գլխ. խմբ. Ն. Հովհաննիսյան.- Եր.:  
Լուսակն, 2011: Հ.2.- 138 էջ:

Սույն հաստիքում զետեղված են արևելասիական արդի մի քանի հանգուցային հիմնախնդիրների լուսաբանությամբ նվիրված վերլուծական քննության մի շարք հոդվածներ: Մասնավորապես մի այնպիսի մոտեցման հարցեր, ինչպիսին համաշխարհային, միջազգային հարաբերությունների կենտրոնի տեղաշարժը Արևմուտքից Արևելք, որտեղ տեղակայված են այնպիսի քաղաքական և սոցիալական հսկաներ, ինչպես Չինաստանը, Հնդկաստանը, Ճապոնիան: Զգալի ուշադրություն է նվիրված արտաքին քաղաքական հարաբերությունների քննարկմանը, այդ թվում ժամանակակից փուլում Չին-եզիպտական, Հնդկա-հայկական միջպետական, Ճապոնա-արաբական և հարակից հարցերի լուսաբանությամբ: Ժողովածուն պարունակում է մաս տեղեկատվական հաղորդումներ Երևանի Վ. Բրյուսովի անվան Պետական Լեզվաբանական Համալսարանի Կոմիտցիոսի ինստիտուտի կազմավորման, նպատակների և գործունեության վերաբերյալ և Չինաստանի արդի միջազգային հարաբերությունների ակադեմիայի պատվիրակության Երևան ժամանելու և ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի հետ գիտական համագործակցության բանակցությունների մասին: Ընթերցողը կարող է ծանոթանալ մաս իրեն հետաքրքրող այլ խնդիրների հետ:

Նախատեսված է արևելագետների, միջազգայնագետների, պատմաբանների և արևելագիտական հիմնահարցերով հետաքրքրվող մասնագետների ու ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 070  
ԳՄԴ 76.12

ISBN 978-9939-834-15-3

© Արևելագիտության ին-տ., 2011  
© «Լուսակն» հրատ., 2011

# ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐՄԱՏԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԱՇԽԱՐՀԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՏԵՂԱՇԱՐԺԸ ԱՐԵՎՍՈՒՏՔԻՅ

ԱՐԵՎԵԼՔ

## I. Տեսադրույքը:

Արդի համաշխարհային զարգացումներին բնորոշ են արմատական, երբեմն մույնիսկ անսպասելի զարգացումներ, որոնք ստիպում են վերանայել տարիների ընթացքում ձևավորված մեր քաղաքական պատկերացումները մեզ շրջապատող աշխարհի վերաբերյալ և ցուցաբերել հայեցակարգային մոտեցումներ արդի քաղաքական, տնտեսական և ռազմական հիմնախնդիրների նկատմամբ: Հրապարակի վրա անընդհատ հայտնվում են նոր տեսություններ, ծնվում նոր գաղափարներ և ծրագրեր, որոնք ստիպում են մարդկային հասարակայնությանը պարբերաբար արժեքային վերագնահատումներ կատարել, հրաժարվել հնացած և իրենց դարձնում անօգտակար արժեքներից ու տեսադրույթներից, և որդեգրել նոր սկզբունքային հիմնադրույթներ: Կարելի է ասել, որ համաշխարհային զարգացումը պատմական բոլոր դարաշրջաններում ընթացել է այդ հունով: Սակայն մեր դարաշրջանին բնորոշը կամ առանձնահատուկն այն է, որ զարգացման տեմպերն անհամեմատ ավելի արագ են, քան հին կամ միջին դարերում, և անգամ նոր դարերում: Այդ երևույթը հավասարապես բնորոշ է նաև մի այնպիսի բարդ, իր խորհրդավորությամբ միստիկայի հետ սահմանակցող և անկախատեսելիությամբ աչքի ընկնող բնագավառի, որպիսին միջազգային հարաբերությունները կամ համաշխարհային զարգացումներն են:

Դարերի ընթացքում ձևավորվել է համաշխարհային կամ միջազգային հարաբերությունների կենտրոնի հասկացությունը, սակայն երբեք չի արձանագրվել, որ որևէ պետություն կամ պետությունների խմբավորում

մշտապես իրականացնի համաշխարհային կամ միջազգային կենտրոնի առաքելությունը: Կենտրոնն իր բնույթով հարավփոփոխ է և շարժական:

## II. Տեսադրույթը պատմական կտրվածքով:

Մ.թ.ա. I դարում, հելենիզմի ծաղկման շրջանում, միջազգային հարաբերությունների կենտրոնը ձևավորում էին Հռոմը և Պարսկաստանը: Սակայն մ.թ.ա. 95թ., երբ Տիգրան Երկրորդը դարձավ Հայաստանի արքա և հաղթանակներ տանելով Պարսկաստանի դեմ իրավունք ստացավ կրելու արքայից արքայի տիտղոսը, իսկ Հայկական թագավորությունը մի շարք նվաճումների արդյունքում վերածվեց Հայկական կայսրության, Հայաստանն ուժեղի իրավունքով Հռոմից հետո դարձավ այդ կենտրոնի երկրորդ անդամ և մի որոշ ժամանակ երրորդ տեղը մղեց Պարսկաստանին: Ստեղծվեց եռակենտրոն աշխարհ: Արաբ պատմաբաններ Մարվան ալ-Մուտավարը, Ֆուադ Հասան Հաֆիզը, Սամիր Աբրաշը, Ուսման ալ-Թուրքը և այլք այդ շրջանն անվանում են «Հայկական թագավորության ծաղկման և միավորման ու կայսրության ամրապնդման դարաշրջան», որն ընդգրկում էր մ.թ.ա. 94-69թթ.<sup>1</sup>:

VII-X դարերում միջազգային հարաբերություններում կենտրոնի առաքելությունն իրականացնում էր Արաբական խալիֆայությունը, որի տիրույթները ձգվում էին Հնդկական օվկիանոսից մինչև Ատլանտյան օվկիանոսը: Նրա քաղաքական գլխավոր մրցակիցը Բյուզանդական կայսրությունն էր, որը մույնպես հավակնում էր կենտրոնի տեղի համար, սակայն նա արդեն կորցրել էր իր երբեմնի հզորությունը:

Դրան հաջորդած ժամանակաշրջանը խավարի, բարբարոսության, մեկը մյուսին հաջորդող ռազմական արշավանքների, ավերածությունների, հոգևոր-մշակութային կյանքի անկման ամենամռայլ տարիներն էին, որն արդյունք էր Ալթայից և Միջին Ասիայի տափաստաններից դեպի Մերձավոր ու Միջին Արևելք զանազան թուրքական անասնապահ քոչվորական վայրենի ցեղերի ներխուժումների: Դրա պատճառով մարդկության զարգացումը մի քանի դարով հետ շարվեց: Բնականաբար պատմության այդ ամենամռայլ շրջանում խոսք էր կարող լինել որևէ քաղա-

քակիրթ հարաբերությունների և, հետևաբար, միջազգային հարաբերությունների միասնական կենտրոնի մասին: Կենտրոններ, իհարկե կային, բայց դրանք բարբարոսական գործողությունների կենտրոններ էին, երբ մարդկային զանգեղից կառուցվում էին բուրգեր: Թուրքական անասնապահ քոչվորական ցեղախմբերի հարվածների տակ պատմության բատերաբեմից անհետացան Արաբական խալիֆայությունը, Բյուզանդական կայսրությունը և պետական այլ քաղաքակիրթ կազմավորումներ: Նրանց փլատակների վրա բարձրացած Օսմանյան կայսրությունն այդպես էլ չկարողացավ դառնալ այդ պատմական դարաշրջանի միջազգային հարաբերությունների կենտրոն: Նա չուներ դրա մախադրյալները: Օսմանյան պետությունը զարգացման ցածր մակարդակի վրա գտնվող թուրքական օղուզ անասնապահ քոչվորական ցեղերի խառնիճադանճ միավորում էր, որը փայլուն կերպով իրականացնում էր իր տիրապետության տակ գտնվող ոչ-թուրք ժողովուրդների սպանողը: Նա դարձավ նոր ժամանակներում ցեղասպանության իրագործման առաջին կենտրոնը, վերածվելով ցեղասպան պետության:

Այնուհետև քաղաքական բեմահարթակում հայտնվեց Եվրոպան, իսկ ավելի լայն առումով Արևմուտքը և միջազգային հարաբերությունների կենտրոնը տեղափոխվեց այնտեղ: Ամերիկյան ականավոր քաղաքագետ՝ պրոֆեսոր Զբիգնև Բժեժինսկին նշում է, որ «Աշխարհում Արևմուտքի տիրապետությունը շարունակվեց 500-600 տարիների ընթացքում»<sup>2</sup>: Այդ մեծ ժամանակահատվածում Արևմուտքի շրջանակներում հասկանալի է բազմաթիվ անգամներ եղել են տեղաշարժեր առաջատարի հարցում: Այդ դերը ստանձնել է մերթ Մեծ Բրիտանիան, մերթ Ֆրանսիան՝ Նապոլեոն Բոնապարտի կայսրության շրջանում, մերթ Ռուսական կայսրությունը և այլն: XIX դարի կեսերին եվրոպական առաջատար մի քանի պետություններ համախմբվելով, հիմք դրեցին այսպես կոչված «Եվրոպական կոնցերտին», որի մեջ մտնում էին Բրիտանական կայսրությունը, Ֆրանսիան, Ռուսական կայսրությունը, Ավստրիական կայսրությունը և Պրուսիան՝ հետագայում կայսերական Գերմանիան: Այս իրավիճակը պահպանվեց ընդհուպ մինչև Առաջին համաշխարհային պատերազմը:

Երկու համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանում /1918-1939 թթ./ աշխարհը չունեցավ նրան ուղղություն տվող մեկ,

բոլոր երկրների կողմից ճանաչված կենտրոն, թեև դրա համար պայքարում էին հիտլերյան Գերմանիան, Ֆաշիստական Իտալիան և միլիտարիստական Ճապոնիան՝ որպես մեկ ռազմաքաղաքական խմբավորում, Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան՝ որպես մեկ այլ ռազմաքաղաքական խմբավորում, Խորհրդային Միությունը, որը տարված էր աշխարհը սոցիալիստական-կոմունիստական սկզբունքների հիման վրա վերակառուցելու անիրատեսական գաղափարներով, և ԱՄՆ-ը, որն այդ ժամանակ դեռ ոչ մի կերպ չէր կարողանում հաղթահարել մեկուսացման՝ իզոլյացիոնիզմի քաղաքականությունը և միջամտել Ամերիկայից դուրս գտնվող աշխարհի գործերին:

### III. Երկկենտրոն աշխարհի ձևավորումը և անցումը միակենտրոն աշխարհին:

Իրադրությունը մեկ անգամ ևս փոխվեց Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Արդեն պատերազմի ընթացքում ակնհայտ դարձավ, որ հետպատերազմյան շրջանում մարդկությունն ունենալու է երկու առաջնորդ երկիր՝ ԱՄՆ-ը և ԽՍՀՄ-ը: Եվ, իրոք, այդպես էլ եղավ: Աշխարհը տրոհվեց երկու մասի՝ իր համապատասխան ղեկավար պետություններով: Ձևավորվեց սոցիալիզմի համաշխարհային համակարգը, որը գլխավորում էր Խորհրդային Միությունը, և արևմտյան երկրների կամ, ըստ խորհրդային եզրաբանության՝ իմպերիալիզմի ճամբարը՝ ԱՄՆ-ի գլխավորությամբ: Այդ տարիներին աշխարհը համարվում էր երկկենտրոն, որի գլուխ էին կանգնած միջուկային երկու գերտերությունները՝ ԽՍՀՄ-ը և ԱՄՆ-ը:

Այս իրավիճակը պահպանվեց ընդհուպ մինչև 1991թ., երբ ԽՍՀՄ-ը դադարեց որպես պետություն գոյություն ունենալուց և լուծարվեց սոցիալիզմի համաշխարհային համակարգը: Սառը պատերազմն ավարտվեց Խորհրդային Միության և նրա գլխավորած սոցիալիստական համակարգի պարտությամբ ու վերացումով: Ասպարեզը մնաց ԱՄՆ-ին, որը և դարձավ միջազգային հարաբերությունների միակ կենտրոնը:



Ահա այսպես ձևավորվեց միջազգային հարաբերությունների միակերպորեն համակարգը, որն ըստ էության պահպանվում է մինչև օրս: Մակայն դա աշխարհին չբերեց հանդարտություն: Մարդկային հասարակությունն այժմ քակոյտվել է զարգացման մոր վտու, երբ տեղի է ունենում միջազգային հարաբերությունների կենտրոնի հերթական տեղաշարժը: Միջազգային բնույթ ստացած քաղաքական մոր խմորումները շարունակվում են, որոնք դրսևորվում են տարբեր կերպ:

Առաջին, Խորհրդային Միության փլատակների վրա ձևավորվեցին 15 պետություններ: Նրանցից երեքը՝ Լատվիան, Լիտվան և Էստոնիան, որդեգրեցին բացահայտ հակառուսական դիրքորոշում: Այդ մույն հակառուսական քաղաքականությունն ուղեմիջ դարձավ մասնախկին սոցիալիստական պետությունների՝ Լեհաստանի, Հունգարիայի, Ռումինիայի, որոշ վերապահումներով մասնախկին, ինչպես մասնախկին սոցիալիստական տրոհումից հետո քաղաքական քարտեզի վրա հայտնված Չեխիայի, և բաժան-բաժան եղած Հարավսլավիայի մի քանի բեկորների՝ Բոսնիայի և Հերցեգովինայի, Խորվաթիայի, Սլովենիայի ու Մակեդոնիայի համար: Այդ երկրները, դրանց ավելացրած Վրաստանը, հիմնականում, մասնախկին մասնախկին խմորվեցին ՆԱՏՕ-ի մասնախկին, ցանկություն հայտնելով անդամակցել աշխարհում իր գոյությունը շարունակող այդ միակ ռազմական կազմակերպությանը, հույս տածելով, թե դա նրանց կապահովագրի ռուսական արջի ոտնձգություններից:

Երկրորդ, երրորդ աշխարհի կամ չմիացած երկրների բազմաթիվ երկրներ, որոնք համարվում էին զարգացման սոցիալիստական ուղիով ընթացող երկրներ, իրենց զգացին լքված, անգամ որբացած: Դրանք Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի այն երկրներն էին, որոնք հաստատել էին սերտ քաղաքական, ռազմական և տնտեսական հարաբերություններ Խորհրդային Միության հետ, նրանցից ոմանք ունեին անգամ կնքված համապատասխան պայմանագրեր ու համաձայնագրեր, և որոնք Խորհրդային Միությանը դիտում էին որպես իրենց բնական դաշնակիցը և պաշտպանը: Մակայն այժմ, փոփոխված աշխարհում, նրանք հարկադրված էին հաշտվել և հարմարվել մոր ռազմավարական իրողություններին: Դա, իհարկե, նրանց անհանգստացնում էր և պատճառ հանդիսացավ քաղաքական խմորումների մեկ այլ գոտու ձևավորման

համար: Այդ գոտու մեջ են մտնում Սիրիան, Ալժիրը, Եգիպտոսը, Իրաքը, Եմենը, Բենինը, Գաման, Գվինեան, Անգոլան, Կուբան և մի շարք այլ երկրներ:

Հենց այս գոտում սկսվեց շարժում միակենտրոն աշխարհի գոյության դեմ և որպես այլընտրանք առաջադրվեց բազմակենտրոն աշխարհի անցնելու պահանջը: Այդ պահանջը, որն ուղղված էր ԱՄՆ-ի՝ աշխարհի միակենտրոն առաջնորդը լինելու դեմ, մեծ թափ ստացավ, երբ նրա պաշտպանությամբ հանդես եկան Ռուսաստանը, Չինաստանը, Հնդկաստանը, Ճապոնիան և աշխարհի շատ, այդ թվում եվրոպական երկրներ, միջազգային ու հասարակական տարբեր կազմակերպություններ:

Միջազգային հարաբերություններում միակենտրոնից բազմակենտրոն աշխարհի անցնելու պահանջը դարձել է մեր ժամանակների ամենաարդիական պահանջը:

#### **IV. Համաշխարհային կենտրոնի ձևավորման և տեղաշարժերի օրինաչափությունները:**

Միջազգային հարաբերությունների կենտրոնի ձևավորումը կամ նրա տեղաշարժը երբեք ինքնաբերաբար չի լինում: Համաշխարհային-պատմական այդ երևույթն ունի իր յուրահատկություններն ու օրինաչափությունները:

Առաջին, կենտրոնը, ինչպես վկայում է համաշխարհային պատմությունը, մշտական կամ մեկ անգամ ընդմիշտ տրված երևույթ չէ: Նա սովորաբար լինում է շարժական, կամ օգտվելով արդի եզրաբանությունից՝ ռոտացիոն սկզբունքով, սակայն այն տարբերությամբ, որ ոչ թե տվյալ կենտրոնը կամովին կամ որոշ ժամանակ անց այդ «պաշտոնը զբաղեցնելուց» հետո վայր է դնում կենտրոնի իր լիազորություններն, այլ դուրս է մղվում այլ ուժերի կողմից, որոնք արդեն հասունացել են կենտրոնի գործառույթներն իրենց ուսերին վերցնելու համար: Տվյալ պահին հին կենտրոնն արդեն սպառած է լինում իրեն, զրկված պահուստային գործոններից, համապատասխան քաղաքական, տնտեսական, ռազմական և

հոգևոր-բարոյական ներուժից, մանկերնու հնարավորությունից և առաջ-նորդ-լիդերի դերակատարումից: Իսկ նոր կենտրոնի հավակնորդը, տա-րիների ընթացքում, շատ հաճախ սովորական աչքի համար անտեսանե-լի, ուժեր կուտակելով, մարտահրավեր է նետում իր դարն ասլորած հնա-մաշ կենտրոնին: Եվ այդ տեղաշարժը՝ հին կենտրոնի վերացումը, նրա գահազրկումը և նոր կենտրոնի առաջացումն ու գահակալումը պարտա-դիր չէ, որ բռնի ուժով կատարվի: Այն տեղի է ունենում շատ հանգիստ, քաղաքակիրթ ձևով, առանց աղմուկի ու լացուկոծի: Սրանում է այդ գոր-ծընթացի յուրահատկություններից մեկը:

Երկրորդ յուրահատկությունն այն է, որ միջազգային հարաբերու-թյունների կենտրոնը ո՛չ ընտրվում է համաշխարհային հանրության կող-մից, ո՛չ էլ նշանակվում որևէ մարմնի, թեկուզ և միջազգային կազմակեր-պության կողմից: Այդ երևույթի գաղտնիքը և, եթե կուզեք իմանալ, հրա-պուրիչ կողմը հենց դրանումն է:

Անտիկ շրջանում և միջին դարերում ըստ էության գոյություն չունե-ր «համաշխարհային հանրություն» հասկացությունը, հասարակական-քաղաքական այդ երևույթը կամ ինստիտուտը դեռևս ձևավորված չէր: Իսկ պետություններն էլ պատմական այդ փուլերում կայուն կառույցներ չէին: Չկար նաև որևէ միջազգային կազմակերպություն: Ուստի պատմա-կան այդ դարաշրջաններում կենտրոնի հարցը՝ հնի տապալումը և նորի հաստատումը կատարվում էր ուժերի նոր հաշվեկշռի, ըստ տնտեսական, քաղաքական և ռազմական գործոնների հզորության:

Հայտնի է, որ առաջին համապարփակ միջազգային կազմակերպու-թյունն ի հայտ եկավ Առաջին համաշխարհային պատերազմից հետո, երբ Փարիզում գումարված Խաղաղության միջազգային կոնֆերանսը 1919թ. որոշեց ստեղծել մնաւ կազմակերպություն, որը կոչվեց Ազգերի լիգա: Նա իր գոյությունը ձևականորեն պահպանեց մինչև 1946թ., երբ ինքնալուծար-վեց: Երկրորդ, ավելի համապարփակ միջազգային կազմակերպությունը ստեղծվեց Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, 1945թ. աշ-նանը, այն բանից հետո, երբ ակնհայտ դարձավ, որ Ազգերի լիգան չի կա-տարել իր վրա դրված առաքելությունը: Դա Միավորված ազգերի կազմա-կերպությունն է /ՄԱԿ/, որին այսօր անդամակցում են աշխարհի 193 պե-տություն: Թե՛ Ազգերի լիգան և թե՛ ՄԱԿ-ը, իրենց Կանոնադրության մեջ

կամ հիմնադրությամբ ելն պարունակում որևէ կետ պատմական տվյալ ժամանակահատվածում միջազգային հարաբերությունների կենտրոնի վերաբերյալ: Դիշտ է, ՄԱԿ-ի Կանոնադրությունն ունի հատուկ կետ Անվտանգության Խորհրդի հինգ մշտական անդամների՝ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Չինաստանի, Ռուսաստանի և Ֆրանսիայի իրավասությունների և պարտականությունների վերաբերյալ, սահմանելով նրանց միաձայնության սկզբունքը և վետոյի իրավունքը, նրանց վրա դնելով աշխարհում խաղաղության պահպանման ու պատերազմների կանխման պարտականությունները, բայց դա չպետք է շփոթել նրանցից որևէ մեկին միջազգային հարաբերությունների կենտրոնի կարգավիճակ տրամադրելու կամ շնորհելու հետ: Դրանք բոլորովին տարբեր բաներ են:

**Երրորդ, երկկենտրոն և միակենտրոն աշխարհների գոյությանը բնորոշ էր մի կարևոր առանձնահատկություն:** Երկկենտրոն աշխարհի շրջանում, որը համընկնում էր սառը պատերազմի դարաշրջանին, աշխարհի բաժանումը երկու միմյանց հակադիր խմբավորումների՝ իրենց համապատասխան կենտրոններով, կատարվել էր գաղափարական՝ սոցիալիստական և բուրժուական հենքի վրա: Ընդհանրապես այդ շրջանում, բոլոր հարցերը, անգամ այնպիսիները, որոնք թվում էին երկրորդական, խիստ գաղափարայնացված էին: Նախորդ դարերում երբեք աշխարհի մեծ բաժանում տեղի չի ունեցել: Իսկ սառը պատերազմի ավարտից, Խորհրդային Միության և սոցիալիզմի համաշխարհային համակարգի վերացումից հետո, երբ աշխարհը դարձավ միակենտրոն, ապա աշխարհում ըստ էության տիրապետող դարձավ ազատական տնտեսության և շուկայական հարաբերությունների մոդելը, որի ջատագովները դարձան անգամ միակենտրոն սոցիալիստական երկրները, այդ թվում և ԱՊՀ-ի մեջ համախմբված բոլոր պետությունները՝ Խորհրդային Միության իրավահաջորդ Ռուսաստանը, Խորհրդային Հայաստանի իրավահաջորդ Հայաստանի Հանրապետությունը և մյուս հանրապետությունները: Փաստորեն ձևավորվեց ոչ միայն միակենտրոն, այլև գաղափարապես միասեռ աշխարհ:

**Չորրորդ, միջազգային քաղաքական կենտրոնները** որպես կանոն եղել են համընդհանրական /գլոբալ/, բայց ոչ երբեք տեղական /լոկալ/ և կամ շրջանային /ռեգիոնալ/: Այդ համգամանքը հարկ է մշտապես նկատի ունենալ, մանավանդ արդի փուլում, երբ աշխարհի տարբեր մասերում քաղաքա-

կան ասպարեզ են իջել և համապատասխան գործունեություն ծավալել տարաբնույթ շրջանային կազմակերպություններ, որոնց քաղաքական հավակնությունները միշտ չէ որ սահմանափակվում է այս կամ այն տարածաշրջանով: Դրանցից հիշատակության արժանի են Արաքսական պետությունների լիգան, որն ընդգրկում է Արաքսական Մաշրիկի /Արևելքի/ և Մաղրիբի /Արևմուտքի/ բոլոր 17 պետությունները, Ամերիկյան պետությունների կազմակերպությունն իր 21 անդամ-պետություններով, Աֆրիկայի միասնության կազմակերպությունը, որը միավորում է աֆրիկյան մայրացամաքի համարյա բոլոր պետությունները, Համագործակցության Շանհայի կազմակերպությունը՝ Չինաստանի և Ռուսաստանի գլխավորությամբ և Կենտրոնական Ասիայի մի շարք երկրների՝ Ղազախստանի, Ուզբեկստանի, Դղղըզստանի և Տաջիկստանի մասնակցությամբ: Առանձնահատուկ հիշատակման է արժանի Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը, որը վերջերս վերանվանվեց Իսլամական համագործակցության կազմակերպության, որի անդամներն են աշխարհի բոլոր իսլամական պետությունները՝ սուննի, թեշիա, և որը հիմնված է «իսլամական ազգ» հիմնադրույթի վրա:

Վերոնշյալ բոլոր շրջանային կազմակերպությունները, չնայած նրանց ոչ գլոբալ բնույթին, այնուհանդերձ կազմում են արդի աշխարհի քաղաքական իրողությունը և նրանց հաշվից դուրս նետելը կոպիտ սխալ կլինեք: Մանավանդ, եթե նկատի ունենանք, որ նրանք որոշ դերակատարում ունեն ինչպես միջազգային հարաբերությունների, այնպես էլ կենտրոնի ձևավորման գործում, քայց ոչ ավելին:

Ահա ընդհանուր ձևով այսպիսին են միջազգային հարաբերությունների քաղաքական կենտրոնների ձևավորման առանձնահատկությունները և յուրահատկությունները՝ համաշխարհային զարգացման տարբեր փուլերում:

#### **V. Աշխարհի տարբեր քաղաքական ուժերի և սոցիալական խավերի դիրքորոշումը երկկենտրոնից միակենտրոն աշխարհի անցնելու երևույթին:**

Աշխարհը տարբեր կերպ ընդունեց սառը պատերազմի ավարտը, Խորհրդային Միության և սոցիալիզմի համաշխարհային համակարգի

փլուզումն ու վերացումը և անցումը երկկենտրոն աշխարհից միակենտրոն աշխարհին՝ միակ գերտերության կարգավիճակը պահպանած ԱՄՆ-ի գլխավորությամբ: Ըստ այդմ աշխարհը բաժանվեց չորս խմբի:

**Առաջին խումբը** կազմեցին նրանք, ում մեքը կկոչեինք **հրճվողներ**: Սոցիալական պատկանելությամբ, էթնիկական առումով և կրթական-գիտական մակարդակով այդ խումբն իրենից ներկայացնում է վերին աստիճանի խայտաբղետ մի պատկեր: Այստեղ կան աշխարհի գործող և նախկին պրեզիդենտներ, պետական ու քաղաքական գործիչներ, սենատորներ և բազմաշերտ պառլամենտականներ, կուսակցական ղեկավարներ և շարքային անդամներ, բանկիրներ, խոշոր, միջին և մանր գործարարներ, առևտրականներ, կոմունիզմի հեռանկարով ահաբեկված և ատելությամբ լցված քաղքենիներ և տնային տնտեսուհիներ, հասարակ կամ շարքային մարդիկ, մտավորականներ և անգրագետներ, որոնք բոլորը պատմական այդ արմատական փոփոխությունը համարում էին փրկություն մարդկության համար:

**Երկրորդ խումբը** կազմեցին նրանք, ում մեքը կգերադասեինք կոչել **ողորբություն ապրողներ**: Դրանք առաջին հերթին սոցիալիստական երկրների բարձրագույն ղեկավարությունը, կառավարող սերուցքը, բազմաշերտ բյուրոկրատական ապարատի գործիչները, զինվորականները և այլ սոցիալական խավերն էին, որոնք կորցրեցին իրենց հասարակական կողմնորոշումները, դիրքը և կարգավիճակը: Դրանք արտասահմանյան կոմունիստական կուսակցությունների ղեկավար և շարքային անդամներն էին, կոմունիստական գաղափարների կրողներ ու համակիրներ, առաջադեմ հայացքների տեր մտավորականներ, ովքեր սոցիալիզմի հետ էին կապում մարդկության պայծառ ապագան: Նրանց համար կիրառելի է հայ արձակագիր, նույն կոմունիստական իշխանությունների մեղքով սիբիրյան քարոքներում իր կյանքի լավագույն մասն անցկացրած Մկրտիչ Արմենի «Հեղմար Աղբյուր» սքանչելի գրքի հերոսներից մեկի հուսահատ և աղիողորմ բացականչությունը՝ «Ըբը իմ կյանքս ընչի իզուր անցավ»:

**Երրորդ խումբը** կազմեցին նրանք, ովքեր, ինչպես արդեն վերևում մշել ենք, Խորհրդային Միության և սոցիալիստական այլ երկրների անհետացումից հետո հանկարծ իրենց զգացին լքված և անպաշտպան:

Նրանց մենք կկոչենք որքեր: Նրանք ոչ միայն երրորդ աշխարհի հոծ զանգվածներն էին, պետական, քաղաքական և ռազմական գործիչներ, քաղաքացիներ և այլն, այլև զարգացած եվրոպական և ամերիկյան երկրների քաղաքացիներ, արդարության առաջամարտիկներ, հակաֆաշիստական շարժման վետերաններ, ռասայականության դեմ մարտնչողներ, հայտնի մտավորականներ, բոլոր նրանք, ովքեր հավատում էին գաղափարների ներգործության ուժին և գաղափարական պայքարին, բայց այժմ իրենց զգում էին որբացած:

Զորքորդ խումբն ամենաբազմամարդն է: Դրանք աշխարհի տարբեր մայրցամաքների, երկրների, դավանանքների պատկանող և սոցիալական աստիճանակարգում տարբեր տեղեր գրավող մարդիկ էին, որոնք ամուսնաբեր են քաղաքականության մկատմամբ: Յուրաքանչյուր երկիր ունի նման դիրքորոշում գրավող քաղաքացիների բավականին սովորականով, որոնք բնավ էլ արհամարհելի չեն քաղաքական պայքարումների և փոփոխությունների ճակատագրի վերջնական լուծման հարցում:

## VI. Արևելքը համաշխարհային կենտրոնի միակ արժանի թեկնածու:

Բնականաբար հարց է ծագում, եթե Արևմուտքն իրեն որպես համաշխարհային կենտրոն արդեն սպառել է կամ ընդհուպ մոտենում է դրան, ապա ու՞ր է տեղափոխվելու կենտրոնը և մոլորակի ո՞ր հատվածն է իր վրա վերցնելու այդ առաքելությունը:

Պատմության վերջը: Համաշխարհային պատմական այդ փոփոխությունը մտահոգեց մաս արևմտյան մտավորականներին, որոնք հասկացան, որ կատարվել է մի ինչ-որ արտակարգ բան: Այդ խավերի տրամադրությունների արտահայտիչը եղավ ամերիկյան երևելի քաղաքագետ և ֆուտուրոլոգ Ֆրենսիս Գուլդհաման, որն իր մտորումները կատարվածի վերաբերյալ կոչեց «Պատմության վերջը»-«The End of History»<sup>3</sup>: XX դարի 90-ականներին բազմիցս հանդիպել և զրուցել ենք նրա հետ, երբ, շահելով Ֆուլբրայթի մրցանակը, 1993-1994թթ. մեկ տարուց ավելի աշխատում էինք Վաշինգտոնի Զորք Վաշինգտոն համալսարանում, իսկ 1995թ.՝ մոտ կես տարի ԱՄՆ-ի Մերիլենդի համալսարանում, երբ ԱՄՆ-ի

Պետական դեպարտամենտի նախածեռնությամբ Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի բախումնաբանները, այդ թվում և տողերիս հեղինակը, համատեղ աշխատում էինք «Էթնոքաղաքական բախումներն Անդրկովկասում. նրանց արմատները և լուծման ուղիները» նախագծի վրա: Այդ ընթացքում կազմակերպվում էին զանազան գիտաժողովներ, որոնց սովորաբար մասնակցում և ելույթներ էր ունենում նաև Ֆրենսիս Ֆուկույաման: Մեր զրույցներից մեկի ժամանակ, երբ ես նրան հարցրեցի, թե արդյո՞ք նա չի փոխել իր տեսակետը, ավելացնելով, որ «Պատմության վերջի» մասին նրա թեզը թեև ունի կողմնակիցներ, բայց շատ են նաև նրա հակառակորդները, Ֆուկույաման պատասխանեց, որ ինքը մնում է մույն տեսակետին: Նա մշեց, որ սառը պատերազմի ավարտից, Խորհրդային Միության և սոցիալիստական համաշխարհային համակարգի վերացումից հետո աշխարհում ընդհանրապես վերացավ գաղափարական դիմակայությունը: Գաղափարների պատերազմը մոտեցել է ավարտին և վրա է հասել մի դարաշրջան, երբ պատմությունը դարձել է միապաղաղ, տաղտկալի և ձանձրալի, առանց հետաքրքիր իմտրիզների<sup>4</sup>: Հետագայում մույն վերնագրով հրատարակված իր գրքի «Առաջարանի փոխարեն» հատվածում նա ավելի ընդարձակ բացատրություն է տալիս, ընդգծելով, որ «միմյանց հետ մրցակցող գաղափարախոսությունները՝ ժառանգական-միապետական, ֆաշիստական և կոմունիստական, պարտություն կրեցին: Ես պնդում եմ, որ լիբերալ ժողովրդավարությունը կարող է իրենից ներկայացնել «մարդկության գաղափարական էվոլյուցիայի վերջնակետը» և «մարդկային հասարակությունում կառավարման վերջնական ձևը» դրանով իսկ հանդիսանալով «Պատմության վերջը»<sup>5</sup>:

Պատմական իրողություն է այն փաստը, որ միջազգային հարաբերությունների կամ համաշխարհային քաղաքական կենտրոնն Արևմուտքից Արևելք տեղաշարժվելու միտումներն առաջինը նկատել են և իրենց այդ կարևոր հայտնագործության մասին բարձրաձայնել են ամերիկյան քաղաքագետները, միջազգայնագետները, պատմաբանները և սոցիոլոգները: Նկատի ունենք այդ մասնագետների սերույթը կազմող այնպիսի ականավոր հեղինակների, ինչպիսիք են Հենրի Կիսինջերը, Մեմյուել Հենրինգթոնը, Զբիգնև Բժեժինսկին, Ֆրենսիս Ֆուկույաման, Ֆերնանդ



Բրողելը, Ջոն Լյուիսը: Դրանց կողքին արժե հիշատակել չեխ Վացլավ  
Հավելին, ֆրանսիացի Ժակ Դեկորին և այլոց:

Նրանք ընդունում են, որ Կամադայի մախսկին արտաքին գործերի  
մախարար Լեստեր Պիրսոնը եղել է առաջինը, որը դեռևս սառը պատե-  
րազմի սկզբներին հայտարարել էր ոչ-արևմտյան հասարակությունների  
վերածննդի և կենսունակության վերաբերյալ, ընդգծելով, որ «Մխալ կլի-  
ներ ենթադրել, թե Արևելքում ծնունդ առնող այդ բոլոր նոր քաղաքական  
հասարակությունները կլինեն նրանց պատճենները, որոնց մենք վարժվել  
ենք Արևմուտքում: Վերածնվելով այդ հին քաղաքակրթությունները ձեռք  
կբերեն նոր ձև»<sup>6</sup>: Պիրսոնն արտահայտել է հետևյալ վերին աստիճանի  
ուշագրավ տեսակետը՝ «Միջազգային հարաբերությունները մի քանի  
հարյուրամյակների ընթացքում եղել են հարաբերությունները Եվրոպայի  
երկրների միջև»<sup>7</sup>: Այժմ դրա վերջը գալիս էր: Մեմյուել Հանքինգգոնը  
մարգարեական համարելով Լեստեր Պիրսոնի կանխատեսումն առ այն,  
որ Արևելքում ձևավորվում են նոր քաղաքական հասարակություններ, ո-  
րոնք նման չեն արևմտյան հասարակություններին, մատնանշում է, որ  
«Սառը պատերազմի ձգձգված երկբևեռայնությունը հետաձգեց այն ի-  
րադարձությունները, որոնք կանխատեսել էր Պիրսոնը: Սառը պատե-  
րազմի ավարտը ձեռքագատեց մշակութային և քաղաքակրթական ազ-  
դակները, որոնք կանխագուշակել էր մա 1950-ականների սկզբներին, և  
մի ամբողջ շարք գիտնականներ ու դիտորդներ ընդունեցին և առաջին  
պլան մղեցին համընդհանրական /գլոբալ/ քաղաքականության գործուն-  
ները»<sup>8</sup>: Ս. Հանքինգգոնը նրանց մեջ առաջինը հիշատակում է Յոհան  
Գալտունգին<sup>9</sup>: Նույն տեսակետն է արտահայտել նաև Ֆերման Բրողելը,  
որը մատնանշել է, որ անհրաժեշտ է նկատել նոր ռազմավարական փո-  
փոխությունները, որոնք տեղի են ունենում այսօր աշխարհում, «այլա-  
պես կարելի է կատարել աղաղակող սխալ»<sup>10</sup>:

Այստեղ ցանկանում ենք ամդրադառնալ մի երևույթի, որը կարևորում  
ենք քննարկվող հարցն իր ամբողջության մեջ արժեվորելու տեսանկյու-  
նից: Պետք է խոստովանել, որ արդեն հոգևորքի մեջ գտնվող Խորհրդա-  
յին Միության գիտական կենտրոնները և գիտական աշխատողները, իսկ  
նրա փլուզումից հետո նորանկախ պետությունների գիտնականները և  
մասնագետները բավարար չափով տեղյակ չէին այն գործընթացներին,

որոնք այդ ժամանակ տեղի էին ունենում աշխարհում՝ կապված միջազգային հարաբերությունների կենտրոնն Արևմուտքից աստիճանաբար Արևելք տեղափոխվելու հետ: Անձամբ մենք այդ մասին առաջին անգամ իմացանք 1999թ., երբ այդ տարվա սեպտեմբերի 17-18-ին Թբիլիսիում կայացավ Միջազգային համաժողով, նվիրված «խաղաղ Կովկասը և Եվրասիական միջանցքը: Արևելք-Արևմուտք ինտեգրացման ասպակտները» հարցի քննարկմանը ՀՀ արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանի առաջարկով մենք մասնակցեցինք այդ համաժողովին, որպես Հայաստանի ներկայացուցիչ: Նրան մասնակցում էին մի շարք ակադավոր գիտնականներ ԱՄՆ-ից, Մեծ Բրիտանիայից, Գերմանիայից, Ֆրանսիայից, Իտալիայից, Ռուսաստանից և այլ երկրներից: Մասնակիցների մեջ էր նաև պրոֆեսոր Զբիգնև Բժեժինսկին, որի զեկուցումն իսկական սենսացիա առաջացրեց: Նա նշեց, որ երեք կարևոր դարաշրջանների՝ կայսրությունների էրան, փակ հասարակությունների էրան և եվրոպական քաղաքական տիրապետության շրջանն արդեն ավարտվել է: Այժմ, ըստ ամերիկյան պրոֆեսորի, եվրոպական ցեմտրիզմի քաղաքականությունից անցում է կատարվում եվրասիական քաղաքականություն և դա նա համարեց «այսօր աշխարհում կենտրոնական քաղաքական խաղը» /«Central political game in the world today»/: Նրա կարծիքով Անգլիայի, Ֆրանսիայի և Գերմանիայի համաշխարհային տիրապետության դարաշրջանն անցել է և այսուհետև մարդկության ճակատագիրը որոշվելու է ոչ թե Լոնդոնում, Փարիզում և Բեռլինում, ինչպես եղել է նախկինում մի քանի դար անընդմեջ, այլ Եվրասիայում: Ընդդրում «Եվրասիա» բառակապակցության մեջ պրոֆեսոր Բժեժինսկին շեշտը դնում էր ոչ թե Եվրոպայի, այլ Ասիայի վրա, նրան համարելով քաղաքական ծանրության կենտրոնը: Պրոֆ. Զ. Բժեժինսկին, որը հայտնի է իր հակառուսական անսքող հայացքներով, իր ելույթի վերջում հարկ համարեց շեշտել, որ «Ռուսաստանը չի կարող վերականգնել իր աշխարհաքաղաքական տիրապետությունը: Հարավում առաջացել են անկախ պետություններ, Արևելքում կա ուժեղ պետություն, ինչպես Չինաստանը, Արևմուտքում՝ միացյալ Եվրոպան՝ միացած ԱՄՆ-ի հետ»<sup>11</sup>:

Բոլոր ներկաները կամ նրանց մեծամասնությունն առաջին անգամ էին լսում նման հարցադրումներ:

Մեր կողմից քննարկման առարկա հանդիսացող հարցերին է անդրադարձել մաս ԱՄՆ-ի մայիսին պետական քարտուղար Հենրի Կիսինջերը: Նրան մեծապես հետաքրքրել է այն հարցը, թե միջազգային համակարգը ո՞ր պետություններից է կազմված լինելու, ո՞ր պետությունները կշարունակեն միջազգային հարաբերություններում իրենց առաջատար դերակատարումը: Նա համոզված է, որ «Զսամմեկերոդ դարի միջազգային համակարգը բաղկացած կլինի առնվազն վեց հիմնական պետություններից՝ Միացյալ Նահանգներից, Եվրոպայից, Չինաստանից, Ճապոնիայից, Ռուսաստանից և հավանաբար Հնդկաստանից, ինչպես մալ բազմաթիվ միջին և փոքր պետություններից»<sup>12</sup>: Նշված վեց պետություններից, որոնց պատկանելու է միջազգային առաջատար դերակատարումը, միայն երկուսն են ոչ-ասիական՝ Միացյալ Նահանգները և Եվրոպան: Ուշադրություն է գրավում այն փաստը, որ Հ. Կիսինջերը «Եվրոպա» աշխարհագրական եզրն օգտագործում է հավաքական իմաստով, այսինքն մալ չի բացել փակագծերը և առանձին-առանձին չի հիշատակել, ասենք, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Գերմանիան, շատ լավ հասկանալով, որ այդ պետությունները, որպես ինքնուրույն միավորներ այլևս առաջատար դերակատարում չունեն քսամմեկերոդ դարի միջազգային համակարգում: Այդ առումով Հ. Կիսինջերի տեսակետը լրիվ համընկնում է Ջ. Բոեթինսկու տեսակետի հետ: Մաքուր ասիական կամ Հարավային և Արևելյան ասիական պետություններ են Չինաստանը, Ճապոնիան և Հնդկաստանը: Իսկ ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա միակ եվրասիական պետությունն է, որտեղ նժարի թաթը տարեցտարի ավելի է թեքվում դեպի նրա ասիական /ազիական/ մասը: Եթե ամփոփելու լինենք, ապա կարող ենք ասել, որ ըստ Հ. Կիսինջերի քսամմեկերոդ դարում միջազգային համակարգի ձևավորման մեջ առաջնությունն Ասիայի կողմն է և միջազգային հարաբերությունների կենտրոնը տեղափոխվում է Արևելք, մասնավորապես նրա Հարավ-Արևելյան ասիական գոտին:

Սակայն Հենրի Կիսինջերը քննադատության ենթարկվեց այն պատճառով, որ նրա կառույցում տեղ չէր հատկացված մուսուլմանական աշխարհին: Դժվար է քացատրել, թե մալ ինչու է այդպես վարվել, քանի որ «մուսուլմանական աշխարհ» կոչեցյալն ասեղ չէր, որ կորչեր համաշխարհային դեզի մեջ: Զոռոանաք, որ մոտ 65-ի հասնող իսլամական

պետությունները տեղաբաշխված են գլխավորապես Ասիայում և Աֆրիկայում, այդ աշխարհում են կենտրոնացված էներգակիրների գլխավոր պաշարները, մա ունի ռազմավարական և աշխարհաքաղաքական կարևոր նշանակություն: Եվ այդ վիթխարի ու հզոր զանգվածի համակրանքն ամբողջովին Արևելքի կողմն է՝ ընդդեմ Արևմուտքի:

Հ. Կիսինջերի վրիպումը նկատել են մաս ալ հետազոտողներ և կատարել համապատասխան լրացումներ: Դրանց մեջ քերևս առաջինը եղավ Ս. Հանքինգթոնը, որն իսլամական երկրներին համարում է «ազդեցիկ, որոնց ռազմավարական դիրքը, մեծ բնակչությունը և մավքի պաշարները մրանց դարձնում են համաշխարհային քաղաքականության բավականին ազդեցիկ ֆիգուրներ»<sup>13</sup>: Նույն տեսակետն է զարգացնում, լրացնելով Հ. Կիսինջերի բացը, մաս Յոհան Գալտունգը, գտնելով, որ միջազգային հարաբերություններում առաջատար դեր են խաղում հեզեմոնները՝ ԱՄՆ-ը, Եվրոպական համագործակցությունը, Ճապոնիան, Չինաստանը, Ռուսաստանը, Հնդկաստանը և «Իսլամական կորիզը»<sup>14</sup>:

Արևմուտքից Արևելք միջազգային հարաբերությունների կենտրոնի տեղաշարժման, քաղաքակրթությունների միջև փոխհարաբերությունների, մրանց մարտահրավերների և համագործակցության հարցերին առավել հանգամանորեն և փաստարկված է անդրադարձել Սեմյուել Հանքինգթոնը: Նա ժամանակին համայն աշխարհում մեծ աղմուկ հանած «Քաղաքակրթությունների բախումը» աշխատության հեղինակն է: Դիշտ է, ժամանակի ընթացքում այդ գրքի հիմնադրույթները նշանակալիորեն խամրեցին, այդուհանդերձ մրա վերոնշյալ գրքի շատ դրույթներ, որոշ փոփոխություններով համդերձ, օգտագործվեցին միջազգային հարաբերությունների կենտրոնն Արևելք տեղաշարժելու տեսադրույթը հիմնավորելու նպատակով: Այդ առումով հետաքրքիր է մրա կարծիքն առ այն, որ «Քաղաքակրթությունների միջև հաշվեկշիռը փոփոխվում է: Արևմուտքի հարաբերական ազդեցությունը նվազում է, աճում է ասիական քաղաքակրթությունների տնտեսական, ռազմական և քաղաքական հզորությունը... ոչ-արևմտյան քաղաքակրթությունները մորից հաստատում են իրենց մշակութային արժեքները»<sup>15</sup>: Ս. Հանքինգթոնը, Արևմուտքի դերի նվազումը և Արևելքի դերի աճումն ու հզորացումը համարելով բանալի հարցերից մեկը, իր աշխատության մեջ բազմիցս է անդրադառնում

դրան, չվախենալով կրկնողության մեջ մեղադրվելուց: «Արևմուտքը, - նշում է նա, - կա և դեռ երկար տարիներ կմնա ամենահզոր քաղաքակրթությունը: Այդուհանդերձ նրա հզորությունն ուրիշ քաղաքակրթությունների հանդեպ այժմ նվազում է»<sup>16</sup>: Կամ «Պետական հզորության ուժեղացումը վաղուց տիրապետող Արևմուտքից փոխանցվում է ոչ-արևմտյան քաղաքակրթություններին»<sup>17</sup>:

Ս. Համթինգթոնը կատարում է ևս մի շարք ուշագրավ դիտարկումներ: Նա գտնում է, որ Արևելյան քաղաքակրթության բարձրացումը և ուժեղացումը չի նշանակում նրա արևմտականացում՝ վեստերնիզացիա, և չի հանգեցնի համընդհանուր քաղաքակրթության առաջացման: Ոչ-արևմտյան քաղաքակրթությունները կրկին հաստատում են իրենց մշակույթների արժեքը<sup>18</sup>: Կամ խոսելով Արևմտյան քաղաքակրթության գոյությունը պահպանելու մասին, գիտնականը նշում է, որ «դա կախված է այն բանից, թե ամերիկացիները կրկին կհաստատեն՞ իրենց արևմտյան ինքնությունը և կընդունեն՞ արդյոք Արևմուտքի քնակիչներն իրենց քաղաքակրթությունը որպես ինքնատիպ, այլ ոչ թե ունիվերսալ քաղաքակրթություն»<sup>19</sup>: Ս. Համթինգթոնը չի կիսում այն տեսակետը, թե Արևմտյան քաղաքակրթությունն ունիվերսալ քաղաքակրթություն է: Նա քնական է համարում, որ ոչ-արևմտյան քաղաքակրթության կրողներն ավելի ու ավելի են հաստատում իրենց սեփական արժեքները և մերժում Արևմուտքի կողմից նրանց պարտադրվող արժեքները<sup>20</sup>: Եվ վերջապես Սենյուել Համթինգթոնը գտնում է, որ բախումներից հնարավոր է խուսափել, եթե աշխարհը դառնա բազմակենտրոն և բազմաքաղաքակրթական:

Եվ այսպես, Արևելյան քաղաքակրթությունը վերականգնվում և իր համաշխարհային դիրքերն ամրապնդում է ոչ թե որպես արևմտականացված, Արևմուտքից պարտադրված ֆեոդալիզմ, այլ որպես ինքնատիպ արժեքային համակարգ:

## VII. Իսկ ո՞րն է «Արևելքը» և ո՞րտեղ է գտնվում նա:

Համաշխարհային քաղաքական կենտրոնի տեղաշարժն Արևմուտքից Արևելք հայտնագործության հեղինակներն ամերիկյան մասնագետներն

են: Նրանք են մաւ ոչ ունիվերսալ քաղաքակրթության առաջացման տեսադրութի հեղինակները՝ շեշտը դնելով Կենտրոնի Արևմուտքից Արևելք տեղաշարժի վրա: Բայց տվյալ պարագայում առաջանում է «Արևելքի» աշխարհագրական տեղադրման հարցը, ո՞րտեղ է մա գտնվում և ո՞րոնք են մրա սահմանները: Առաջին հայացքից մման հարցադրումը կարելի է համարել պարզունակ: Մակայն իրականում դա այնքան էլ այդպես չէ: Եթե մի վայրկյան մտովի քարտեզի վրա պատկերացնենք, որ մոլորակի այն բոլոր մասերը, որոնք Եվրոպայի, Ամերիկայի և Ավստրալիայի մեջ չեն մտնում, կազմում են «Արևելք» աշխարհագրական տարածքը, ապա հասկանալի կդառնա, որ այն ամենը, ինչ մտնում է այդ տարածքի մեջ, իր խայտաբղետությամբ, բազմաշերտայնությամբ և զարգացման աներևակայելի տարբերություններով ու մակարդակներով ոչ մի դեպքում չի կարող դիտվել որպես XXI դարում ձևավորվող միջազգային հարաբերությունների կամ աշխարհի կենտրոն: Հետևաբար խնդիրը «Արևելք» աշխարհաքաղաքական տարածքի կոնկրետացման, մասնավորեցման և մրա սահմանների ճշգրտման մեջ է: Դա է միակ ուղին: Եվ այդ հարցի վերաբերյալ առկա գրականության և արտահայտված տեսակետների ուսումնասիրությունը բերում է այն եզրակացության, որ Արևելք կոչվածը համասեռ չէ, մա ունի իր գոտիները, որոնք միմյանցից տարբերվում են ըստ իրենց կարևորության, զարգացման աստիճանի, բնակչության թվաքանակի, բնական պաշարներով և այլն, և այլն: Ուստի ճիշտ կլինի, եթե տվյալ դեպքում, ընդգծում ենք՝ տվյալ դեպքում, Արևելքը բաժանենք երկու գոտիների, որից հետո կարելի է ասել, թե միջազգային հարաբերությունների կենտրոնն Արևմուտքից «քոչելով» Ասիայի ո՞ր մասում է հանգրվանելու:

Առաջին և ամենակարևոր գոտին Հարավ-Արևելյան Ասիական է: Կենտրոնի տեսանկյունից մա մրցակցությունից դուրս է: Այստեղ են գտնվում երեք հսկաները՝ Չինաստանը, Հնդկաստանը, Ռուսաստանը, ինչպես մաւ Ճապոնիան, որոնց վերաբերյալ ամերիկյան և եվրոպական մասնագետները տարակարծություն չունեն: Նրանց մենք արդեն անդրադարձել ենք: Հարկ ենք համարում բոուցիկ անդրադառնալ մաւ եվրոպական մասնագետների դիրքորոշմանը: Վերջին շրջանում հաճախ են լինում Եվրոպական Միության կառույցների համատեղ քննարկումներ

Արևելասիական առաջատար երկրների հետ, մասնավորապես Փարիզում տեղակայված Եվրամիության Անվտանգության ուսումնասիրությունների ինստիտուտի շրջանակներում, որոնք այնուհետև հրապարակվում են ինստիտուտի աշխատություններում և պարբերական հրատարակություններում: Նման մի խորհրդակցություն տեղի է ունեցել 2007թ. սեպտեմբերին: Նրա վերաբերյալ հրատարակված հաղորդագրության մեջ նշված է, որ «Բազմակենտրոն աշխարհում, որը սկսել է ձևավորվել 21-րդ դարում, ԵՄ-ի դերը և ազդեցությունը մեծապես կախված կլինի բարձրացող պետությունների հետ նրա հարաբերություններից»<sup>21</sup>: Խորհրդակցությունում որպես բարձրացող պետություններ նշված են երեք հսկաները՝ Ռուսաստանը, Չինաստանը և Հնդկաստանը<sup>22</sup>: Նույն ամսին այդ ինստիտուտում տեղի են ունեցել Չին-եվրոսիական քննարկումներ, որի ընթացքում Չինաստանի ժամանակակից միջազգային հարաբերությունների ինստիտուտի պրոֆեսոր Ֆեն Ժոնսլինը հայտարարել է՝ «Չինաստանը փոխում է իր ինքնությունը՝ հանդիսատես լինելուց՝ դերակատար լինելու» / «China is changing its identity from being a spectator to being an actor»/<sup>23</sup>:

Խոսելով այդ գոտու մասին, ի հավելումն անհրաժեշտ է ավելացնել նաև Հարավային Կորեան, Սինգապուրը, Տաիլանդը, Մալայզիան և այլ հարակից երկրներ, առանց որոնց գոտու մասին մեր պատկերացումները թերի կլինեին, իսկ մեր եզրակացությունները՝ ոչ հիմնավոր:

Ուրեմն նորաստեղծ կենտրոնի միջուկը կազմում են Չինաստանը՝ Տայվանով և Հոնկոնգով հանդերձ, Հնդկաստանը, Ճապոնիան, Հարավային Կորեան, Տաիլանդը, Սինգապուրը և Մալայզիան: Կարծում ենք սխալ կլիներ հեռանկարում ամանցանելի անջրպետ դնել այդ երկրների և նրանց հարող Պակիստանի, հավանաբար նաև Բանգլադեշի և Վիետնամի միջև: Այստեղ են կենտրոնացված մեր մոլորակի մարդկության հիմնական մասը, բնական ռեսուրսների վիթխարի պաշարները, արդյունաբերության, առևտրի, ֆինանսների ամսպառելի ներուժը, համաշխարհային շուկաները: Այս տարածաշրջանն արդեն դառնում է բարձր տեխնոլոգիաների զարգացման համաշխարհային կենտրոններից մեկը: Համայն մարդկության առողջական վիճակը, պատկերավոր ասված, մեծապես կախված է Հարավ-Արևելյան Ասիական աշխարհաքաղաքական

գոտուց: Եթե ասվածին ավելացնենք, որ հենց այս գոտում են գտնվում աշխարհի յոթ միջուկային տերություններից երեքը՝ Չինաստանը, Հնդկաստանը և Պակիստանը, ապա պատկերն ավելի ամբողջական կդառնա, իսկ այդ տարածաշրջանի համաշխարհային կենտրոն դառնալու հնարավորություններն ու հավակնություններն առավել ամառարկելի:

Հարկ է նկատի ունենալ ևս մեկ կարևոր հանգամանք: Այս գոտու հետ ամմիջականորեն սահմանակից է այն տարածքը, որն ամերիկյան մասնագետներն անվանում են «Եվրագիս»: Հենց Զբիգնև Բժեժինսկին, Սեմյուն Լենքիմզեթոնը, Հենրի Կիսինջերը և ամերիկյան մյուս քաղաքագետներն էին, որ առաջին անգամ այն տեսակետն արտահայտեցին, որ մարդկության ճակատագիրը հետայսու որոշվելու է ոչ թե Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում և Գերմանիայում կամ Արևմուտքում, այլ «Եվրագիսայում», և այդ կապակցությամբ արտահայտեցին այն տեսակետը, որ համաշխարհային կենտրոնն Արևմուտքից տեղափոխվելու է Արևելք, նրա մեջ մտցնելով մաս «Եվրագիսան»: Գերմանիայի Արտաքին Հարաբերությունների Խորհրդի Բերթոլդ Բեյց Կենտրոնի Շրագրի տնօրեն Ալեքսանդր Ռահրը ռուսական լրագրող Յուլիա Նետեսովայի հետ հարցազրույցի ժամանակ հայտարարեց. «Ես հավատացած եմ, որ Եվրասիա եզրը հաջորդ տարիներում կդառնա քաղաքականապես ավելի կարևոր, քանի որ Եվրասիան զարգանում և ի հայտ է գալիս»<sup>24</sup>: Պատասխանելով ռուս լրագրողի այն հարցին, թե «Ի՞նչ տեղ կունենա Ռուսաստանը Եվրասիայի անվտանգության համակարգում», Ա. Ռահրը նշում է. «Ռուսաստանն ապագա Եվրասիայի անվտանգության համակարգի գլխավոր հիմնասյուներից մեկն է», ավելացնելով, որ «Եվրասիան չի կառուցվելու միայն Ռուսաստանի կողմից: Դա կկառուցեն Ռուսաստանը և Ղազախստանը, որովհետև Ղազախստանը չի ցանկանում լինել Մերձավոր Արևելքի կամ Կենտրոնական Ասիայի մասը: Նա ունի Եվրասիական և Եվրոպական հավակնություններ»<sup>25</sup>: Եվ եթե մենք Եվրասիան իրոք մտցնենք Արևելքի մեջ այն հասկացությամբ, որ նկատի ունեն ամերիկյան վերոնշյալ գիտնականները, ապա ավելի ակնհայտ կդառնա Հարավ-Արևելյան Ասիական աշխարհատարածքի կարևորությունն ու նշանակությունը և նրա քաղաքական, տնտեսական ու ռազմական ներուժը:



Երկրորդ գոտին, որը մենք կանվանեինք **օժանդակ գոտի**, կազմում են հիմնականում ասիական և աֆրիկյան մուսուլմանական երկրները, որոնց թիվն արդեն անցնում է վաթսունից: Նկատի ունենք Ինդոնեզիան, որն իր բնակչության թվաքանակով ամենախոշոր իսլամական երկիրն է, Մաուրիտան Արաբիան՝ իսլամական աշխարհի հոգևոր կենտրոնը, Սիրիան, Իրաքը, որտեղ գտնվում են շիիզմի հոգևոր-կրոնական կենտրոնները, Հորդանանը, Մեմերը, Զուվեյրը, Կատարը, Բահրեյնը, Օմանը, Արաբական Միացյալ Էմիրությունները, Եգիպտոսը, Սուդանը, Լիբիան, Թունիսը, Մարոկկոն, Ալժիրը, ինչպես նաև սևամորթներով բնակեցված Գաբոնը, Գամբիան, Գաման, Գվինեան, Կամերունը, Քենիան, Մալին, Նիգերը, Նիգերիան, Սենեգալը, Ուգանդան, Չադը և այլ երկրներ:

Օժանդակ գոտու դերակատարումը գլխավորապես քաղաքական, բարոյական և հոգեբանական աջակցությունն է հիմնական գոտուն: Օժանդակ գոտու երկրներն իրենց քաղաքական կողմնորոշումներով ավելի շատ հակված են դեպի Հարավ-Արևելյան Ասիական գոտուն, այսինքն՝ դեպի Արևելքը, քան թե դեպի Արևմուտքը: Հարավ-Արևելյան Ասիական գոտին, մուսուլմանական գոտու աջակցությամբ, XXI դարում կարող է դառնալ միջազգային հարաբերությունների կենտրոն և իր որոշակի դերակատարումն ունենալ միակենտրոն աշխարհից բազմակենտրոն աշխարհին անցնելու պատմական գործընթացում:

Ներկայացնելով այս նյութը, մենք ոչ վերջին հերթին նկատի ունենք Հայաստանի Երրորդ Հանրապետության ղեկավարությանը հորդորելու առավել ուշադրություն դարձնել մեր պետության արտաքին քաղաքականության արևելյան ուղղությանը, ելնելով նաև այն պատմական իրողությունից, որ Արևելքը եղել և մնում է Հայաստան աշխարհի կենսատարածքը:

Մենք իրավունք չունենք անակնկալի գալու:

## RESUME

NIKOLAY HOVHANNISYAN

### *RADICAL CHANGES IN CONTEMPORARY INTERNATIONAL RELATIONS: TRANSFER OF WORLD CENTER FROM WEST TO EAST*

Throughout the centuries it was formed a conception of center of international relations or world center, which during different historical periods was occupied by several countries-empires, kingdoms and republics or by blocks of states. The centers were not elected by referendum of international community or appointed by international organizations. Any state, as witnessed the history, could become a center according to its potentials, the level of its political influence, economical development and military power. Center was not given to a country forever. It was a changeable phenomenon. Sometimes simultaneously there were two, even three centers of international relations. In the I century B.C. in a short period in the world was established triple center, consisted of Roman Empire, Armenian Empire of Tigran the Great and Persian Empire. In VII-X centuries the world center was transferred to the Arab Caliphate, etc. The most lasting period, about 5-6 hundred years, the world center was located in Europe or West. After the Second World War, during the Cold War period it was established bipartite center, represented by two nuclear superpowers - the USA and the USSR. As it is known, the Cold War was ended by the defeat of the USSR and socialist system: The Soviet Union was collapsed and world socialist system was dissolved. From that time on the world became monocenter. The USA remained the only superpower and headed the international relations according first of all to its political, economic and military interests.

That new political realities, when the USA became the world monocenter, were not acceptable for the overwhelming majority of the world. Many countries were expressing their dissatisfaction, considering that the interests of all peoples and countries of the world require the transfer of the world from the monocenter status into the polycenter reality. And now we are living in that transmission period.

And we have to underline that the American specialists were the first, who noted that new processes and wrote about it. We mean first of all Lester Pearson, Zbigniew Brzezinski, Henri Kissinger, Samuel Huntington, Francis Fukuyama, Johan Galtung and many others. They confirmed that now we are on the eve of transfer of the world center from the West to the East. And to be more correct, on saying to the East, they

mean Eurasia and South-Eastern Asia. According to their opinion the role of West, including the USA, is decreasing and the role of East, on the contrary, is increasing in world affairs. They confirm that the future of humanity will not be resolved anymore in the Great Britain, France and Germany, or in generally in West, but in East, in South-Eastern geopolitical region, where there are such giants, as China, India, Russia, Japan, together with South Korea, Singapore, Thailand, Malaizia, and other neighbor countries. Their weight as a political, economic, trade, financial and military factor is becoming more and more heavy. With this phenomenon, the world will transfer from monocenter into polycenter reality, which means the end of monodomination of the USA in the world. The Chinese specialists had expressed an idea that "China is changing its identity from being a spectator to being an actor".

### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<sup>1</sup> Nikolai Hovhannisyan, Tigran the Great and the Armenian Empire in Modern Arabic Historiography,

Tigranes the Great, Yerevan, 2010, p. 244-261.

<sup>2</sup> Збигнев Бжезински, Подходит конец доминирования Запада в мире. Интервью польскому изданию «Политика», «Голос Армении», Ереван, 20 июля 2010г., տե՛ս նաև նրա «США утратили былое влияние», «Голос Армении», Ереван, 30 июня 2011г.

<sup>3</sup> Francis Fukuyama, The End of History. The National Interest No16 / Summer, 1989/, p. 3-18.

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Фрэнсис Фукуяма, Конец истории и последний человек, Москва, 2007.

<sup>6</sup> Lester B. Pearson, Democracy in World Politics, Princeton, 1955, p. 82-83.

<sup>7</sup> Նույն տեղում:

<sup>8</sup> Самюэль Хантингтон, Столкновение цивилизаций, Москва, 2007, с. 42-43.

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 529-530:

<sup>10</sup> Fernand Braudel, On History, Chicago, 1980, p. 210-211.

<sup>11</sup> Ձրիգնն Բժեժինսկու ելույթը ներկայացնում ենք ըստ համաժողովում մեր կատարած զրառման, որը պահպանվում է մեր արխիվում:

<sup>12</sup> Henry Kissinger, Diplomacy, New York, 1994, p. 23-24.

<sup>13</sup> Самюэль Хантингтон, Столкновение цивилизаций, Москва, 2007, с. 22.

<sup>14</sup> Johan Galtung, The Emerging Conflict Formations, NJ, 1992, p. 23-24.

<sup>15</sup> Самюэль Хантингтон, Столкновение цивилизаций, с. 13.

- <sup>16</sup> Նույն տեղում, էջ 24:  
<sup>17</sup> Նույն տեղում, էջ 25:  
<sup>18</sup> Նույն տեղում, էջ 13:  
<sup>19</sup> Նույն տեղում, էջ 14:  
<sup>20</sup> Նույն տեղում, էջ 21-22:  
<sup>21</sup> Issues. Newsletter of the EU Institute for Security Studies, Paris, 24, November 2007, p. 5.  
<sup>22</sup> Նույն տեղում:  
<sup>23</sup> Նույն տեղում, էջ 4:  
<sup>24</sup> Alexander Rahr: Eurasia is Emerging-Russia Beyond the Headlines, August 3, 2011, p. 1.  
<sup>25</sup> Նույն տեղում:

ՀՈԴՎԱԾՆԵՐ

ARTSVI BAKHCHINYAN

*MINAKATA KUMAGUSU  
AND HIS INTEREST IN ARMENIAN LANGUAGE*

Distinguished Japanese polymath Minakata Kumagusu (1867–1941) is known as an anthropologist, naturalist, and botanist. He also showed his interest in dream, unconsciousness, the cosmos, science, myth, religion, spirit, nature, Japanese language, other languages, and human beings – he just tried to understand the Universe. He was active for a period of about 40 years from 1900. Minakata Kumagusu explored Florida and Cuba which were so abundant with wild plants. He later visited London, and gained much of his knowledge at the British Museum. Minakata Kumagusu was in fact staying in London for eight years, spending much time in British Library (part of the British Museum at that day) to make researches into various areas including anthropology, comparative mythology and folklore, or study of world religions, by way of reading several Indo-European languages. As a natural course of matter, his learning of languages seemed to have reached for Armenian language among 21 other languages. Regrettably, however, Kumagusu left very few mentions of his study on Armenian sources, and the members of research crew in Minakata Kumagusu archives have not yet found tangible records in connection with Armenian sources or Armenian in general, except for several English books on comparative study of European folk tales or legends in his own library (which is left up to now in Tanabe, Wakayama, Japan), and descriptions on Armenian things may most probably be found in those books (for example: Southgate, Horatio: *Narrative of a Tour Through Armenia, Kurdistan, Persia and Mesopotamia*. With an introduction and occasional observations upon the condition of

Mohammedanism and Christian in those countries", 2 vols. D. Appleton & Co., New York, 1840).

Below we publish two translations testifying Kumagusu's studying Armenian. They both are presented from Kumagusu's archive<sup>1</sup>.

The first one is an excerpt from Kumagusu's letter to Miyatake Shozo, another Japanese folklorist containing his own recording on his study of Armenian. It was written on March 23, 1924 and published in *Minakata Kumagusu shokan sho: Miyatake Shozo ate* (Minakata Kumagusu's Letters to Miyatake Shozo (digest), ed. Kiyoshi Kasai, Tokyo, Yoshikawa-Koubunkan, 1988, p. 51).

The second one is from the article "Kumagusu's Study of Foreign Languages" by Japanese researcher Tsukikawa Kazuo, published in *Minakata Kumagusu: A Keyword Dictionary* (Kodansha, Tokyo, 1993, pp. 64-70).

Both translations are done by Akiko Hiki from Tokyo.

This vague, yet valuable information reveals one aspect of an eminent scholar – in fact, the first Japanese, who had showed some interests toward the Armenian language.

-1-

For many years I have been working on my work, *Enseki-kou – The Origin of the Swallow-Stone Myth*<sup>2</sup>. Because I write this book in thirteen languages, it is difficult to be printed and it still has not been published yet. (It is also difficult to translate this work by now because I forgot, let us say, the Armenian language. In addition, I do not have any dictionary for reading Armenian. The modern Armenian language considerably differs from the classical).

-2-

Kumagusu's extraordinary linguistic talent became one of his legends. Although one's linguistic ability cannot simply evaluate by the number of

languages which one can understand, that is quite an argument in Kumagusu's case.

with President Abdul Kalam and expressed his appreciation to him for careful kind attitude that religious and national minorities have always enjoyed in India, and specifically thanked the Indian authorities for the freedoms and opportunities given to the Armenians to organize their national and spiritual lives. At the meeting with the State of West Bengal Chief Minister Buddhadeb Bhattacharya in Kolkata, the latter spoke of the high esteem and admiration with which the Armenians of India are regarded and expressed hope that the then large community, which has diminished in recent years, would once again grow and flourish. On 26 February 2008, His Holiness Karekin II addressed the students of the Armenian College and Philanthropic Academy in Kolkata (Calcutta), noting that more than 80 young boys and girls from Armenia, Iran, Iraq and India study and live as one family within the halls of this historic institution, established more than 185 years ago. The Catholicos also extended his appreciation to the Armenian Church Committee and Armenian community of Kolkata for their sustained support to this famous national institution, and stressed its importance not only for the Armenians of India, but for the entire Armenian nation dispersed throughout the world. The Catholicos also visited the other historical centers of the Armenian heritage – Chinsurah, Saidabad, Agra, Mumbai, and Chennai. During the November 2008 visit to India the Catholicos took part in tercentenary celebrations of the Holy Church of Nazareth in Kolkata.

On November 10<sup>th</sup>, 2010, the official visit to India of the Armenian Foreign Minister Edward Nalbandian commenced. Minister Nalbandian met with Mohammad Hamid Ansari, the Vice President of India, Chairman of Rajya Sabha (the Upper House of Indian Parliament). Minister Nalbandian mentioned that the leadership of Armenia attaches great importance to the further reinforcement and expansion of relations with friendly India, one of the most important countries in the world. At the meeting with Suresh Goel, the Director General of the Indian Council for Cultural Relations issues related to the opening of the Indian Cultural Center in Armenia, the cooperation between the MFA Diplomatic School of Armenia and the Indian Council for Cultural Relations, intensification of educational exchanges, the opening of Indian chair at one of the universities in Armenia and holding of

Indian cultural year in Armenia were discussed. The Foreign Minister Nalbandian discussed venues of cooperation between the MFA Diplomatic School and the Indian Council of World Affairs with Sudhuir Devare, the Director of the Council.

At the meeting with the Minister of External Affairs Somanahalli Mallaiiah Krishna, Edward Nalbandian stated: "There is no problem between Armenia and India that divides the two countries. On the contrary, there are a number of factors that unite our countries. Our states have mutual understanding regarding the regional and international issues, as well as similar or very close approaches on many international and regional issues". The two foreign ministers agreed to organize the visit of the President of Armenia Serzh Sargsyan to India for conveying a new impetus to the Armenian-Indian friendly partnership. The interlocutors highly appreciated the investment of the Armenian-Indian community in creating, preserving and enriching of multicultural heritage of India. The Foreign Minister reaffirmed Armenia's stance on the Kashmir issue and thanked his Indian counterpart for India's balanced position on the existing problems in the South Caucasus. In his turn, Foreign Minister Krishna stated that India deeply appreciated the continuous support of Armenia on the Kashmir issue. In presence of the two Foreign Ministers, the Armenian Ambassador to India Ara Hakobian and the Secretary of State of the Ministry of Culture Jawhar Sircar signed Memorandum on Cultural Cooperation in 2011-2012.

As a landmark development in the educational cooperation, the Indian Council for Cultural Relations and the Yerevan State University signed a Memorandum of Understanding on July 25<sup>th</sup>, 2011 for establishment of Chair of Contemporary Indian Studies in the Faculty of Oriental Studies at YSU. Ambassador of India Achal K. Malhotra signed the document along with Aram Simonyan, Rector of Yerevan State University. The first Indian Chair in Armenia was the Hindi Chair established at the Yerevan State Linguistic University in 2010 due to dynamic efforts of Ambassador Reena Pandey.

ԱՄՓՈՓՈՒՄ

ԱՐՄԵՆ ԲԱՅԲՈՒԴՅԱՆ

ՀԱՅ-ՀՆԴԿԱԿԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԶԱՂԱԶԱԿԱՆ  
ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ.  
ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ

[illegible]

- <sup>1</sup> V.P. Dutt, *India's Foreign Policy in a Changing World*, New Delhi, 1999, p.75.
- <sup>2</sup> Armen Baibourtian, Mnatsakan Safaryan, Vahe Gevorgyan, *A Foreign Policy for a Small State: Armenia's Case*, Global Affairs, Valencia, Issue 4/August-September 2007.
- <sup>3</sup> Stephen P. Cohen, *India: Emerging Power*, New Delhi, 2002, pp. 34-35.
- <sup>4</sup> A.B. Shah, *Jawaharlal Nehru: A Critical Tribute*, Bombay, 1965, p. 98.
- <sup>5</sup> Sisir Gupta, *Kashmir: A Study in India-Pakistan Relations*, New Delhi, 1998, p. 441.
- <sup>6</sup> J.N. Dixit, *India's Foreign Policy: 1947-2003*, New Delhi, 2003, pp. 420, 432.
- <sup>7</sup> *Hindustan Times*, 1 November, 2001.
- <sup>8</sup> *The Asian Age*, 18 March, 2008.
- <sup>9</sup> Joint Declaration on the State Visit of H.E. Mr. Robert Kocharian, President of the Republic of Armenia to the Republic of India, New Delhi, October 29-November 1, 2003.
- <sup>10</sup> *Armenia - India: 15 Years of Diplomatic Relations*, New Delhi, September 2007.



## ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

### ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ ՀԱՅԵՐԻ ՇՓՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԻՅ

### ՀԱՐԱՎԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԱՎ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՄԻԱՅԻ ՈՒ ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ

Ուշ միջնադարում Հայաստանի գույգ հատվածներում շարունակվում էր հայկական ավատականության վերջին շառավիղների նկատմամբ հալածանքների ու ֆիզիկական քնաջնջման վաղեմի քաղաքականությունը: Նրանց հողերն անցել էին քյուրբական քոչվորական ու կիսաքոչվորական ցեղերի վերնախավի, իսկ քիչ ավելի ուշ Օսմանյան կայսրության ձեռքը: Հայ աշխարհիկ ավատատերերը, որպես քաղաքական ուժ, դուրս էին մղված պատմական ասպարեզից: Նման պայմաններում շարժում կապիտալը դառնում էր հայ ավատական դասի կենսագործունեության ամենատարածուն բնագավառը: Հիրավի, արևելքի բռնատիրության պայմաններում առևտուրը միակ բնագավառն էր, որ քաց էր մնում հայի առջև: Ջրկվելով իրենց հողերից ու ունեցվածքից, հայ ավատատերերից շատերը ստիպված էին գաղթել երկրից: Մի մասն էլ ծուլվեց եկվոր նվաճողների մեջ կամ ոչնչացավ իսպառ:

XV դարում Փոքր Ասիայում, Բալկաններում և Հյուսիսային Աֆրիկայում Օսմանյան նվաճումները և հատկապես 1453թ. Կ. Պոլսի գրավումն ու քյուզանդական կայսրության անկումն ունեցավ այն հետևանքը, որ արևմտյան աշխարհը գրկվեց Արևելքի հետ շփումներ ունենալու հնարավորությունից:

Սակայն Արևելքի և Արևմտքի միջև այդ հակաբնական խզումը չէր կասակայն Արևելքի և Արևմտքի կրել: Վերընթաց զարգացման ուղի բռնած թող տևական բնույթ կրել: Վերընթաց զարգացման ուղի բռնած արևմտքի երկրները կենսականորեն զգում էին Արևելքի հետ առևտրատնտեսական կապեր ունենալու պահանջը: Նման պարագանե-րում Արևելքի և Արևմտքի միջև միջնորդ վաճառականների հաճոյքն ունեցավ իր վրա վերցրեց հայ առևտրական խոջայական նշանակալից չափով իր վրա վերցրեց հայ առևտրական խոջայական

դասը, որը հախտուն թափով մտնում էր համաշխարհային շուկա: Այդ առթիվ գերմանացի փիլիսոփա Էմանուիլ Կանտը գրում է. «Մեկ այլ քրիստոնյա ժողովրդի՝ հայերի մոտ, տիրապետում է ինչ-որ առանձնահատուկ բնույթի առևտրական ոգի՝ նրանք զբաղվում են փոխանակությամբ, հետևիտուն ճանապարհորդելով Չինաստանի սահմաններից մինչև Գվինեական ափի Կոբաու հրվանդանը: Դա վկայում է այդ խելամիտ ու աշխատասեր ժողովրդի առանձնահատուկ ծագման մասին, որը հյուսիսարևելքից հարավ-արևմուտքի ուղղությամբ կտրում անցնում է համարյա ողջ հին աշխարհը և կարողանում է սիրալիք ընդունելություն գտնել այն բոլոր ժողովուրդների կողմից, որոնց մոտ լինում է այցելությամբ»:

XVII դարում Հայաստանի գույգ հատվածներում համարյա անընդմեջ ընթացող թուրք-իրանական պատերազմները, քոչվորական ցեղերի էթնիկական մկանդակամությունը և նրանց զանգվածային մուտքն ու հաստատումը հայկական տարածքներում, հատկապես դարի սկզբին Իրանի շահ Աբբաս I կողմից իրականացված հայերի բռնագաղթը դեպի Իրան ունեցան այն հետևանքը, որ Հայաստանի կենսունակությամբ հասցվեց մեծագույն հարված: Նման պայմաններում հայ առևտրական բուրժուազիան, ինչպես նաև գործունեության հսկայական եռանդ կուտակած հայ մտավորականությունը, այսուհետև իրենց գործունեության ասպարեզ կարող էին դարձնել գաղթաշխարհը, որտեղ առկա էին գործելու և արարելու հարաբերականորեն բարենպաստ պայմաններ: Հիրավի, բուն Հայաստանում տիրապետող համատարած ավերի, տնտեսական քայքայման, մտավոր աղքատացման պայմաններում աշխարհի տարբեր ծայրերում սփռված հայ գաղթօջախները դարձան տնտեսական ծաղկման, մշակութային վերելքի և մտավոր վերածնության կղզյակներ:

Հնուց անտի Հնդկաստանը հանդիսացել է այն երկիրը, որի նկատմամբ հայերը դրսևորել են մեծ հետաքրքրություն: Հայ-հնդկական առևտրությունների մասին տեղեկություններ կան դեռևս Քսենոփոնի (մ. թ. ա. V-IV դդ.) Ջենոք Գլաքի (մ. թ. IV դ.), Մովսես Խորենացու (V դ.), Պրոկոպիոս Կեսարացու (VI դ.) և այլոց երկերում: Աղբյուրները վկայում են, որ դեռևս XII դարում հայերը Հնդկաստանում ձեռք էին բերում թանկարժեք քարեր, դեղաբույսեր և այլն և հիանալի ծանոթ էին այդ երկիրը տանող ճանապարհներին:

XVI դարում Արաքս գետի հովտի հայ բնակչությունը, ի թիվս բազմաթիվ երկրների, կարևոր դեր է խաղացել մաս առաջ կոչված «Ներքին Ասիայի» առևտրի մեջ: Դեռևս մինչև Հնդկաստանում եվրոպացիների՝ պորտուգալացիների, անգլիացիների, ֆրանսիացիների, հոլանդացիների և այլոց հաստատվելը, հայ վաճառականները լայն շփումներ են ունեցել ասիական այդ մեծ ու հարուստ երկրի հետ: Հնդկաստանում առաջին հայ համայնքները կազմավորվել են XVI դարում: Հնդկահայ համայնքները ստվարացել են XVII դարում, երբ Իրանից (հատկապես Նոր Ջուղայից) բազմաթիվ պարսկահայեր բնակություն են հաստատել այդ երկրի տարբեր մասերում: Հայերը հիմնականում բնակվում էին Հնդկաստանի շուրջ 20 քաղաքներում և առևտրակայաններում (Ագրա, Կալկաթա, Զինսուրահ, Մեյիդաբադ, Սուրաթ, Բոմբեյ, Մադրաս, Մալաբար, Հայդաբադ, Գվալիոր, Դաքա, Լահոր, Դելի և այլն):

Մինչև Հնդկաստան տանող ծովային ճանապարհի հայտնագործումը հայ վաճառականներն այդ երկրի առևտրաշատ կենտրոններն էին թափանցում ցամաքային կարավանային ճանապարհներով: Նրանք մեկնում էին Քարու, որտեղից այնուհետև Հնդկաստան էին ուղևորվում Դանդախար-Լահոր-Դելի առևտրական ճանապարհով<sup>2</sup>:

Հնդկաստանում Մեծ Մողոլների դինաստիայի թագավոր Ջալալուդդին Աբբասը (1556-1605), ցանկանալով զարկ տալ իր պետության մեջ ներքին ու արտաքին առևտրին, հայ վաճառականներին հատկացրեց մի շարք իրավունքներ ու արտոնություններ, ընդհուպ մինչև թույլտվություն՝ մտնելու Հնդկաստանի այնպիսի շրջաններ, ուր արգելված էր օտարերկրացիների մուտքը<sup>3</sup>: Հեմց օգտվելով այդ առանձնաշնորհումներից, հայ վաճառականները Հնդկաստանի բազմաթիվ քաղաքներում կազմեցին առևտրական գաղութներ<sup>4</sup>:

Հնդկաստան տանող ծովային ճանապարհի հայտնագործումից հետո առևտուրը ցամաքային ճանապարհներից հիմնականում տեղափոխվեց դեպի Պարսից ծոց, Կարմիր ծով և Հնդկական օվկիանոս, որի հետևանքով Մերձավոր Արևելքի վրայով կատարվող ցամաքային կարավանային տարանցիկ առևտուրը կորցրեց իր նախկին նշանակությունը: Ըստ այնմ, Արևելքի և Արևմուտքի միջև միջազգային առևտրով զբաղվող հայ վաճառականները ևս ամմիջապես սկսեցին աշխույժ հետաքրքրու-

յուն դրսևորել այդ նոր ու հեռանկարային առևտրական ուղու նկատմամբ:

Բրիտանական ռազմական մավատորմի և Սեֆյան Իրանի համատեղ ջանքերով XVII դ. սկզբներին պորտուգալացիների դուրս մղումը Պարսից ծոցի ավազանից նոր զարկ հաղորդեց Հնդկաստանի հետ հայ վաճառականների ծովային առևտրին<sup>5</sup>, որը մինչ այդ իրականացվում էր դիպվածաբար: Աղբյուրների վկայությամբ հայ, հատկապես իրանահայ վաճառականները եռանդուն փորձեր էին կատարում նոր ծովային ճանապարհը յուրացնելու ուղղությամբ<sup>6</sup>: Նրանք հանդիսանում էին մաև կապող օղակ Պարսից ծոցի ու Հնդկական օվկիանոսի մավահանգիստների և Լևանտի առևտրական հանգույցների միջև<sup>7</sup>:

Իրանա-հնդկական ծովային առևտրի հիմնական կենտրոններն էին Պարսից ծոցի Բենդեր-Աբբաս, Բենդեր-Բուշիր, Բասրա և Հնդկաստանի արևմտյան ծովափին գտնվող Սուրաթ մավահանգիստները, որոնց միջև կառնապոր երթևեկում էին հայ վաճառականների առևտրական մավերը<sup>8</sup>: Առավել խոշոր հայ խաջաների տրամադրության տակ կային մաև օվկիանոսային խոշոր մավեր, որոնցից մի քանիսի անունը հասել է մեզ<sup>9</sup>: Սակայն հայ վաճառականների առևտրական մավատորմը բաղկացած էր մեծ մասամբ ոչ մեծ առագաստանավերից, որոնք վերին աստիճանի շարժունակ էին, արագընթաց և ունեին բավարար բեռնատարողություն: Նկատի ունենալով մեծան մավերի շահավետությունը, բրիտանական Օստ-Հնդկական ընկերության ղեկավարները համձնարարում էին վաճառել այդ ընկերության տրամադրության տակ եղած խոշոր մավերը և մոտիկ տարածություններում բեռնափոխադրումներն իրականացնել հայերին պատկանող մավերով<sup>10</sup>:

Տեղեկություններ կան, որ հայ վաճառականների մեջ կային մաև մարդիկ, որոնք հանդիսանում էին իրենց սեփական մավերի մավավարները: Դրանցից էին, օրինակ, Հնդկաստանում խոշոր վաճառականի համբավ ձեռք բերած Հովհան և Հովսեփ Մարգարյանները, որոնք արևմտյան աշխարհում հայտնի էին Ջոն և Ջոզեֆ Դա-Մարկ կամ Դեմարկորա անունով<sup>11</sup>: Հնդկական օվկիանոսում վիստացող ծովահեններից պաշտպանվելու համար հայ վաճառականների մավերը զինված էին մաև բնդանոթներով: Պետականության քաջակայության պայմաններում գուրկ լինելով ազգային



ճելու հեռանկարներ, հայ վաճառականները ստիպված էին արտագաղթել երկրից, որոնցով իրենց կուտակած կապիտալները ներդնելու ավելի քարենպաստ երկրներ: Ըստ այնմ, հայերի զանգվածային արտագաղթն այդ առասպելական հարստության երկրից այլևս դարձավ անշրջելի: Դրա հետևանքով մարեցին մաև Հնդկաստանի բազմաթիվ քաղաքներում եղած ծաղկուն հայ գաղթօջախները:

Հարկ է սակայն նշել, որ ողջ XVII դարի ընթացքում Հնդկաստանը մի հսկայական հեմակետ էր, որի վրայով հայ վաճառականներն առևտուր էին անում տարածաշրջանի բազմաթիվ երկրների հետ: Միաժամանակ Հնդկաստանից հայության արտագաղթը Հարավ-Արևելյան Ասիայի, Հեռավոր Արևելքի երկրներ և Հնդկական օվկիանոսի կղզիներ ծնունդ տվեց հայկական մոր գաղթօջախներին:

Գոյություն ունի հավաստի գիտական տեսակետ այն մասին, որ Չինաստանը վաղնջական ժամանակներից ծանոթ է եղել հայ վաճառականներին: Հայերը Չինաստան են այցելել դեռևս վաղ միջնադարում, թան դինաստիայի տիրապետության շրջանում (618-907թթ.): Ավելի ուշ այդ կապերը դանդում են առավել ընդարձակ: Ֆրանցիսկյան միաբանության անդամ Անդրեաս Պերուջացին 1326թ. Չինաստանից գրած մի մամուլում հայտնում է, որ Թայվանի նեղուցի Յուանցոու կոչված ծովածոցի մույմանում քաղաքում «մեծահարուստ մի հայ տիկին կառուցել է մեծ ու գեղեցիկ մի եկեղեցի, որն արքեպիսկոպոս Ջովաննի Մոնտեկորվինոյի հրահանգով դարձել է կաթոլիկ տաճար»: Այստեղից ենթադրվում է, որ XIV դարի սկզբներին հարավ-արևելյան Չինաստանի ծովափնյա վաճառաշահ քաղաքներում այնքան հաճախակի է եղել հայերի երթևեկը, որ եկեղեցի ունենալու անհրաժեշտություն է առաջացել:

Ըստ երևույթին այդ փոքրիկ գաղթօջախը Լենկթեմուրի աշխարհաստան արշավանքների ժամանակ մարել ու ոչնչացել է:

Չինաստանի երկրորդ հայ գաղթականությունը հանդիսացել է հնդկահայ գաղութականության մի ճյուղը: Հնդկահայ մի խումբ վաճառականներ XVI դարում թափանցում են Չինաստան և ձեռնամուխ լինում առևտրական լայն գործունեության<sup>15</sup>:

Հիսուսյան կրոնավորների վկայությամբ, XVI դարում հայերը վաճառականության և քրիստոնեության ռաիվիրաներն են եղել Չինաստա-

նում<sup>16</sup>։ Այդ ժամանակներում թեև Չինաստանը վաղում էր «փակ դռների» քաղաքականություն մտնող պրիստոնյաների նկատմամբ, սակայն համարելով, որ հայերն իրենցից վտանգ չեն ներկայացնում Չինաստանի պետական շահերի համար և չեն զբաղվում կրոնական քարոզչությամբ, նրանց մոտքն այդ երկիրը եղել է բացարձակ ազատ։ Հիշատակություն կա այն մասին, որ 1603թ. հիսուսյան կրոնավորները հայի անվան տակ և հայկական տարագով էին մոտք գործում Չինաստան<sup>17</sup>։

ների վերաբերյալ փաստական հարուստ նյութեր են պարունակվում ֆրանսիացի հեղինակ Շ. Դովիեի գրքում<sup>23</sup>:

1675-1678թթ. Չինաստան մեկնած ռուսական դեսպանության ղեկավար Նիկոլայու Սպարաբիու Մյլեսկու հաղորդած տեղեկության համաձայն, մետաքսի արտադրությունը, թնդանոթ ձուլելու գաղտնիքը, կողմնացույցի օգտագործումը նավագնացության մեջ և այլ նորություններ, չինացիներից սովորելով եվրոպայում տարածել են հայր Օդորիկոսը (Պորդինոնցին), Անտոն Հայը և Մարկո Պոլոն<sup>24</sup>:

Անտոն Հայի մասին աղբյուրները հաղորդում են, որ նա եղել է նավապետ և ծառայել Վենետիկի հասարակապետությանը: Պահպանվել է նաև նրա կտակը՝ գրված XIV դարի վերջին:

XVIII դարի կեսերին հայ վաճառականների առևտուրը Չինաստանի հետ այն աստիճանի ծավալուն բնույթ է ընդունում, որ այդ երկրում ստեղծվում են հայկական առևտրական գրասենյակներ, իսկ առանձին հարուստ վաճառականներ պահում էին մշտական առևտրական գործակալներ: Հայտնի է, օրինակ, որ վենետիկաբնակ մեծահարուստ վաճառական Հովհաննես Սեղբոսյանը Պեկինում ունեցել է առևտրական գործակալ, որի անունը եղել է Բրուսացի խոջա Շյուրը<sup>25</sup>:

Ծավալուն է եղել նաև հայ վաճառականների առևտուրը Բիրմայի հետ: Բիրմահայ գաղութը ևս հնդկահայ գաղթականության մի ճյուղն է: Կոստանդ Ջուրայեցին այդ երկրում հիշատակում է երկու քաղաքներ՝ Ավան և Ռանգունը, որտեղ հաստատված են եղել հայ վաճառականներ: Անգլիական աղբյուրների վկայությամբ, Բիրմայում և նրա հարևան երկրներում առկա են եղել հայկական առևտրական գրասենյակներ (ֆակտորիաներ), որոնք լուրջ մրցակիցներ են հանդիսացել եվրոպացիների համար<sup>26</sup>: Վկայելով այդ մասին, մի ճանապարհորդ, որը XVII դարում այցելել է Բիրմա, գրում է. «Հայերը, որոնք հաստատված են Ավայում և ունեն իրենց ինքնուրույն իշխանությունը (առևտրական կառույցների իմաստով Վ. Բ.) բավականին դժվարացրել են եվրոպական վաճառականների գործը»<sup>27</sup>:

XVII դարի սկզբներին Բիրմայում գոյություն ունեցած հայկական գաղթօջախների մասին ուշագրավ տեղեկություններ է բերում նաև Հ. Գ. Ագոնցը<sup>28</sup>: Հնդկաստանի Կալկաթա և Դաքքա քաղաքները լինելով գրեթե Բիրմայի սահմանների մոտ, նպաստել են հայ վաճառականների մուտ-



քին այդ երկիրը: Հայերը նախապես հաստատվել են Սիրիայում կոչված վայրում, ապա տարածվել էին նաև այլ քաղաքներում՝ Պեգո և այլ վայրեր: Ավայում հայերն ունեցել են մի մեծ եկեղեցի, որը XVII դարում կառուցել է ուն Ջաղատեանց: Եկեղեցու առաջին հովիվը եղել է Էջմիածնից ուղարկված Մովսես վարդապետը: Ավայում նշանավոր է եղել ակնեղենի վաճառականությունը, որը հիմնականում զտնվել է հայերի ձեռքում<sup>29</sup>:

Բիրմայում հայերը հասել են մաս պետական բարձր պաշտոններին, եղել են մինչև անգամ պալատական հազարապետ ու զանճնապահ: Ավա-  
յի թագավորի զանճնապահն է եղել Նիկողայոս Աղալարենցը, որն ի դեպ  
կառուցել է Սրինկ մավահանգստի հայոց եկեղեցին, ինչպես մաս լատին-  
ների եկեղեցին ու վանքը<sup>32</sup>:

[illegible]

ղայեցին համարվում է Տիբեթ այցելած չորրորդ անձնավորությունը, որը գրավոր հիշատակ է թողել այդ մասին: Նա առևտրական գործերով այդ երկիրն է այցելել 1686թ.: Նրանից առաջ այդ երկիրն այցելել էին միայն ֆրանցիսկյան քարոզիչ Օդորիկոս Ֆրիուլացին կամ Պորդենոնցից (XIV դարում), պորտուգալացի Անտոնիո Անդրադարցին (1624թ.), ավստրիացի ճիզվիթ Իռիան Գլյուբերը (XVII դարի 60-ական թվականներին)<sup>33</sup>:

Սակայն հավաստի տեղեկություններ կան այն մասին, որ Հովհաննես Ջուղայեցուց առաջ ևս այդ երկիրն այցելել են հայ վաճառականներ: Այդ մասին է վկայում թեկուզ այն փաստը, որ Կոստանդ Ջուղայեցին իր «Աշխարհաժողովում» տեղեկություններ է հաղորդում Տիբեթում (Բութանը) կիրառվող չափ ու կշռի միավորների մասին<sup>34</sup>:

Ինքը Հովհաննես Տեր Դավթյան Ջուղայեցին իր «Հաշվետումարում» վկայում է, որ երբ 1686թ. հասել է Լիասա, այնտեղ ի թիվս քազմաթիվ տիբեթցի, մեպալցի, քաշմիրցի և այլն վաճառականների, հանդիպել է նաև հայ խոջաների: Նա նույնիսկ թվարկում է նրանց անունները. Դուկասի որդի Շատուր, Պողոսի որդի Մելիջան, Գազկցի Կարապետի որդի Աբրահամ, Մելիջանենց Մաթոս, Մարտիրոսի որդի Նեղկոս (Նիկողոս), Հակոբ, Խումցի աղան, Դավուք, Մուրադ, Սարգսի որդի Հովհան, Ալնցի Ասլան, Պետրոս և այլն<sup>35</sup>:

Հովհաննես Ջուղայեցին Տիբեթում մնացել է անընդմեջ հինգ տարի, յուրացնելով տիբեթյան լեզուն և մոտիկից ծանոթանալով այդ երկրի ժողովրդի բարքերի ու սովորությունների հետ: Նրա «Հաշվետումարը» մեծարժեք սկզբնաղբյուր է Իրան, Հնդկաստան, Նեպալ և Տիբեթ ներմուծվող և արտածվող ապրանքներից գանձվող մաքսերի չափը պարզելու, ապրանքների փոխադրման եղանակները որոշելու և հարակից այլ հարցեր լուսաբանելու առումով:

Հայ վաճառականները լայն շփումներ են ունեցել նաև Ինդոնեզիայի հետ: Որոշ տեղեկությունների համաձայն, Նիդերլանդական Հնդկաստանի հայկական գաղութը հիմնադրվել է 1656թ. խոջա Սոլիմա անունով մի վաճառականի կողմից, որը հաստատվել է Մագասար քաղաքում: Դա հիմք է տալիս ենթադրելու, որ Ճավայում և Ինդոնեզական մյուս կղզիներում ևս հաստատվել էին հայ վաճառականներ: 1747թ. մարտի 31-ին Նիդերլանդական Օստ-Հնդկական ընկերությունն արձակում է հատուկ հրո-

վարտակ, որով հայերին շնորհում էր «ազատ քաղաքացի» իրավունքը<sup>36</sup>։ Դրանով նրանց իրավունքները հավասարեցվում էին եվրոպացիների իրավունքներին<sup>37</sup>։

Կոստանդ Ջուլայեցին Հեռավոր Արևելյան Մալակկայի, Տիմորի, Մակաոյի, Ինդոնեզական կղզիների կողքին հիշատակում է Ֆիլիպինների կենտրոն Մանիլան՝ որպես առևտրաշատ մի քաղաք, որտեղ լինում են հայ վաճառականներ։ Իսպանական տիրապետության շրջանում օտարերկրացիների մուտքը Ֆիլիպիններ արգելված էր։ Մակայն ինչպես և Չինաստանում, այստեղ ևս հայերի համար մուտքն ազատ էր։ Ազոնցը Մանիլայի հին գաղթականության մասին գրում է. «... Ոչ ոք, յազգաց, եւ ոչ յերուպացոց կարող է անդ վաճառականութիւն առնել, բայց ի չինաց, հնդկաց եւ հայոց»։ Իսկ Դ. Ալիշանը նկատում է, որ «ամանք յօտար ազգաց կամեցեալ առևտրութիւն առնել անդամօր, յանուն հայոց առնեն»<sup>38</sup>։

Մանիլայի հայ փոքրիկ գաղթօջախը հանդիսանում էր յուրօրինակ մի հենակետ կամբջակ, կայող օղակ՝ Հեռավոր Արևելքի, Չինաստանի հայ գաղթօջախների և հնդկահայոց ու Նոր Ջուլայի միջև<sup>39</sup>։

XVIII դարի վերջերին և XIX դ. սկզբներին ասիական երկրներում տեղի ունեցած քաղաքական և սոցիալական բնույթի տեղաշարժերը բացասական ազդեցություն ունեցան հայ գաղթօջախների ճակատագրի վրա, որի հետևանքով անկում ապրեց նաև հայ վաճառականությունը, փակելով խոջայական կապիտալի պատմության երբեմնի փառավոր էջերը։

## RESUME

### VAHAN BAIBURTIAN

#### *FROM THE HISTORY OF CONTACTS OF THE ARMENIANS WITH THE SOUTH AND SOUTH-EASTERN ASIAN AND FAR EASTERN COUNTRIES IN THE LATE MIDDLE AGES*

The Armenian merchants played very important role in international exchange of commodities between East and West in XVI-XVII centuries. As a result of permanent Turkish-Iranian wars, which were going in both parts of Armenia, the mass invasion

of nomadic tribes and their settledown in the Armenian territories and especially the deportation of Armenians by the Iranian shah Abbas I to Iran, Armenia had appeared in heavy conditions. In such a situation the Armenian trade bourgeoisie, as well as the Armenian intellectuals, could find more favorable arena for their activity in the Armenian communities in different parts of the world, where existed comparatively better conditions for it, than in Armenia.

In the paper deals it was noted that the Armenians since the ancient times had different kind of contacts with numerous countries of South and South-Eastern Asia and Far East. They were mainly of trade-economical and cultural character. As a result of those contacts there were organized many large and small Armenian communities whose role in the economic and intellectual-cultural life of the Armenian people is very difficult to overestimate.

#### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- <sup>1</sup> Տե՛ս Ռ. Արրահամյան, Ամանք քաղաքաց Հնդկաց և պարսից, «Բանբեր Մատենադարանի», Երևան, 1958, No 4: Կոստանդ Ջուլայեցի, «Աշխարհածոյով», Մ. Մաշտոցի անվան մատենադարան, ձեռագիր No 5994:
- <sup>2</sup> Տե՛ս Ջեյմս Ռասսել, Հայերեն երկու արձանագրություն Պակիստանի Ջիարաք քաղաքից, «Պատմա-քանասիրական հանդես», 1989, No 3 (126), էջ 205-207:
- <sup>3</sup> M. Seth, History of the Armenians in India, Calcutta, 1895, p. 187, Տե՛ս նաև Թ. Գուշակեան, Հնդկահայք, Երուսաղեմ, 1941:
- <sup>4</sup> M. J. Seth, Armenians in India from the Earlies times to the Present day, Calcutta, 1937; C. Martin, The Armenian Community in India, (առանց հրատ. տեղի), 1958:
- <sup>5</sup> W. Foster, England's Quest of Eastern Trade, London, 1933, pp. 312-313.
- <sup>6</sup> Արուսիկան Սոհաք, Թաթիլ-ե զենդեզանի-ե շահ Արբաս-ե քաթիր, քախշ-ե ավվալ, Թեհրան, 1325, էջ 310 (պարսկ. լեզվ.):
- <sup>7</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս Վ. Բայբուրդյան, Համաշխարհային առևտուրը և իրանահայությունը XVII դարում, Թեհրան, 1996, ինչպես նաև В. Байбуртян, Армянская колония Новой Джульфы в XVII в. (Роль Новой Джульфы в ирано-европейских политических и экономических связях, Е. 1969).
- <sup>8</sup> W. H. Moreland, India at the Death of Akbar, An Economic Study, London, 1920, p. 221.
- <sup>9</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս V. Baibourtian, International Trade and the Armenian Merchants in the Seventeenth Century, New Delhi, 2004.

- <sup>10</sup> Bruce, Annales of the Honorable East-India Company, vol. 2-3, London, 1810, pp. 140-141.
- <sup>11</sup> M. J. Seth, Armenians in India..., pp. 304-305, 321.
- <sup>12</sup> «Եվրոպա» ամսագիր, Վիեննա, 1858, էջ 52:
- <sup>13</sup> L. Lockart, The Fall of the Safavi Dynasty and the Afghan Occupation of Persia, Cambridge, 1958, p. 370.
- <sup>14</sup> P. Gosse, The Pirates, London, 1877, p. 35.
- <sup>15</sup> Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 469:
- <sup>16</sup> Հ. Աճառյան, Հայ գաղթականության պատմություն, Ե., 2002, էջ 323:
- <sup>17</sup> Ա. Ալպոյաճեան, Պատմութիւն հայ գաղթականութեան, հատ. Գ, Գահիրե, 1961, էջ 292:
- <sup>18</sup> Ղ. Ալիշան, Սիսական, էջ 467:
- <sup>19</sup> Հովհաննես Տեր-Ղափրյան Ջուղայեցու հաշվետուարը, աշխատասիրությանը L. Ս. Խաչիկյանի և Հ. Դ. Փափազյանի, Ե., 1984, էջ 29:
- <sup>20</sup> Н. Я. Март, Надгробный камень из Семиречья с армянско-сирийской надписью 1373г., ЗВОАО, том 8, стр. 344-349; В. В. Бартольд, Очерк истории Семиречья, Фрунзе, 1949, стр. 45.
- <sup>21</sup> M. J. Seth, Armenians in India, p. 271.
- <sup>22</sup> Հովհաննես Տեր-Ղափրյան Ջուղայեցու հաշվետուարը, էջ 26-27:
- <sup>23</sup> Հովհաննես Տեր-Ղափրյան Ջուղայեցու ..., էջ 27:
- <sup>24</sup> Les Arméniens en Chine et en Asie Centrale au Moyen Age. (Mélanges de sinologie offerts à M. Paul Demieville), II, Paris, 1974, p. 1-17.
- <sup>25</sup> Н. Спафарий, Описание первыя части вселенныя, именуемой Азии, в ней же состоит китайское государство с прочими его городаы и провинции, Казань, 1910, стр. 24-25, 71-173.
- <sup>26</sup> Ղ. Ալիշան, Սիսական, էջ 468:
- <sup>27</sup> Дж. Е. Холл, История Юго-Восточной Азии, М., 1958, стр. 264.
- <sup>28</sup> Մ. Գասպարյան, Բիրմայի հայ գաղութը, «Նոր Ազդարար», Հայկարան, 1950, No 1, էջ 15:
- <sup>29</sup> Հ. Գ. Ազունց, Աշխարհագրութիւն շորից մասանց աշխարհի, մասն I, հ. IV, Վենետիկ, 1805, էջ 152:
- <sup>30</sup> Հ. Աճառյան, Հայ գաղթականության պատմություն, էջ 317:
- <sup>31</sup> «Սիոն», Երուսաղեմ, 1959, էջ 158:
- <sup>32</sup> «Սիոն», Երուսաղեմ, 1959, էջ 169:
- <sup>33</sup> Հ. Աճառյան, Հայ գաղթականության պատմություն, էջ 317:
- <sup>34</sup> Հովհաննես Տեր-Ղափրյան Ջուղայեցու ..., անաչաբան:

<sup>35</sup> Մ. Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. No 10704, p. 36 ա:

<sup>36</sup> Հովհաննես Տեր-Դավթյան Ջուղայեցու ..., էջ 26:

<sup>37</sup> G. Paulus, Short history of the Armenian community in Netherlands India, Calcutta, [ա. տ.]:

<sup>38</sup> Հորդ. Տեր-Հորդանանեան, Նետրլանդական Արեւելեան Հնդկաստանայ հայ գաղութի պատմութիւնը սկզբէն մինչ մեր օրերը, Երոյսադէմ, 1937, էջ 15:

<sup>39</sup> Ղ. Ալիշան, Սիսական, էջ 468:

## ԴԱՎԻԹ ԿՆՅԱԶՅԱՆ

### ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՍԻԱՅԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՋԱՐԳԱՅՄԱՆ ՈՐՈՇ ԱՍՊԵԿՏՆԵՐԻ ԵՎ ԱՅԴ ՀԱՐՅՈՒՄ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԴԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Սույն հոդվածում փորձ է արվում ներկայացնել Հարավային Ասիայի տարածաշրջանը միավորող մի կազմակերպության՝ Հարավային Ասիայի Տարածաշրջանային Համագործակցության Ընկերակցության (South Asian Association for Regional Cooperation, այսուհետ՝ ՍԱԱՐԿ<sup>1</sup>) զարգացման հեռանկարները՝ որպես համակարգող կառույց տարածաշրջանի պետությունների քաղաքական, ռազմաքաղաքական և տնտեսական հարաբերություններում: Այդ համատեքստում ներկայացվում է ՍԱԱՐԿ-ի և հարևան տարածաշրջանային կազմակերպության՝ Հարավ-Արևել-ի և հարևան տարածաշրջանային Ընկերակցության (Association of South East Asian Nations, այսուհետ՝ ԱՍԵԱՆ) համեմատական վերլուծությունը՝ ելնելով այն համգամանքից, որ հենց հարավասիական պետություն-ների քաղաքական-պետական և գիտական շրջանակներում ՍԱԱՐԿ-ի ներքին քաղաքական-պետական և գիտական շրջանակներում ՍԱԱՐԿ-ի ներքին քաղաքական-պետական և գիտական շրջանակներում ՍԱԱՐԿ-ի ներքին քաղաքական-պետական և գիտական շրջանակներում ՍԱԱՐԿ-ի ներքին քաղաքական-պետական և գիտական շրջանակներում:

2010թ. նշվեց կազմակերպության 25-ամյակը (ՍԱԱՐԿ-ը հիմնադրվել է 1985թ.)<sup>2</sup>: Կազմակերպությունը, որը ներառում է Հարավային Ասիայի բոլոր պետությունները (Հնդկաստան, Պակիստան, Բանգլադեշ, Աֆ-ղանստան (միացել է 2005թ.), Շրի Լանկա, Նեպալ, Բութան, Մալդիվ-ներ), ունի հսկայական ռազմաքաղաքական, տնտեսական և գիտակր-

քական ներուժ: Բավական է նշել, որ այդ տարածաշրջանում բնակվում է ավելի քան 1,6 մլրդ մարդ, իսկ ՄԱՄԲԿ-ի անդամ-երկրների հավաքական ՀՆԱ-ն գնողունակության հաշվարկով 2010թ. դրությամբ հասել է շուրջ 5 տրլն ԱՄՆ դոլարի<sup>3</sup>: Հարավային Ասիայի երկրներից երկուսը՝ Հնդկաստանը և Պակիստանը տիրապետում են միջուկային սպառազինության՝ ոչ սլաշտոնապես համդիսանալով միջուկային տերություններ<sup>4</sup>:

Համաձայն ՄԱՄԲԿ-ի Կանոնադրության՝ կազմակերպության հիմնական նպատակներ են համդիսանում՝

- Հարավային Ասիայի ժողովուրդների բարեկեցությանը նպաստելը և նրանց կենսամակարդակի բարելավումը,
- տարածաշրջանում տնտեսական աճի, սոցիալական առաջընթացի և մշակութային զարգացման արագացումը, բոլոր անհատներին արժանապատիվ ապրելու հնարավորության ընձեռումը,
- Հարավային Ասիայի երկրների հավաքական ինքնավստահության ամրապնդումը,
- նպաստելը փոխադարձ վստահությանը, փոխըմբռնմանը, միմյանց խնդիրների գնահատմանը,
- նպաստելը տնտեսական, սոցիալական, մշակութային, տեխնիկական և գիտական ոլորտներում ակտիվ փոխգործակցությանը և փոխադարձ աջակցությանը,
- համագործակցության ամրապնդումն այլ զարգացող երկրների հետ,
- համագործակցության ամրապնդումն ընդհանուր շահերի ոլորտում միջազգային կառույցների շրջանակներում,
- համագործակցությունը մույնաման նպատակներ ունեցող միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ<sup>5</sup>:

Թեև ՄԱՄԲԿ-ի Կանոնադրության համաձայն, անդամ-երկրները պարտավորվել են նպաստել խաղաղությանը և բարեկամությանը տարածաշրջանում, կազմակերպության դերը Հարավային Ասիայի երկրների միջև քաղաքական երկխոսությանը նպաստելու գործում քավական թույլ է, ինչը չափազանց դժվար իրականալի է դարձնում այդ նպատակին հասնելը<sup>6</sup>: Տարածաշրջանում ռազմաքաղաքական լարվածության հիմնական աղբյուր համդիսանում են հնդկա-պակիստանյան հակասությունները, և տարածաշրջանի այդ երկու առաջատար տերություններ-



Մի միջև առճակատումը խիստ բացասական ներգործություն է ունենում Հարավային Ասիայում խաղաղության և կայունության ու տարածաշրջանային տնտեսական ինտեգրման վրա: Այսպես, ՍԱԱԲԿ-ի գոյության քաղաքական դերը նշանավորվել է Քաշմիրում 1999թ. Հնդկաստանի և Պակիստանի միջև ռազմական ուժեղ բախումով՝ այսպես կոչված Կարգիլի պատերազմը: 2001թ. մի խումբ պակիստանցիներ ահաբեկչական գործողություն են իրականացրել Հնդկաստանի խորհրդարանի տարածքում, որի արդյունքում 2001-2002թթ. հնդկա-պակիստանյան սահմանի վրա տեղի է ունեցել երկու երկրների միջև լայնածավալ ռազմական առճակատում: Այդ շրջանում շատ մեծ էր Հարավային Ասիայում միջուկային պատերազմի հնարավորությունը, սակայն միջազգային հանրության (ոչ ՍԱԱԲԿ-ի հեղ.) ջանքերով հաջողվել է թուլացնել լարվածությունը: Եվ վերջապես, 2008թ. նոյեմբերի 26-ին պակիստանցի ահաբեկիչները հարվածակում են գործել հնդկական Մումբայ քաղաքի վրա, որին զոհ են գնացել գրեթե 200 հոգի<sup>7</sup>: Դրա արդյունքում ընդհատվել է հնդկա-պակիստանյան համակողմանի երկխոսության (Composite Dialogue) մեխանիզմը: Ինչպես տեսնում ենք, ՍԱԱԲԿ-ին չի հաջողվել կանխել իր երկու առանցքային անդամների միջև հակամարտությունները և լարվածությունն ու նախադրյալներ ստեղծել տարածաշրջանում վստահության և փոխըմբռնման մթնոլորտի ձևավորման համար:

Ինչ վերաբերում է ԱՍԵԱՆ-ին, ապա նրա 1976թ. գագաթաժողովի ընթացքում ստորագրված ԱՍԵԱՆ-ի Պայմանագրի մասին հռչակագրի և Բարեկամության և Համագործակցության մասին համաձայնագրի համաձայն, սահմանվում էր որոշակի մեխանիզմ անդամ-պետությունների միջև հակամարտությունների կարգավորման համար, որը նախատեսում էր արտաքին ուժերի չմիջամտություն ԱՍԵԱՆ-ի տարածաշրջանի գործերին։ Այսպես, նշվում էր, որ ներտարածաշրջանային տարաձայնություներում ԱՍԵԱՆ-ի անդամները պետք է հենվեն բացառապես խաղաղ լուծման ելքերի վրա, բացառելն ուժի կամ նրա կիրառման սպառնալիքը, գործընթացների վրա, բացառելն ուժի կամ նրա կիրառման սպառնալիքը, լուծեն իրենց վեճերը բարեկամական բանակցությունների միջոցով։ Ստեղծվում էր անդամ-պետությունների Բարձր Խորհուրդ՝ վեճերի լուծման խաղաղ ձևեր ներկայացնելու նպատակով։ Ընդ որում, հակամարտող կողմերը խորախուսվում էին փորձել վեճը լուծել խաղաղ բանակցութ-

յունների միջոցով մինչև ՄԱԿ-ի Կանոնադրությամբ նախատեսված այլ միջոցներին դիմելը<sup>8</sup>: ԱՄԵԱՆ-ի անդամ-երկրներն անհրաժեշտ քաղաքական կամք և շահագրգռվածություն ցուցաբերեցին Հարավ-արևելյան Ասիայում արտաքին ուժերի ռազմաքաղաքական գերակայության հաստատումը բացառելու հարցում<sup>9</sup>:

ՄԱԱԲԿ-ի պարագայում, ի սկզբանե, Հնդկաստանի և Պակիստանի միջև առճակատումը և տարածքային վեճերը դուրս եկան տարածաշրջանի շրջանակներից՝ ուղղակի կամ անուղղակի կերպով ներգրավելով թե՛ հարևան պետությունների (Չինաստան) և թե՛ երկու գերտերությունների՝ ԱՄՆ-ին և ԽՍՀՄ-ին:

Մասնավորապես, տարածաշրջանի ամենաբարդ՝ Քաշմիրի հիմնահարցում Պակիստանն անընդհատ փորձեր է անում կարգավորման գործընթացի մեջ ներքաշել արտատարածաշրջանային ուժերի, հատկապես ԱՄՆ-ին և Չինաստանին, չնայած 1972թ. Շիմլայի համաձայնագրով կողմերը պարտավորվում էին հիմնահարցը լուծել երկկողմ բանակցությունների միջոցով: Չինաստանն ակտիվ ներգործություն է ունենում տարածաշրջանային գործերի վրա Պակիստանին տրամադրվող ռազմաքաղաքական և նյութական օգնության միջոցով՝ դրանով որոշակիորեն հավասարակշռելով Հնդկաստանի ռազմաքաղաքական ներուժը և ազդեցությունը: Մյուս կողմից, դեռևս Սառը պատերազմի ժամանակներից ԱՄՆ-ը ևս ակտիվ քաղաքական, ռազմատեխնիկական աջակցություն է ցուցաբերել Պակիստանին՝ որպես հակակշիռ Խորհրդային Միության հետ ակտիվ համագործակցություն իրականացնող Հնդկաստանի: Ներկայումս ԱՄՆ-ի կողմից Իսլամաբադին ցուցաբերվող օգնության համատեքստում ընկած է Աֆղանստանում ԱՄՆ-ի կողմից իրականացվող գործողությունը և միջազգային ահաբեկչության դեմ պայքարը: ԽՍՀՄ-ն իր հերթին համակողմանի բարեկամական հարաբերություններ է խորացրել Հնդկաստանի հետ, և ներկայումս էլ վերջինը շարունակում է մնալ ՌԴ - ռազմավարական գործընկերը տարածաշրջանում:

Այսպիսով, հիմնական տարբերությունը ՄԱԱԲԿ-ի և ԱՄԵԱՆ-ի միջև այդ կազմակերպությունների անդամ-պետությունների միջև վեճերի կարգավորման և քաղաքական երկխոսության ոլորտում հանդիսանում է այդ հարցերի կարգավորման գործնական դիվանագիտական մեխա-

նիզմների առկայության մեջ: ՍՍԱՐԿ-ի շրջանակներում չկան հակամարտությունների կարգավորման և կանխարգելման արդյունավետ մեխանիզմներ, նախատեսված չեն ձևաչափեր երկկողմ և բազմակողմ քաղաքական երկխոսության համար:

Կարևոր գործոն է նաև այն, որ Հնդկաստանը, ըստ էության, հանդիսանում է ՍՍԱՐԿ-ի առանցքը: Այն իր քաղաքական նշանակությամբ, բնակչության թվով, ռազմական, տնտեսական, գիտական և տեխնոլոգիական ներուժով ամենամեծ գերազանցում է կազմակերպության մյուս անդամ-պետություններին: Նման պայմաններում ՍՍԱՐԿ-ի ամրապնդումը և նրա մարմինների լիազորությունների ընդլայնումը և տարածաշրջանային ինտեգրման գործընթացներն առաջին հերթին ձեռնտու են Նյու Դելիին, որն այդ կերպ կարող է ամրապնդել իր քաղաքական և տնտեսական դիրքերը տարածաշրջանում: Եթե հաշվի առնենք, որ ՍՍԱՐԿ-ի անդամ-երկրների, առաջին հերթին՝ Հնդկաստանի և Պակիստանի միջև առկա են մի շարք քաղաքական, ռազմաքաղաքական, տարածքային, առևտրատնտեսական և այլ բնույթի հակասություններ ու տարածքային, առևտրատնտեսական և այլ բնույթի հակասություններ, ապա պետություններ, պարզ է դառնում, որ ՍՍԱՐԿ-ի հետագա ամրապնդումը և նրան վերաբերող լիազորությունների հաղորդումը զգուրապնդումը և նրան վերաբերող Պակիստանի, Բանգլադեշի, Շրի Լանկայի շավորությամբ է ընդունվում Պակիստանի, Բանգլադեշի, Շրի Լանկայի և Հարավային Ասիայի մյուս երկրների կողմից: Վերջինները երկյուղում և Հարավային Ասիայի մյուս երկրների կողմից: Վերջինները երկյուղում և Հարավային Ասիայի մյուս երկրների կողմից: Վերջինները երկյուղում և Հարավային Ասիայի մյուս երկրների կողմից:

Ինչ վերաբերում է ՍՍԱՐԿ-ի շրջանակներում բազմակողմ տնտեսական համագործակցությանը և դրա հեռանկարներին, ապա Հնդկաստանը կողմնակից է ՍՍԱՐԿ-ի կենտրոնացմանը տնտեսական և հումանիտար համագործակցության զարգացման վրա՝ համարելով, որ անդամ-երկրների միջև առևտրատնտեսական, ինչպես և գիտության, կրթության ու մշակույթի բնագավառներում կապերի խորացումը կարող է ստեղծել բարենպաստ միջավայր ՍՍԱՐԿ-ի անդամ-երկրների միջև առկա քաղաքական հակասությունների կարգավորման համար: Այդ իսկ պատճառով ՍՍԱՐԿ-ի շրջանակներում պաշտոնապես համագործակցության 11 հիմնական ուղղություններն են հանդիսանում՝ գյուղատնտեսությունը,

կրթությունը, մշակույթը և սպորտը, առողջապահությունը, ազգագրությունը և երեխաների բարեկեցությունը, շրջակա միջավայրը և օդերևութաբանությունը, գյուղական զարգացումը, զբոսաշրջությունը, տրանսպորտը, գիտությունը և տեխնոլոգիաներն ու հաղորդակցությունները<sup>10</sup>:

Սակայն առևտրի և տնտեսության բնագավառներում ևս ՍԱԱԲԿ-ը չի հասել շոշափելի ձեռքբերումների, չնայած ստորագրված փաստաթղթերին: Այսպես, 1993թ. ապրիլի 11-ին ՍԱԱԲԿ-ի անդամ-պետությունների միջև ստորագրվել է ՍԱԱԲԿ-ի արտոնյալ առևտրի կազմակերպման մասին համաձայնագիրը (SAPTA), որն ուժի մեջ է մտել 1995թ. դեկտեմբերի 7-ին<sup>11</sup>: Այն դիտարկվում էր որպես պոտենցիալ լարավային Ասիայի ազատ առևտրի գոտու ստեղծման համար, որն իր հերթին պետք է հիմք դառնար Մաքսային Միության, Ընդհանուր Շուկայի և Տնտեսական Միության համար: Դրան հաջորդել է 2004թ. հունվարի 6-ին Հարավային Ասիայի ազատ առևտրի գոտու մասին համաձայնագրի ստորագրումը Իսլամաբադում ՍԱԱԲԿ-ի 12-րդ զագաթաժողովի ժամանակ: Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2006թ. հունվարի 1-ին<sup>12</sup>: Սակայն այս բոլոր ձևաչափերի արդյունավետությունը դեռևս չափազանց ցածր է: Բավական է նշել, որ ՍԱԱԲԿ-ի առաջատարներ Հնդկաստանի և Պակիստանի միջև առևտրաշրջանառությունը 2008թ. կազմել է ընդամենը 2,232 մլրդ ԱՄՆ դոլար, ընդ որում Հնդկաստանի չափաբաժինը Պակիստանի արտաքին առևտրում կազմել է 1%-ից մի փոքր ավելին, իսկ Պակիստանի չափաբաժինը Հնդկաստանի առևտրում՝ 0,5%-ից էլ պակաս<sup>13</sup>:

Այսպիսով, չնայած տնտեսական ինտեգրման ոլորտում ստորագրված մի շարք հիմնարար փաստաթղթերին, ՍԱԱԲԿ-ն այս ոլորտում ևս արդյունավետ չի գործում: Պատահական չէ, որ 2010թ. ապրիլի 28-29-ը Բութանի Տիբեթում մայրաքաղաքում կայացած ՍԱԱԲԿ-ի հորեյանական 16-րդ զագաթաժողովի ընթացքում իր ունեցած ելույթում Հնդկաստանի վարչապետ Մանմոհան Սինգհը նշել է, որ Հարավային Ասիայի երկրները ստեղծել են տարածաշրջանային համագործակցության կառույցներ, սակայն նրանց բավարար լիազորություններ չեն ընձեռել արդյունավետ գործելու համար, և ՍԱԱԲԿ-ի երկրների առջև մարտահրավեր է ծառացել՝ հաստատությունները գործունեության մղելու և հոշակագրերը գործնական ծրագրերի վերածելու: Նա ընդունել է նաև, որ ներտարա-

ծաշրջանային առևտրի և ներդրումների ծավալները զգալիորեն զիջում են այն ցուցանիշներին, որոնք առկա են Արևելյան և Հարավ-արևելյան Ասիայում<sup>14</sup>:

Մյուս կողմից, նկատելի է Չինաստանի տնտեսական դիրքերի ուժեղացումը Հարավային Ասիայում, ինչն անշուշտ անդրադառնում է տարածաշրջանի տնտեսական ինտեգրման գործընթացների վրա: Պեկինն ակտիվ քաղաքական երկխոսություն է զարգացնում Հարավային Ասիայի երկրների հետ, ինչպես և հենվելով իր տնտեսական ներուժի վրա՝ խորացնում առևտրատնտեսական համագործակցությունը տարածաշրջանի երկրների հետ: Այսպես, 2006թ. Չինաստանի և Պակիստանի միջև ստորագրվել է ազատ առևտրի մասին համաձայնագիր և մի շարք այլ երկկողմ փաստաթղթեր, որոնք նպաստել են երկկողմ առևտրի ու ներդրումների ծավալի աճին: 1984թ. Չինաստանը և Բանգլադեշը միմյանց շնորհիվ են առավել արտոնյալ պետության կարգավիճակ: Ջարգանում են մասն Չինաստանի առևտրատնտեսական կապերը Շրի Լանկայի հետ<sup>15</sup>: Եվ վերջապես, Հնդկաստանի և Չինաստանի միջև առևտրատնտեսական հարաբերությունները ևս գտնվում են շատ բարձր մակարդակի վրա: Չինաստանը համոզյալ է Հնդկաստանի թիվ մեկ առևտրային գործընկերը, և նրանց միջև առևտրաշրջանառության ծավալը 2010թ. կազմել է շուրջ 60 մլրդ ԱՄՆ դոլար<sup>16</sup>:

Մինչդեռ ԱՄԵԱՆ-ի պարագայում տեսնում ենք աճող տարածաշրջանային ինտեգրում և Հարավ-արևելյան Ասիայի երկրների միջև տնտեսական փոխկապվածության խորացում: ԱՄԵԱՆ-ի կայացումը և նրա սակայն փոխկապվածության խորացումը համագործակցության խորացումը մեծաշրջանակներում բազմակողմ համագործակցության տնտեսական բուռն աճին և պես նպաստել է տարածաշրջանի երկրների տնտեսական բուռն աճին և սոցիալ-տնտեսական բարեկեցությանը: ԱՄԵԱՆ-ի շրջանակներում բազմակողմ տնտեսական ինտեգրման հիմնաքարերն են՝ ԱՄԵԱՆ-ի Ազատ առևտրի տարածության մասին համաձայնագիրը, որը ստորագրվել է 1992թ. Մինգապուրում և ԱՄԵԱՆ-ի ծառայությունների առևտրի մասին շրջանակային համաձայնագիրը, որը ստորագրվել է 1995թ. Բանգկոկում: Մինչև 2015թ. նախատեսվում է ստեղծել ԱՄԵԱՆ-ի Տնտեսական համայնքը<sup>17</sup>: ԱՄԵԱՆ-ի շրջանակներում բազմակողմ տնտեսական համագործակցության արդյունավետության վկայությունն են տալիս

մամյակներ շարունակ նրա առաջատար անդամ-երկրների (Ինդոնեզիա, Թաիլանդ, Մալայզիա, Սինգապուր) կողմից ցուցաբերվող տնտեսական աճի կանոնավոր բարձր ծավալները, որի շնորհիվ էլ նրանք արժանացել են «ասիական վագրեր» տիտղոսին:

Մյուս կողմից, ՍԱԱԲԿ-ի գազաթափողովները կարևոր դեր են խաղում այն առումով, որ դրանց ընթացքում՝ պաշտոնական միստերին զուգահեռ, տեղի է ունենում առավելապես երկկողմ քաղաքական երկխոսություն մասնակից երկրների ղեկավարների միջև, այդ թվում՝ Հնդկաստանի և Պակիստանի միջև: Այսպես, Տիմալիու քաղաքում ՍԱԱԲԿ-ի 16-րդ - գազաթափողովի ընթացքում տեղի ունեցան բանակցություններ Հնդկաստանի և Պակիստանի վարչապետներ Մանմոհան Սինգհի և Յուսուֆ Ռազա Գիլանիի միջև<sup>18</sup>:

Այսպիսով, ՍԱԱԲԿ-ն արդեն իսկ որոշակի անուղղակի դեր է կատարում Հարավային Ասիայի երկրների միջև քաղաքական երկխոսության զարգացման գործում:

Այդ ուղղությամբ կազմակերպության նշանակության ուժեղացման վկայությունն է այն, որ ՍԱԱԲԿ-ի 16-րդ գազաթափողովի արդյունքներով ընդունված Հռչակագրի համաձայն՝ որոշում է ընդունվել Հարավային Ասիայի ֆորումի հիմնադրման մասին: Ֆորումի նպատակներ են հռչակվել Հարավային Ասիայի և նրա ապագա զարգացման մասին քննարկումները և մտքերի փոխանակումը: Ֆորումը բաղկացած է լինելու ՍԱԱԲԿ-ի անդամ-պետությունների ականավոր անձանցից, որոնք իրենց ներդրումն են կատարելու երկարաժամկետ և միջմաժամկետ կտրվածքով ՍԱԱԲԿ-ի հեռանկարային զարգացման գործում և, ըստ պահանջի, ներկայացնելու առաջարկություններ կազմակերպության գոյություն ունեցող մեխանիզմների բարելավման վերաբերյալ<sup>19</sup>:

Հնդկաստանը գիտակցում է ՍԱԱԲԿ-ի դերի և նշանակության աճը, նրա կայացումը՝ որպես լիարժեք և արդյունավետ տարածաշրջանային կազմակերպություն, մեծապես կախված է իրենից: Այսպես, 2011թ. հունիսի 27-ին Հնդկաստանի ԱԳ քարտուղար Նիլուպարմա Ռաոն Լոնդոնի Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտում իր ելույթի ժամանակ նշել է, որ Հնդկաստանի դերը ՍԱԱԲԿ-ում վերջին տարիներին հիմնվում է ասիմետրիկ և ոչ փոխադարձ մոտեցման վրա, և

հնդկական կողմը պատրաստական է ավելի երկար ճանապարհ գնալ տարածաշրջանային համագործակցության ամրապնդման նպատակով<sup>20</sup>: Այսինքն՝ հնդկական կողմը վճռականություն է արտահայտում ստանձնել ՍԱՄԿ-ի կայացման հիմնական բեռը, առանց ակնկալելու համարժեք և փոխադարձ քայլեր կազմակերպության այլ անդամներից: Դա տարածաշրջանային առաջատար տերության կարգավիճակի հավակնող պետությանն արժանի քաղաքական գիծ է:

**Եզրակացություն** - Ամփոփելով՝ հարկ է նշել, որ ՍԱՄԿ-ի լիարժեք կայացմանը խոչընդոտում են ներքոհիշյալ մի շարք գործոններ: Առաջին հերթին դա ընդհանուր ռազմաքաղաքական առճակատումն է Հնդկաստանի և Պակիստանի միջև, մասնավորապես Քաշմիրի հակամարտությունը, որն ունի նաև կրոնական երանգավորում: Ի տարբերություն դրա, ԱՄԵԱՆ-ի տարածաշրջանում չկա նման բազմաշերտ և խոր հակամարտություն անդամ-պետությունների միջև: Խնդիրն ավելի է խորանում այն առումով, որ Քաշմիրի հակամարտության մեջ ներգրավված է նաև տարածաշրջանից դուրս գտնվող պետություն և ուժային խոշոր կենտրոն հանդիսացող Չինաստանը:

Երկրորդ գործոնը Հարավային Ասիայի տարածաշրջանում առաջատար տերությունների՝ ԱՄՆ-ի, Չինաստանի, Ռուսաստանի աշխարհաքաղաքական շահերի առկայությունն է, ինչը որոշակի ներգործություն է ունենում տարածաշրջանում առկա ռազմաքաղաքական խնդիրների վրա ու դրանով իսկ զգալիորեն բարդացնում Հարավային Ասիայի պետությունների միջև քաղաքական, տնտեսական և հումանիտար ինտեգրման գործընթացները:

Երրորդ գործոնը ՍԱՄԿ-ի անդամ-երկրների թվում մեկ բացարձակ առաջատարի՝ Հնդկաստանի առկայությունն է, որն իր քաղաքական, ռազմական և տնտեսական ներուժով մի քանի անգամ գերազանցում է չափավոր զորակազմակերպություններին: Նման անհամաչափությունը որոշակի երկյուղ է առաջացնում Պակիստանի, Բանգլադեշի և մյուս անդամ-երկրների սոտ, որ տարածաշրջանային ինտեգրման խորացումը և դրանց հետևանքներն անհամաչափ կարող են լինել հնդկական կողմի համար: Այսինքն՝ հնդկական կողմը պետք է համապատասխանաբար պահպանի իր քաղաքական գիծը, որն արտահայտվում է համագործակցության ամրապնդման և տարածաշրջանային ինտեգրման խորացումից:

կան և տնտեսական գերակայության հաստատմանը: Այստեղ որոշակիորեն միմյանց են հատվում Հնդկաստանի և Չինաստանի շահերը, քանի որ վերջինն իր հերթին ունի աշխարհաքաղաքական և տնտեսական շահեր Հարավային Ասիայում:

Չորրորդ գործոնը ՍԱԱԲԿ-ի ինստիտուցիոնալ բուլությունն է՝ նրա շրջանակներում վեճերի կարգավորման և կանխարգելման ու քաղաքական երկխոսության արդյունավետ մեխանիզմների բացակայությունը:

Մյուս կողմից, ՍԱԱԲԿ-ն ունի զարգացման լայն հեռանկարներ, որոնք կարող են իրագործվել՝ պայմանով, եթե տարածաշրջանի երկրները, առաջին հերթին՝ Հնդկաստանը և Պակիստանը դրսևորեն անհրաժեշտ քաղաքական կամք և փորձ են լուծել իրենց միջև առկա հակասությունները համագործակցության միջոցով: Հնդկաստանի ղեկավարությունը բազմիցս հայտարարել է, որ պատրաստ է շատ ավելի քայլեր կատարել Պակիստանին ընդառաջ՝ պայմանով, որ Իսլամաբադը հրաժարվի Հնդկաստանի դեմ ուղղված ահաբեկչության աջակցությունից, թույլ չտա իր տարածքի օգտագործումը Հնդկաստանի դեմ ահաբեկչական հարձակումներ իրականացնելու համար և պատասխանատվության կանչի 2008թ. նոյեմբերին Մումբայ քաղաքում տեղի ունեցած ահաբեկչության մեղավորներին<sup>21</sup>:

Հարավային Ասիայի երկրների միջև փոխշահավետ առևտրատնտեսական կապերի խորացումը, նրանց բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավումը և աղքատության նվազումը, հումանիտար կապերի զարգացումը կստեղծեն նպաստավոր պայմաններ Քաշմիրի հակամարտության, սահմանային և այլ վիճելի հարցերի կարգավորման համար ու ճանապարհի կհարթեն ՍԱԱԲԿ-ի ամրապնդման և, որպես արդյունավետ տարածաշրջանային կազմակերպություն, կայացման համար:



## RESUME

DAVID KNYAZYAN

### *SOUTH ASIAN ASSOCIATION FOR REGIONAL COOPERATION. CERTAIN ASPECTS OF ITS DEVELOPMENT AND THE ROLE OF INDIA*

This article represents the prospects of development of the South Asian Association for Regional Cooperation (SAARC) as a regional structure coordinating the political, military-political and economic relations of the South Asian countries. In this context the article contains comparative analysis of the SAARC and the Association of South East Asian Nations (ASEAN), since the governmental bodies, political forces and think-tanks of South Asian countries themselves in their researches and discussions on the prospects of the SAARC often compare it with the ASEAN, considering the latter as a successful model of a regional structure.

In 2010 the SAARC turned 25 years old (it was founded in 1985). The SAARC, which involves all the states of South Asia (India, Pakistan, Bangladesh, Sri Lanka, Afghanistan, Nepal, Bhutan and Maldives) has significant military-political, economic and scientific and educational potential. The region has a population of more than 1,6 bln. people and the aggregate GDP (purchasing power parity) of the SAARC member-states has reached about 5 trillion US dollars in 2010. Two of the countries of South Asia India and Pakistan possess nuclear weapons and they are unofficial members of the Nuclear Club. The question is if this significant potential is fully utilized for the purpose of common security, stability and economic prosperity of the South Asian countries.

According to the SAARC Charter, "the objectives of the Association shall be:

- a) to promote the welfare of the peoples of South Asia and to improve their quality of life;
- b) to accelerate economic growth, social progress and cultural development in the region and to provide all individuals the opportunity to live in dignity and to realize their full potentials;
- c) to promote and strengthen collective self-reliance among the countries of South Asia;
- d) to contribute to mutual trust, understanding and appreciation of one another's problems;

- e) to promote active collaboration and mutual assistance in the economic, social, cultural, technical and scientific fields;
- f) to strengthen cooperation with other developing countries;
- g) to strengthen cooperation among themselves in international forums on matters of common interests; and
- h) to cooperate with international and regional organizations with similar aims and purposes.

Though according to the SAARC Charter, the member-states agreed to promote peace and friendship and amity in the region, the low level of political dialogue among the South Asian states makes quite difficult reaching that objective. The main source of military-political tension in the region is the contradictions and confrontation between India and Pakistan, which have negative impact on the peace, stability and economic integration of the region. There are not efficient mechanisms of conflict settlement within the frames of the SAARC. As for the ASEAN, at their first summit in 1976, ASEAN leaders signed the Declaration of ASEAN Concord and the Treaty of Amity and Cooperation, by which they set up a certain mechanism of conflict settlement between the member-states. Owing to the mentioned mechanism the ASEAN countries were able to a great extent exclude the involvement of external forces in the regional conflicts. However, in the case of South Asia, the territorial disputes and conflicts extended out of the regional frames, involving neighbouring countries, as China and the two superpowers the USA and the USSR. In particular, Pakistan makes continuous attempts to involve extra regional forces in the Kashmir conflict settlement process.

The economic integration within the SAARC also remains very slow, in spite of multilateral documents (Agreement on SAARC Preferential Trading Arrangement (1991), Agreement on South Asian Free Trade Area). It is incomparable with the efficient economic integration within the ASEAN frames, which accelerated economic growth of the South East Asian nations.

On the other hand, the SAARC summits play an important role, as on their sidelines political dialogue between the leaders of South Asian states takes place. In that way the organization promotes development of political cooperation between its members. The evidence of strengthening of the role of the SAARC in that direction is the decision of the SAARC 16<sup>th</sup> Summit in Thimphu on 28-29 April 2010 to form the South Asia Forum.

India realizes that the growth of the role and potential of the SAARC, its success as a comprehensive, valuable and efficient regional organization to a great extent depends on itself, as the biggest and key member of the SAARC. Nirupama Rao,

Foreign Secretary of the Ministry of External Affairs of India in her address at the International Institute for Strategic Studies in London on 27 June, 2011 mentioned that "India's enhanced profile in SAARC in recent years is based on an asymmetrical and non-reciprocal approach where we are willing to go the extra mile in order to strengthen regional cooperation. It is a political line, which is worthy of a state, aspiring to be the leading regional power.

In the conclusion we must note that there are a number of reasons to the inability of the organization to fully realize its potential. First of all, it is the tensed relations between the key members of the SAARC India and Pakistan and confrontation over the Kashmir conflict. On the other hand, there is not such a complex, multidimensional and deep conflict between any of the ASEAN member-states. The extra-regional power China is also involved in the conflict, which makes it more complicated. Moreover, since the Cold War period the USA and the USSR have also been actively involved in the regional military-political issues of the South Asia.

Another reason is that there is huge disproportion between India, the leading member of the SAARC and other member-states, which create problems in the process of regional integration, as Pakistan, Bangladesh express certain concerns that regional integration processes may lead to restriction of their sovereignty and establishment of India's political and economic domination in the regional issues. We should take into consideration that China in its turn pursues geopolitical and economic interests in the South Asia which may in certain sense contradict with those of India.

Nevertheless, the SAARC has wide prospects of development, which can be realised, if the countries of the region, first of all India and Pakistan express necessary political will and make an attempt to settle their contradictions through cooperation. The Indian leadership has regularly stated that it's ready to walk extra mile if Pakistan acts decisively against terrorism, doesn't allow using its territory as a safe haven for the terrorist organizations to plot attacks against India and brings all the perpetrators of the Mumbai terrorist attack in November 2008 to justice.

These demands and expectations from Pakistan are reasonable, positive and compromising and provide a real opportunity for Pakistan to revive the comprehensive dialogue with its neighbour. Here we must stress the importance of the determination of Islamabad to destroy the terrorist network on its territory, which corresponds to its own vital interests.

Deepening of trade and economic relations between the South Asian countries, poverty reduction and improvement of the social-economic conditions of the peoples of the member-states, development of the humanitarian ties will create favorable environment for settlement of the Kashmir conflict, border issues and other disputes

and make way for strengthening of the SAARC and its turning into an efficient regional organization.

## ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<sup>1</sup> Զանի որ մասնագիտական գրականության մեջ առավելապես օգտագործվում է կազմակերպության անգլերեն հապավումը տվյալ լեզվով (օրինակ՝ CAAPK), սույն հոդվածում ևս կօգտագործենք այդ հապավումը՝ հայերենով: Իսկ ԱՄԵԱՆ հապավումն արդեն իսկ տարածված է հայրենական մասնագիտական գրականության մեջ:

<sup>2</sup> ՍԱԱԲԿ-ի ստեղծման և զարգացման սկզբնական շրջանի մասին տե՛ս Partha S. Ghosh, *Cooperation and Conflict in South Asia*, New-Delhi, 1989, p. 8-14

<sup>3</sup> Central Intelligence Agency, *World Factbook*, [https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/wfbExt/region\\_sas.html](https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/wfbExt/region_sas.html).

<sup>4</sup> Հնդկաստանն ունի 80-100, իսկ Պակիստանը՝ 90-110 միջուկային մարտազինիկ: Այս մասին տե՛ս Stockholm International Peace Research Institute, *SIPRI Yearbook 2011*, Chapter 7, *World nuclear forces*, <http://www.sipri.org/yearbook/2011/07>.

<sup>5</sup> ՍԱԱԲԿ-ի պաշտոնական կայք, SAARC Charter, <http://www.saarc-sec.org/>.

<sup>6</sup> Chloe Choquier, *ASEAN and SAARC: Resolving Intra Regional Disputes*, Southeast Asia – Articles, #3135, 24 May 2010, Institute of Peace and Conflict studies.

<sup>7</sup> Հնդկաստանի ԱԳ մախարաթության պաշտոնական կայք, “Confronting Terrorism: the Challenge before India”, <http://www.meaindia.nic.in/mystart.php?id=100215778>.

<sup>8</sup> Syeda Sana Rahman, *Same, but Different?*, Comparing ASEAN and SAARC Frameworks, Institute of South Asian Studies (ISAS), ISAS Working Paper, No. 123, 7 March, 2010, p. 5

<sup>9</sup> Ibidem, p.7, John Baylis, Steve Smith and Patricia Owens, *The Globalization of World Politics: An Introduction to International Relation*, Fifth Edition, Oxford University Press, New-York 2011.

<sup>10</sup> ՍԱԱԲԿ պաշտոնական կայք, <http://www.saarc-sec.org/>.

<sup>11</sup> Տե՛ս նույն տեղում: ՍԱՊՏԱ-յի հիմնական սկզբունքներն էին՝ պայմանավորվող բոլոր կողմերի համար առավելությունների և արտոնությունների փոխադարձությունը, մաքսային բարեփոխումների շուրջ քայլ առ քայլ բանակցությունները, առավել թերզարգացած պայմանավորվող երկրների հատուկ կարիքների ճանաչումը և նրանց օգտին հատուկ արտոնյալ միջոցառումների իրականացումը, բոլոր տեսակի ապրանքների և արտադրանքի ներառումը համաձայնագրի մեջ:

<sup>12</sup> Տե՛ս նույն տեղում: ՍԱԱԲԿ-ի տնտեսական հարթության, կազմակերպության շրջանակներում բազմակողմ տնտեսական համագործակցության զարգացման գործընթացի և դրա առանձնահատկությունների մասին առավել մանրամասն տե՛ս S.N. Raghavan, Regional Economic Cooperation Among SAARC Countries, New Delhi, 1995.

<sup>13</sup> Mohsin S. Khan, Improving India-Pakistan Relations Through Trade, East Asia Forum, April 19, 2010; [www.eastasiaforum.org](http://www.eastasiaforum.org): Հարկ է նշել, որ 1948-1949թթ. Հնդկաստանին բաժին էր ընկնում Պակիստանի արտաքին առևտրի 70%-ը, իսկ Պակիստանին՝ Հնդկաստանի արտահանման 63%-ը: Մի շարք գիտահետազոտական հաստատությունների կողմից անցկացված ուսումնասիրությունները և երկու երկրների միջև տնտեսական համագործակցության մոդելավորումը ցույց են տվել, որ հնդկա-պակիստանյան առևտրաշրջանառության քնակագրոն ծավալը կարող էր լինել 20-50 անգամ ավելին: Տե՛ս մաս Հնդկաստանի առևտրի և արդյունաբերության նախարարության պաշտոնական կայքը՝ [www.commerce.nic.in](http://www.commerce.nic.in).

<sup>14</sup> Հնդկաստանի ԱԳՆ պաշտոնական կայք, “Opening Statement by Prime Minister at the 16<sup>th</sup> SAARC Summit”, <http://meaindia.nic.in/mystart.php?id=510115757&flg=1>.

<sup>15</sup> Pravakar Sahoo and Nisha Taneja, China’s growing presence in India’s neighbourhood, East Asia Forum, February 5, 2010, [www.eastasiaforum.org](http://www.eastasiaforum.org).

<sup>16</sup> “India and China set \$100 bln. trade target by 2015”, <http://www.bbc.co.uk/news/world-south-asia-12006092>: 2010թ. դեկտեմբերին Չինաստանի վարչապետ Վեն Ջիաբաոյի՝ Հնդկաստան կատարած այցի արդյունքներով կողմերը պայմանավորվածության են եկել մինչև 2015թ. երկկողմ առևտրաշրջանառության ծավալը հասցնել 100 մլրդ ԱՄՆ դոլարի:

<sup>17</sup> ԱՍԵԱՆ-ի պաշտոնական կայք, <http://www.asean.org/>.

<sup>18</sup> Հնդկաստանի վարչապետի երկկողմ հանդիպումների շրջանակը ներառում էր մասն Նեպալի և Բանգլադեշի վարչապետներին: Տե՛ս Հնդկաստանի ԱԳՆ պաշտոնական կայք, “Press Briefing by FS on PM’s engagements at Thimphu”, <http://meaindia.nic.in/mystart.php?id=510115761&flg=1>, Chloe Choquier, “ASEAN and SAARC: Resolving Intra Regional Disputes”.

<sup>19</sup> Հնդկաստանի ԱԳՆ պաշտոնական կայք, 16<sup>th</sup> SAARC Summit, 28-29 April 2010, Thimphu Silver Jubilee Declaration, “Towards a Green and Happy South Asia”, <http://meaindia.nic.in/meaxpsite/treatiesagreement/2010/30ta3004201002.pdf>.

<sup>20</sup> Տե՛ս նույն տեղում, “Address by FS on “Key Priorities for India’s Foreign Policy” at the International Institute for Strategic Studies” <http://meaindia.nic.in/mystart.php?id=550317787>.

<sup>21</sup> Տե՛ս նույն տեղում, Opening statements by EAM and Pak FM during Joint Press Interaction, <http://www.meaindia.nic.in/mystart.php?id=510116123&flg=1>: Հասկանալի-

կան է, որ միջազգային հանրությունը բարձր է գնահատել Հնդկաստանի կառավարության զուսպ և հավասարակշիռ արձագանքը Մոմբայի ահաբեկչությանը: Sb'u "The Telegraph", 08.12.2010, Calcutta, India, [http://www.telegraphindia.com/1101208/jsp/nation/story\\_13272954.jsp](http://www.telegraphindia.com/1101208/jsp/nation/story_13272954.jsp),  
The Economic Times, 19.02.2009, [http://articles.economictimes.indiatimes.com/2009-02-19/news/28401141\\_1\\_india-and-pakistan-afghanistan-richard-holbrooke-pakistan-army](http://articles.economictimes.indiatimes.com/2009-02-19/news/28401141_1_india-and-pakistan-afghanistan-richard-holbrooke-pakistan-army).

## ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

### ՉԻՆ-ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ

### ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ

### ՇՈՒՐԶ

Սույն հետազոտության ժամանակագրությունը սահմանափակվում է 2010թ. առաջին կեսով, իսկ նույն թվի երկրորդ կեսից ի վեր չին-եգիպտական հարաբերությունների ուսումնասիրությանը կանոդադառնա՞նք մեր հետագա աշխատանքներում:

Մինչ 1955թ. Կահիրեն ասիական տարածաշրջանին կարևորություն չէր տալիս իր արտաքին քաղաքականությունում, թեև Եգիպտոսն ամուր կապեր ուներ ասիական առանձին երկրների հետ՝ հատկապես Չմիացման շարժման շրջանակներում<sup>1</sup>: Եգիպտոսի Արաբական հանրապետության (ԵԱՀ) նախագահ Գամալ Աբդ ալ-Նասերն ու Չինաստանի Ժողովրդական հանրապետության (ՉԺՀ) վարչապետ Շոու Էնլայն առաջին անգամ հանդիպեցին 1955թ. ապրիլին Բանդունգի աֆրո-ասիական Չմիացման շարժման հիմնադիր գազաթնաժողովի ժամանակ<sup>2</sup>: 1955թ. ՉԺՀ-ը դատապարտեց Բաղդադի պակտի կազմակերպությանն անդամագրված երկրներին՝ բարեկամություն դրսևորելով միավորումից հրաժարվող մերձավորարևելյան (ՄԱ) պետություններին՝ մասնավորապես Եգիպտոսին<sup>3</sup>: ԱՄՆ-ի կողմից ՉԺՀ-ի շրջափակման և մեկուսացման քաղաքականության պայմաններում ՉԺՀ-ի աջակցությունը հակաիմպերիալիստական, հակազաղութային և ազգային ազատագրական շարժումներին լայնորեն ողջունվեց արաբական աշխարհում՝ հիմք դնելով փոխադարձ դիվանագիտական հարաբերությունների հաստատման գործընթացին<sup>4</sup>: Եգիպտոսն արաբական և աֆրիկական երկրներից առաջինը 1956թ. մայիսի 30-ին դիվանագիտական հարաբերություններ հաստատեց ՉԺՀ-ի հետ<sup>5</sup>: 1956թ. հուլիսին Մուեզի ջրանցքի ճգնաժամի ընթացքում Չինաստանը ԽՍՀՄ-ից հետո երկրորդ պետությունն էր, որը հանդես եկավ Եգիպտոսի նկատմամբ Անգլիայի, Ֆրանսիայի և Իսրայելի ագրեսիան դատապարտող հայտարարությամբ և առաջարկեց իր ա-

ջակցությունը<sup>6</sup>: Չինաստանը Եգիպտոսին սատարեց մահ արաբ-իսրայելական 1967թ. Վեցօրյա պատերազմի ընթացքում<sup>7</sup>:

1950-ականների վերջերից ՉԺՀ-ի ղեկավարության մոտ նկատվեց ազգայնական և հակախորհրդային, ուլտրաձախ միտումներ<sup>8</sup>, որը որոշ չափով ազդեց ՉԺՀ-ի և ՄԱ-ի երկրների, այդ թվում Եգիպտոսի հետ հարաբերությունների վրա<sup>9</sup>: Չինաստանի մշակութային հեղափոխության տարիներին (1966-1976թթ.), ավելի կոնկրետ 1966-68թթ., ՉԺՀ-ի և ՄԱ-ի երկրների միջև բարձր մակարդակի փոխայցեր տեղի չունեցան, և Պեկինը ետ կանչեց այդ երկրներից իր դեսպաններին, բացառությամբ Եգիպտոսից<sup>10</sup>:

1970-ականների սկզբին Չինաստանի արտաքին քաղաքականության ուղեգիծ ընդունվեց երկու գերտերությունների՝ ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի գերիշխանության դեմ պայքարը: Մինչդեռ 1972թ. Պեկինի և Վաշինգտոնի միջև ուղղակի կապերի հաստատումից հետո ԱՄՆ-ի հետ մերձեցումը դիտվեց իբրև անհրաժեշտ փոխզիջում և Պեկինի արտաքին քաղաքականության հիմնանպատակ՝ «առավել վտանգավոր կայսերապետության» սոցիալ-իմպերիալիզմի» դեմ պայքարի նպատակով<sup>11</sup>: Պեկինի արտաքին քաղաքականության տիրապետող հայեցակարգ դարձավ ԽՍՀՄ-ի դեմ «միասնական ճակատի ստեղծման ռազմավարությունը», առավել մեծ կարևորություն տրվեց կապիտալիստական երկրների, հատկապես ԱՄՆ-ի հետ հարաբերությունների բարելավմանը՝ իբրև ռեալ սոցիալիզմի դեմ պայքարի գործընկերոջ<sup>12</sup>: Չինացի առաջնորդները միաժամանակ զարգացրեցին «Երրորդ աշխարհի» տեսությունը, և ՉԺՀ-ն, արաբական երկրներին դիտելով իբրև ՄԱ-ում ԽՍՀՄ-ի ծավալապաշտությունը կասեցնող լծակ, համակողմանի հարաբերություններ սկսեց զարգացնել արաբական բոլոր երկրների հետ<sup>13</sup>: Պեկինը սատարեց ԵԱՀ-ի և Իսրայելի միջև Քենդի Դևիդի անջատ պայմանագրի կնքման գործընթացը՝ միաժամանակ խուսափաբելով ԵԱՀ-ի և «Ամբողջական ու դիմակայության ճակատի» մեջ մտնող երկրների միջև՝ իր դիրքորոշումը հիմնավորելով նոր զինված հակամարտությունների կանխարգելման ձգտումով<sup>14</sup>: ՉԺՀ-ը սատարում էր պաղեստինախորայելական հակամարտության կարգավորման գործընթացից ԽՍՀՄ-ին բացառելու ուղղությամբ Մադաթի որդեգրած քաղաքականությունը<sup>15</sup>:



1978 և 1985թթ. տնտեսության զարգացմանն ուղղված շինական բանվորությունների ու բաց ռազմավարության որդեգրմամբ Պեկինը հրաժարվեց ՉԺՀ-ի և տարբեր սոցիալական համակարգ և գաղափարախոսություն ունեցող պետությունների միջև «տարանջատման» սկզբունքից<sup>16</sup>։ Չինաստանը որդեգրեց արաբական բոլոր երկրների հետ քաղաքական, տնտեսական և մշակութային հարաբերությունների հաստատման քաղաքականություն։ Դեռ ավելին, «Սառը պատերազմի» ավարտից հետո Պեկինի և ՄԱ-ի երկրների միջև հարաբերությունները զարգացման նոր փուլ մտան<sup>17</sup>, որն առավելապես պայմանավորվեց ՉԺՀ-ի ներքին հզորության աճով և միջազգային թատերաբեմում վերջինիս զբաղեցրած բարձր դիրքով ու կարգավիճակով<sup>18</sup>։

20-21-րդ դարերի սահմանագծին Եգիպտոսի արտաքին քաղաքականության ակտիվ վեկտորներից մեկը դարձավ Արևելյան Ասիայի առաջատար երկրների, մասնավորապես ասիական մայրցամաքի խոշորագույն տերություն ՉԺՀ-ի հետ համագործակցությունը, որը մեծապես կապված էր ասիական տարածաշրջանի երկրների տնտեսական աճի տեմպերով և այդ երկրների հետ առևտրատնտեսական և քաղաքական սերտ կապերի հաստատման հարցում ԵԱՀ-ի շահագրգռվածությամբ<sup>19</sup>։ Ընդամենը մեկ տասնամյակում Պեկինը վերածվեց ԵԱՀ-ի տնտեսության զարգացմանն օժանդակող այլընտրանքային աղբյուրի, մի դեր, որն ավանդապես կատարել է ԱՄՆ-ը, Եվրոպան և արևմտավար այնպիսի ինստիտուտներ, ինչպիսիք են Համաշխարհային Բանկը (ՀԲ) ու Արժույթի Միջազգային Հիմնադրամը (ԱՄՀ)<sup>20</sup>։ Սա բացատրվում էր նաև վերջին տարիներին վերոնշյալ միջազգային կառույցներում, ինչպես նաև Առևտրի Համաշխարհային կազմակերպությունում (ԱՀԿ) ՉԺՀ-ի կշռի և նրա դերի աճով<sup>21</sup>։ Հարկ է նշել, որ Եգիպտոսն աջակցեց ԱՀԿ-ին անդամագրվելու ուղղությամբ Չինաստանի ջանքերը<sup>22</sup>։ Երկու երկրները սկսել են համակարգել իրենց դիրքորոշումները միջազգային կազմակերպություններում և առևտրատնտեսական գործերում, համատեղ ջանքերով պաշտպանում զարգացող երկրների շահերը տնտեսական գլոբալիզացիայի և առևտրի ազատականացման գործընթացներում<sup>23</sup>։

Եգիպտական վերլուծաբանների համաձայն՝ ՉԺՀ-ի տնտեսական քարեփոխումների հարուստ փորձը եգիպտացիների և արաբական ողջ

աշխարհի կողմից ընդօրինակման կարիք ունի<sup>24</sup>, նամանավանդ որ Չինաստանը պատմական և սոցիալական ավանդույթներով շատ ավելի մոտ է համարվում ՄԱ-ին<sup>25</sup>: Պատահական չէ, որ եգիպտաչինական հարաբերությունները հատուկ տեղ են զբաղեցնում չին-արաբական երկխոսության, մասնավորապես 2004թ. հունվարին հիմնադրված Չին-արաբական համագործակցության համաժողովի շրջանակներում<sup>26</sup>: Եգիպտոսը ձգտում է Պեկինի առևտրային ռազմավարության անքակտելի մաս կազմել<sup>27</sup> և վերջինիս հետ «հատուկ» առևտրատնտեսական հարաբերություններ հաստատել, որոնք, բացի ներկրումից ու արտահանումից, պետք է ընդգրկեն ներդրումների ու համագործակցության այլ ոլորտներ<sup>28</sup>:

Մինչ 2005-2006թթ. Եգիպտոսի գլխավոր առևտրային գործընկերը ԵՄ-ն էր, երկրորդ և երրորդ գործընկերները՝ համապատասխանաբար ԱՄՆ-ն ու Միջին Արևելքի երկրները: Եգիպտոսի և Չինաստանի միջև առևտրի դինամիկ զարգացման շնորհիվ ՉԺՀ-ը 2006թ. դարձավ ԵԱՀ-ի առևտրային երրորդ գործընկերը<sup>29</sup>: Եգիպտական բարձրաստիճան պաշտոնյաների և վերլուծաբանների կանխատեսումների համաձայն՝ 2010-12թթ. ՉԺՀ-ը պետք է փոխարինի ԱՄՆ-ին Եգիպտոսի առևտրային առաջին գործընկերոջ կարգավիճակում<sup>30</sup>, երկու երկրների միջև ապրանքաշրջանառության ծավալը պետք է կազմի 5 մլրդ ԱՄՆ դոլար<sup>31</sup>, իսկ Եգիպտոս կատարվող չինական ներդրումները կհասնեն 2 մլրդ ԱՄՆ դոլար<sup>32</sup>: Նման կանխատեսման հանդիպում ենք նաև Ջարգացման աֆրիկյան բանկի և Միջազգային տնտեսական համագործակցության կազմակերպության՝ Աֆրիկայի տնտեսության զարգացման հեռակարգների վերաբերյալ 2007թ. հրապարակած զեկույցում<sup>33</sup>:

ՉԺՀ-ն արդեն ուժգին մրցակցության մեջ է ամերիկյան և արևմտաեվրոպական սպառողական ապրանքներ և արտադրության միջոցներ առաքող ընկերությունների հետ: Նշենք, որ Սուեզի ջրանցքով դեպի Եվրոպա արտահանման և վերարտահանման ծավալներն ավելացնելու, հետևաբար տարանցիկ ծախսերը կրճատելու նպատակով Պեկինն ակտիվ բանակցություններ էր վարում Իտալիայի և Եգիպտոսի հետ<sup>34</sup>: Փաստորեն, չին-եգիպտական ռազմավարական համագործակցությունը չի սահմանափակվում երկկողմ շրջանակներով, այլ ծառայում է ԵՄ և Աֆրիկայի երկրների հետ կապերի ակտիվացմանը՝ շնորհիվ ԵԱՀ-ի աշ-

խարհագրական դիրքի առավելության օգտագործման<sup>35</sup> և Եվրոպայի, Աֆրիկայի ու ԱՄՆ-ի հետ Կահիրեի ստորագրած մի շարք առևտրային պայմանագրերի<sup>36</sup>:

Նշենք, որ եգիպտաչինական հարաբերությունները հատուկ տեղ են զբաղեցնում չին-աֆրիկյան երկխոսության շրջանակներում<sup>37</sup>: Չինաստանի և Աֆրիկայի երկրների միջև կենսական կարևորություն ունեցող քաղաքական, տնտեսական, գիտամշակութային, տեխնոլոգիական, հատկապես էներգետիկ ոլորտներում հաստատված սերտ համագործակցությունը նպաստում է ՉԺՀ-ի համար ռազմավարական կարևորություն ունեցող տարածաշրջանում Պեկինի ներկայության ու ազդեցության ընդլայնմանը<sup>38</sup>: ԵԱՀ-ը փորձում է իր հերթին այդ գործընթացից առավելազույն օգուտ քաղել<sup>39</sup>:

Հարկ է նշել, որ տնտեսական օգնության, ներդրումների և քաղաքական աջակցության ձևով «soft power»-ի իրականացումը Պեկինի «մեծ մերձավորարևելյան քաղաքականության» անկյունաքարն է<sup>40</sup>: Ուստի պատահական չէ, որ երկու երկրների միջև հավասարակշռված հարաբերությունների զարգացման հիմնական նախապայմանն առևտրատնտեսական և ներդրումային համագործակցությունն է<sup>41</sup>: Փաստենք, որ երկկողմ ներդրումների անվտանգության ապահովման նպատակով 1994թ. Եգիպտոսի և Կահիրեի միջև պայմանագիր է ստորագրվել ներդրումների փոխադարձ խրախուսման և պաշտպանության վերաբերյալ՝ փոխադարձ կապիտալ ներդրումների խտրականության բացառման հիմքերի վրա<sup>42</sup>: Երկու երկրների միջև առևտրային փոխանակությունը կանոնակարգվում է Կահիրեում 1995թ. մարտի 25-ին ստորագրված առևտրային փոխանակության և տնտեսական համագործակցության վերաբերյալ ստորագրված պայմանագրով, որի համաձայն ստեղծվել է նաև առևտրային փոխանակության և տնտեսական համագործակցության խնդիրներով զբաղվող համատեղ հանձնաժողով: Իսկ 1999թ. ապրիլին ԵԱՀ-ի և ՉԺՀ-ի միջև ռազմավարական համագործակցության հաստատման վերաբերյալ համատեղ հուշագրի ստորագրումը լրացուցիչ խթան է ծառայում երկու երկրների գործարար շրջանակների միջև մի շարք պայմանագրերի կնքման գործում<sup>43</sup>:

Գործնականում չին-եգիպտական առևտրի արագ զարգացմանը նպաստեց համաշխարհային շուկաներում չինական ապրանքների մրցու-

նակության աճը: Բարձրորակ և համեմատաբար էժանագին չինական ապրանքները բարձր ժողովրդականություն են վայելում մաս եզիպտացի սպառողների շրջանում, ուստի Եգիպտոսը մտադիր է ավելացնել ՉժՀ-ից ներկրման ծավալները<sup>44</sup>: Մինևոյն ժամանակ Եգիպտոսի համար չափազանց մտահոգիչ է չինական ընդարձակ շուկաներում եգիպտական ապրանքների արտահանման ծավալների աճի խնդիրն ու ՉժՀ-ի հետ առևտրի բացասական սալդոյի կրճատումը (1/10 հարաբերակցությամբ՝ հոգուտ ՉժՀ-ի)<sup>45</sup>: Առևտրային հակակշռի վերացման նպատակով Պեկինը եգիպտական ձեռներեցներին առաջարկում է հայրենական արտադրանքը ներկայացնել Աֆրիկյան ապրանքների ցուցահանդեսում, Չինաստանի ներմուծման և արտահանման (Կանտոնի) և Չինաստանի ներդրումային և առևտրային միջազգային տոնավաճառներում<sup>46</sup>: Պեկինն անգամ չինացի առևտրականներին եգիպտական ապրանքների գնման նպատակով դրամաշնորհներ է տրամադրում<sup>47</sup>: Համատեղ ջանքերի շնորհիվ 2008թ. ԵԱՀ-ի արտահանումը ՉժՀ աճեց 78.6%-ով, և ՉժՀ-ը դարձավ Եգիպտոսի արագ աճող արտահանման շուկաներից մեկը<sup>48</sup>:

Եգիպտոսը Չինաստան հիմնականում արտահանում է մավր, մարմար, գրանիտ, բամբակ, արդյունաբերական գորգեր, խեցեգործական և սանիտարական իրեր, քաթան, բյուրեղապակի, սպակի և այլն: ՉժՀ-ը ԵԱՀ հիմնականում արտահանում է բակլա, քիմիական նյութեր, էլեկտրական տեխնիկա և դրանց բաղադրիչներ, մանկական խաղալիքներ, սպորտային կոշիկներ, կտորեղեն, հագուստ և այլն<sup>49</sup>:

2002թ. հունվարին Եգիպտոսի նախագահի՝ ՉժՀ կատարած այցի ընթացքում կողմերի միջև մի շարք պայմանագրեր ստորագրվեցին տնտեսության, մավթի, տուրիզմի, միջուկային էներգիայի, կրթության, գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցության վերաբերյալ: Երկու երկրների միջև ազատ ապրանքաշրջանառության վերաբերյալ համաժողովի բացման և Եգիպտաչինական գործարար խորհրդի ստեղծման արարողությամբ<sup>50</sup>: 2002թ. ապրիլին երկու երկրների միջև պայմանագրեր ստորագրվեցին տնտեսական և տեխնոլոգիական համագործակցության շուրջ, փոխընդման հուշագիր ստորագրվեց գյուղատնտեսության՝ մասնավորապես ցեղային անասնապահության ոլորտում համագործակցության շուրջ<sup>51</sup>:

2004թ. հունվարին ՉԺՀ մախագահ Հու Չին-տաոյի՝ Եգիպտոս կատարած այցի ընթացքում կողմերի միջև փոխըմբռնման հուշագրի ստորագրվեց տեղեկատվական ոլորտում համագործակցության և Եգիպտոսին չինական արտադրության տեխնոլոգիաներ, Սուեզի ջրանցքի հյուսիս-արևմտյան տնտեսական գոտին օգտագործելու մպատակով ցածր տոկոսադրույքով փոխառություն տրամադրելու վերաբերյալ<sup>52</sup>: Նշենք, որ ՉԺՀ-ի մախագահին ուղեկցում էր Չինաստանի Տյանցզին քաղաքի առևտրային պատվիրակությունը: Տյանցզինը Եգիպտոսում հիմնադրել էր 14 ձեռնարկություն և այցի ընթացքում ցանկություն էր հայտնում եգիպտական կողմի հետ շարունակել Սուեզի տնտեսական գոտու 3-րդ բլոկի շահագործման աշխատանքները<sup>53</sup>: Նշենք, որ Տյանցզինի Տնտեսական զարգացման գոտու ներդրումային ընկերությունը (TEDA) մասնական զարգացման գոտու ներդրումային համագործակցության գոտու կառուցման և զարգացման աշխատանքներին<sup>54</sup>:

1990-ականների վերջերին Եգիպտոսում հայտնաբերված բնական գազի խոշոր պաշարները վերջինիս թույլ տվեցին մտնել տվյալ տեսակի ածխաջրածնային հումքի արդյունահանման առաջատարների խումբը ոչ միայն ՄԱԻ տարածաշրջանում, այլ ողջ աշխարհում<sup>55</sup>: ՉԺՀ-ն իբրև 1993 թվից վառելիք ներկրող երկիր, ԵԱՀ-ի հետ սկսեց համագործակցել մասնական և ծանր մավթի ոլորտներում՝ հին մավթահորերում օգտագործվող տեխնոլոգիաների արդյունավետությունը բարձրացնելու և մավթաքիմիական արդյունաբերության համար սարքավորումներ պատրաստելու մպատակով<sup>56</sup>: 2004թ. հունվարին ԵԱՀ-ում երկու երկրների մախագահները համաձայնության եկան ԵԱՀ-ում և ՄԱԻ-ի ու Աֆրիկայի այլ երկրներում մավթահորերի փորման և ծառայությունների մատուցման մպատակով համատեղ ձեռնարկություններ հիմնելու շուրջ, որի վերաբերյալ պայմանագրի ստորագրվեց մույն թվի օգոստոսի վերջին: Եգիպտական կողմը հույս հայտնեց, որ Չինաստանը կավելացնի Եգիպտոսի մավթագազային ոլորտում իրականացվող ներդրումները<sup>57</sup>:

2006թ. հունիսին Չինաստանի վարչապետ Վեն Չիաբաոյի՝ Եգիպտոս կատարած այցի ընթացքում կողմերի միջև ստորագրվեց «Չինաստանի և Եգիպտոսի միջև խորացված ռազմավարական համագործակցության հարաբերության իրականացման ծրագիր»: Այն ընդգրկում էր առևտրատնտե-

սակամ համագործակցության երկկողմ պայմանագրի փաթեթ, նավթագազային սեկտորներում և հեռահաղորդակցության ոլորտում համագործակցության վերաբերյալ համաձայնագիր, տեխնիկա-տնտեսական համագործակցության վերաբերյալ միջկառավարական համաձայնագիր<sup>58</sup>:

2006թ. սեպտեմբերին Պեկինում կողմերի միջև էներգետիկ և գիտատեխնիկական ոլորտների համագործակցության շուրջ 2 մլրդ ԱՄՆ դոլարի պայմանագրեր ստորագրվեց<sup>59</sup>: 2006թ. նոյեմբերի 6-ին Պեկինում ՉԺՀ-ի Կոմերցիայի նախարարության և ԵԱՀ-ի Առևտրի և արդյունաբերության նախարարության միջև Չինաստանի՝ իբրև լիակատար շուկայական տնտեսությամբ երկրի կարգավիճակի ճանաչման վերաբերյալ հուշագիր և նշյալ նախարարությունների միջև երկկողմ առևտրատնտեսական համագործակցության ամրապնդման վերաբերյալ հուշագիր ստորագրվեց<sup>60</sup>: 2006թ. երկրորդ կեսին Եգիպտոսի առևտրի նախարարությունը ՉԺՀ-ի հետ առևտրատնտեսական հարաբերությունների ամրապնդման նպատակով հատուկ խումբ ստեղծեց: Ուրշվեց ԵԱՀ-ից ՉԺՀ արտահանման աճը խթանելու նպատակով համատեղ մոր ծրագրեր մշակել բամբակի, մարմարի, շինանյութի և նավթաքիմիական ոլորտում<sup>61</sup>: Նշենք, որ 2009թ. նոյեմբերի 6-7-ը Հոսնի Մուբարաքի՝ ՉԺՀ կատարած պաշտոնական այցի շրջանակներում ևս հատուկ տեղ էր զբաղեցնում «տնտեսական օրակարգը»<sup>62</sup>:

Չինաստանը ներդրումներ է կատարում Եգիպտոսի հեռահաղորդակցության, շինարարության, գյուղատնտեսության, ծառայությունների և զբոսաշրջության ոլորտներում<sup>63</sup>: Պեկինը խորախուսում է Եգիպտոս քիմիական, տեքստիլ, էլեկտրոնային, տեղեկատվական-տեխնիկական և քեթև արդյունաբերության, նավթային և շինանյութի ոլորտներում իրականացվող ներդրումները<sup>64</sup>: Հարկ է նշել, որ ԵԱՀ-ում աշխատուժի ու էներգյակիրների համեմատաբար ցածր ինքնարժեքը չինական ընկերությունների կողմից կատարվող կապիտալ ներդրումների համար բանալաստ հող է հանդիսանում<sup>65</sup>:

2005թ. տվյալներով եգիպտական և չինական ընկերություններն առավել քան 85 համատեղ ձեռնարկություն են հիմնել, որտեղ չինական ներդրումները կազմել են 56 մլն ԱՄՆ դոլար<sup>66</sup>: 2006թ. դրությամբ 220 մլրդ ԱՄՆ դոլարի ներդրմամբ Չինաստանը 186 նախագիծ է իրակա-

նացրել ԵԱՀ-ում<sup>67</sup>: 2006թ. չինական ձեռնարկությունները 300 մլն ԱՄՆ դոլարի ներդրում են իրականացրել եգիպտական մավթի և կապի ոլորտներում՝ Եգիպտոսին տրամադրելով ոչ միայն համապատասխան միջոցներ ու տեխնոլոգիաներ, այլև ստեղծելով 6000 աշխատատեղ<sup>68</sup>: 2009թ. չինական 600 ձեռնարկություններ ԵԱՀ-ում գործվածքի, հագուստի, մավթային ծառայությունների, հեռահաղորդակցության, սննդի մշակման, մեքենաշինության ոլորտում 500 մլն ԱՄՆ դոլարի ներդրումներ են կատարել: Կառուցվել է 58 գործարան, ստեղծվել՝ 3000 աշխատատեղ<sup>69</sup>:

Երկկողմ հարաբերությունների զարգացմանը զուգահեռ, ավելանում է Եգիպտոս այցելող չինացի զբոսաշրջիկների թիվը<sup>70</sup>, որոնց հոսքը մեծացնելու և տուրիզմի ոլորտում առավել խոր և սերտ համագործակցելու նպատակով երկու երկրների միջև 2001թ. հոկտեմբերին պայմանագիր է ստորագրվել<sup>71</sup>: Եթե 2005թ. «գուրգերի երկիր» է այցելել ՉԺՀ-ի շուրջ 50.000 քաղաքացի, ապա 2015թ. այդ թիվը նախատեսում է հասցնել 1 մլն<sup>72</sup>: Երկու երկրների միջև տուրիզմի, առևտրային և գործարար կապերի խորացման նպատակով 2007թ. Եգիպտական ավիատոլիները բացեցին Կահիրեից Գուանդուն չվերթը, նախկինում շաբաթը 3 թռիչքը դարձնելով 4, իսկ Կահիրե-Պեկին ուղիղ չվերթը՝ շաբաթը երեք անգամ<sup>73</sup>:

Հարկ ենք համարում նշել, որ չնայած 2008թ. ֆինանսական ճգնաժամին, որը լուրջ վնաս հասցրեց ինչպես զարգացող, այնպես էլ զարգացած երկրներին, այդ թվում ՉԺՀ-ին և ԵԱՀ-ին, երկու երկրների միջև առևտուրը 2010թ. 35.77% աճ է ապահովել՝ հասնելով 5 մլրդ ԱՄՆ դոլարի<sup>74</sup>. այդպիսով արդարացնելով այդ ուղղությամբ կողմերի տածած ակնկալիքներն ու կանխատեսումները: Այդ է թերևս պատճառը, որ երկու երկրները ձգտում են առավել խորացնել երկկողմ համագործակցությունը՝ գլոբալ տնտեսական և ֆինանսական կայունության ապահովման, միջազգային ֆինանսական համակարգում զարգացող երկրներին ներկայացնելու և նրանց խնդիրները բարձրացնելու ուղղությամբ:

Փաստորեն, չին-եգիպտական հարաբերությունները դուրս են եկել առևտրատնտեսական համագործակցության շրջանակներից՝ ընդունելով ռազմավարական գործընկերության վերաճող աշխարհաքաղաքական ծավալներ:



## RESUME

AGHAVNI HARUTYUNYAN

### *ON SINO-EGYPTIAN TRADE-ECONOMIC COOPERATION*

Egypt is the first Arab and African country to declare the establishment of diplomatic relations with China in 1956, and the first to come into strategic cooperative relations with China in 1999. Egypt signed the Deepening Bilateral Strategic and Cooperative Relations with China and memorandum which recognized the full market status of Chinese economy in 2006.

Beijing is fashioning itself as an alternative source of economic development aid, a role traditionally dominated by the United States, Europe and Western-led institutions such as the World Bank and International Monetary Fund. Two countries are coordinating their positions in international trade and economic affairs and organizations work together to protect the interests of developing countries in the process of economic globalization and trade liberalization. Egypt supported China to join the WTO.

China attaches special importance to mutual cooperation with Egypt, which is considered the largest trade partner to China in the Middle East. Egypt was seeking to become an inseparable part of China's trading strategy and hopes to establish «special» economic and trade relations with China, which will not only be limited to import and export, but will include an investments and cooperation in all fields. Cairo sees China as a successful model of modernization and Egypt should borrow the successful experience of China during its economic development. Since the volume of bilateral trade is growing at 30-40 % over the next 8-9 years, Egypt is keen on making China its number one trade partner in 2012 replacing the US as its largest trading partner.

Sino-Egyptian strategic cooperation is not limited to the bilateral framework, it serves to the intensification of contacts between China and the EU and Africa through the use of geographical advantages of Egypt and the trade and economic contracts Egypt signed with these countries. Egypt is aiming to increase its share of Chinese exports and re-exports to Europe through the Suez Canal by lowering transit fees. China and Egypt maintain cooperation under the frameworks of China-Arab Cooperation Forum and Forum on China-Africa Cooperation, which is an important part of the bilateral strategic cooperative relations.

Chinese products are of good quality and reasonable prices, and that makes it competitive, so Egypt will increase imports of goods from China. Despite an



expansion in bilateral trade, business relations continue to be characterized by a large Egyptian trade deficit. Egypt is exerting efforts to reach Egypt's exports to the Chinese market aiming at reducing the negative balance in trade with China. In an effort to placate Cairo's concerns over the large trade imbalance, China is trying to take all positive and effective measures to encourage imports from Egypt, offering subsidies to Chinese traders to encourage the purchase of Egyptian goods, as well as creating favorable conditions for bilateral trade.

The important form of cooperation is the establishment of numerous joint Egyptian-Chinese enterprises to meet the needs of the Egyptian market and export of certain goods in the Arab, African and European markets. The investment environment in Egypt over the past few years has improved markedly. In 1994 Egypt and China signed an agreement on reciprocal promotion and protection of investments, on the basis of non-discriminatory of mutual investments. Egyptian government hopes that Egyptian cheap labor force and relatively low-cost price of energy will create a favorable basis for Chinese companies to invest and do business in Egypt.

Beijing encourages the intensification of investment by Chinese enterprises in the chemical, textile, electronics, information technology and light industry of Egypt. China has spearheaded a number of joint ventures with Egyptian businesses, especially in the oil and natural gas sectors, namely projects dealing with oil and gas exploration, enhancing the productivity of old wells, and manufacturing equipment for the hydrocarbon industry. With the initiative of the Chinese government, TEDA is building projects of strategic importance such as Suez Economic and Trade Cooperation Zone. Up till 2009, there are nearly 600 Chinese enterprises investing in Egypt, covering the areas of textile and garment, oil services, telecommunication, food processing, and machinery manufacturing, with the total investment exceeding US \$500 million, 58 factories and enterprises built, and generating over 3000 jobs. Despite the financial crises of 2008, which seriously harmed especially the economies of developing countries, including China and Egypt, trade between the two countries increased 35,77% and reached 5 billion U.S. dollars. China and Egypt hope to further deepen bilateral economic and trade cooperation and to strengthen coordination in promoting the reform of the international financial system. To this end, they maintain close communication and work together to ensure global economic and financial stability and increase the representation and voice of developing countries in the international financial system.

- <sup>1</sup> Ibrahim Nafie, East of Egypt, Al-Ahram Weekly, Issue No. 423, 1-7 April, 1999, <http://weekly.ahram.org.eg/1999/423/op1.htm>.
- <sup>2</sup> Chris Zambelis, Down the River Nile: China Gains Influence in Egypt, China Brief, Vol. 5, Issue: 22, 1969, The Jamestown Foundation, 31.12.2005; People's Daily, 29.05.2001.
- <sup>3</sup> Guang Pan, China's Success in the Middle East, The Middle East Quarterly, Vol. IV, No. 4, Dec. 1997, pp. 35-40.
- <sup>4</sup> Kuangyi Yao, Development of Sino-Arab Relations and the Evolution of China's Middle East Policy in the New Era, Journal of Middle Eastern and Islamic Studies (in Asia), Vol. 1, No. 1, 2007, p. 4.
- <sup>5</sup> Китайская Народная Республика. Политическое и экономическое развитие в 1973 году, М., 1975, стр. 289.
- <sup>6</sup> Li Jie, Reflections on New China's Diplomacy in the Past 60 Years, China International Studies, CIIIS, Beijing, September/October 2009, p. 12; Yang Fuchang, China-Arab Relations in the 60 Years' Evolution, Journal of Middle Eastern and Islamic Studies (in Asia), Vol. 4, No. 1, 2010, p. 4. ԳԺՀ-ի կառավարությունը որոշեց ԵԱՀ-ին 20 մլն շվեյցարական ֆրանկի անհատույց օգնություն տրամադրել:
- <sup>7</sup> David H. Shinn, China's Approach to East, North and the Horn of Africa, Elliott School of International Affairs, The George Washington University, 21.07.2005, p. 13.
- <sup>8</sup> Michael G. Roskin, Nicholas O. Berry, The New World of International Relations, New Jersey, 2002, p. 90; Политика США в Азии. Американо-китайские отношения, М., 1977, стр. 223.
- <sup>9</sup> Wang Jinglie, Review and Thoughts over the Relationship between China and the Middle East, Journal of Middle Eastern and Islamic Studies (in Asia), Vol. 4, No. 1, 2007, p. 20; Guang Pan, նշվ. աշխ., էջ 35-40:
- <sup>10</sup> Тео Зоммер, "Китайская карта": 900-миллионный народ на пути к 2000 году, М., 1980, стр. 264; Wang Jinglie, նշվ. աշխ., էջ 20:
- <sup>11</sup> Политика США в Азии, նշվ. աշխ., էջ 224-226; Michael G. Roskin, Nicholas O. Berry, նշվ. աշխ., էջ 238:
- <sup>12</sup> Кауфман Б., К вопросу о внешнеполитической стратегии и тактике КНР. Гегемонистская политика Китая-угроза народам Азии, Африки и Латинской Америки, М., 1981, стр. 54.

<sup>13</sup> Kuangyi Yao, նշվ. աշխ., էջ 4-11: 1970-ականներին Եգիպտոսը Չինաստանից ստացել է 106 մլն ԱՄՆ դոլարի օգնություն: Այս մասին տե՛ս Скородумов А.В., Экономические отношения КНР со странами Азии, Африки и Латинской Америки, Гегемонистская политика Китая-угроза народам Азии, Африки и Латинской Америки, М., 1981, стр. 158.

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 164; ТАСС. БПИ, No. 236, 5.12.1979г., стр. 42.

<sup>15</sup> Щербухина И., Отношения Египта и Китая после октябрьской войны 1973г., Специальный Бюллетень, 4 (201), М., 1978, стр. 93-96.

<sup>16</sup> Kuangyi Yao, նշվ. աշխ., էջ 4-11:

<sup>17</sup> Massoud Daher, China and the Middle East: Establishing a New Partnership, Journal of Middle Eastern and Islamic Studies (in Asia) Vol. 3, No. 1, 2009, p. 19.

<sup>18</sup> Xuewen Qian & Huanmin Li, Maintaining Cooperation within Competition: The Inevitable Path of China's Energy Cooperation in the Middle East, The Journal of Middle Eastern and Islamic Studies (in Asia), Vol. 3, No. 1, 2009, p. 52.

<sup>19</sup> Արևելյան Ասիայի երկրները, մասնավորապես ՉԺՀ-ը վերջին երկու տասնամյակին ցուցաբերում են ոչ պակաս, քան 8-10% տնտեսական աճ: Այս մասին տե՛ս Хантингтон С., Столкновение цивилизаций, М., 2003, стр. 151-152; Massoud Daher, նշվ. աշխ., էջ 19:

<sup>20</sup> Chris Zambelis, Public Diplomacy in Sino-Egyptian Relations, China Brief, Vol. 7, Issue: 7, The Jamestown Foundation, 18.05.2007.

<sup>21</sup> Weijian Li, The Transformation of the International System and China's Positive Diplomacy in the Middle East, Journal of Middle Eastern and Islamic Studies (in Asia), Vol. 3, No. 1, 2009, p. 29.

<sup>22</sup> Egypt Signs Cooperation Agreements with China, Arabic News, 4.23.2002. <http://www.arabicnews.com/ansub/Daily/Day/020423/2002042331.html>.

<sup>23</sup> Китай и Египет подписали Основные положения по выполнению углубления стратегического сотрудничества, Жэнминь Жибао онлайн, 19.06.2006. <http://russian.people.com.cn/31520/4497823.html>.

<sup>24</sup> Al-Ahram Weekly, Issue No. 819, 9-15 Novemder, 2006.

<sup>25</sup> Jon B.Alterman and John W.Garver, The Vital Triangle. China, The United States, and The Middle East, Center for Strategic and International Studies, Washington, DC., 2008, p. 82; Jon B. Alterman, China's Soft Power in the Middle East. Chinese Soft Power and its Implications for the United States, Center for Strategic and International Studies, Washington D.C., March 2009, p. 72.

<sup>26</sup> Liu Huaqiu, Brilliant Achievements and Great Innovation. China's Diplomatic Work in the 30 Years of Reform and Opening Up, China International Studies, Beijing, Winter 2008, p. 10.

<sup>27</sup> Министр торговли Египта: страна стремится к созданию особых торговых отношений с Китаем, Жэнминь Жибао онлайн, 05.09.2006. <http://russian.people.com.cn/31520/4779077.html>.

<sup>28</sup> “Китайский бум” охватил Египет, Жэнминь Жибао онлайн, 17.10.2006. <http://russian.people.com.cn/31520/4925542.html>.

<sup>29</sup> Министр Египта о мировом значении развития Китая, Жэнминь Жибао онлайн, 12.10.2006. <http://russian.people.com.cn/31520/4908009.html>; Egypt. African Economic Outlook, AfDB/OECD 2007, 2007, p. 243. <http://www.oecd.org/dataoecd/26/6/38562553.pdf>. 2005-2006թթ. Եգիպտոսի գլխավոր առևտրային գործընկերներն էին ԵՄ (11.9 մլրդ ԱՄՆ դոլար, որը կազմում է ԵԱՀ-ի արտաքին առևտրի 24.4%-ը), երկրորդը՝ ԱՄՆ-ը (11.4 մլրդ դոլար, ԵԱՀ-ի արտաքին առևտրի 23.3%-ը):

<sup>30</sup> Jon B. Alterman, նշվ. աշխ., էջ 65:

<sup>31</sup> В ближайшие 10 лет Китай станет крупнейшим торговым партнером Египта, Жэнминь Жибао онлайн, 15.05.2007. <http://russian.people.com.cn/31518/5733127.html>. 2005թ. երկու երկրների միջև ապրանքաշրջանառության ծավալը հասել է 2.3 մլրդ ԱՄՆ դոլար՝ 30%-ով ավելի 2004թ. համեմատությամբ, 2006թ.՝ 3,19 մլրդ ԱՄՆ դոլար՝ 48,8%-ով ավելի 2005թ. համեմատությամբ: Այս մասին տե՛ս Египет надеется, что к 2010 году Китай станет его крупнейшим торговым партнером, Жэнминь Жибао онлайн, 07.09.2006. <http://russian.people.com.cn/31521/4789237.html>.

<sup>32</sup> Xinhua News Agency, Cairo, 31.10.2006.

<sup>33</sup> Egypt. African Economic Outlook, նշվ. աշխ., էջ 243:

<sup>34</sup> Jon B. Alterman and John W. Garver, նշվ. աշխ., էջ 75:

<sup>35</sup> Египетские СМИ уделяли пристальное внимание визиту китайского премьера, Жэнминь Жибао онлайн, 19.06.2006. <http://russian.people.com.cn/31520/4500356.html>.

<sup>36</sup> Министр Египта о мировом значении развития Китая, Жэнминь Жибао онлайн, 12.10.2006. <http://russian.people.com.cn/31520/4908009.html>. Եվրոպական, արաբական և աֆրիկյան երկրներին գրավելու նպատակով 2003թ. Կահիրեում բացվեց արտերկրում ՉԺՀ-ի կազմակերպված բարձր տեխնոլոգիաների առևտրային խոշորագույն ցուցահանդեսը: Այս մասին տե՛ս David H. Shinn, նշվ. աշխ., էջ 14:

<sup>37</sup> Chris Zambelis, Public Diplomacy in Sino-Egyptian Relations, նշվ. աշխ.:

<sup>38</sup> Lei Wu & Youyong Wang, Comparative Analysis of China's Energy Activities in the Middle East and Africa, Journal of Middle Eastern and Islamic Studies (in Asia),

Vol. 3, No.1, 2009, p. 51. ՉԺՀ-ը շեղյալ է համարել աֆրիկական 31 երկրների պարսպերը, աֆրիկյան որոշ երկրներից ներկրվող 190 ապրանքատեսակ ազատել է մաքսային հարկերից: 1990-ականների կեսերից Պեկինը Աֆրիկայի էներգետիկ սեկտոր խոշոր ներդրումներ է իրականացրել՝ աֆրիկյան 14 երկրներում 27 էներգետիկ մախագծեր իրականացնելով: Աֆրիկյան ապահովում է ՉԺՀ - ներկրվող նավթի 30 %-ը: ՉԺՀ-ի առևտրի ծավալն աֆրիկյան երկրների հետ 2005թ. հասել է 42 մլրդ ԱՄՆ դոլար: Այս մասին տե՛ս Xinhua, Nairobi, 1.11.2006; Al-Ahram Weekly, Issue No. 819, 9-15 Novemder, 2006.

<sup>39</sup> Мамед-заде П.Н., Основные направления египетско-китайского сотрудничества в начале XXI века, Ближний Восток и Современность, Сборник статей, М., 2007, стр. 82.

<sup>40</sup> Chris Zambelis and Brandon Gentry, China Through Arab Eyes: American Influence in the Middle East, Chris Zambelis and Brandon Gentry, 2008, p. 67. <http://www.carlisle.army.mil/usawc/Parameters/08spring/zambelis.pdf>. ՍԱ ՉԺՀ-ի ներդրումների 2/3-ը բաժին է ընկնում ԵԱՀ-ին, ԱՄԷ-ին, ՅՖՆՖին և Իրանին: Այս մասին տե՛ս Yizhak Shichor, Competence and Incompetence: The Political Economy of China's Relations with the Middle East, Asian Perspective, Vol. 30, No. 4, 2006, p. 56.

<sup>41</sup> КНР и Египет опубликовали совместное коммюнике по случаю 50-й годовщины установления дипотношений между двумя странами, Жэнминь Жибао онлайн, 08.11.2006. <http://russian.people.com.cn/31521/5011190.html>.

<sup>42</sup> Египет надеется на привлечение инвестиций из Китая, նշվ. աշխ.:

<sup>43</sup> Egyptian-Chinese Relations, Egypt State Information Service, 2006. <http://www2.sis.gov.eg/En/Politics/Foreign/EAsia/chinara/040314100000000001.htm>. Հանճմաժողովի առաջին հանդիպումը տեղի է ունեցել 1996թ. հոկտեմբերին Պեկինում, իսկ երկրորդը՝ 2000թ. Կահիրեում:

<sup>44</sup> Министр Египта о мировом значении развития Китая, նշվ. աշխ.: «Китайский бум» охватил Египет, նշվ. աշխ.: 2006թ. եգիպտական շուկայում բում առաջացրեց չինական արտադրության «Ցիժույ», «Խաֆէյ», «Յզիլի» և «ժուաշէն» ավտոմեքենաների մեծարանակ հոսքը:

<sup>45</sup> Современная внешняя политика Египта: приоритеты и особенности. Пространство и время в мировой политике и международных отношениях, т. 6, М., 2007, стр. 139; Jon B. Alterman, նշվ. աշխ., էջ 72:

<sup>46</sup> China-Egypt 10-Year Strategic Cooperation, Mutual Benefit and Win-Win Cooperation, Ministry of Foreign Affairs, PRC, 2009.06.08. <http://www.focac.org/eng/jlydh/sjzs/t619121.htm>. 2010թ. մայիսի 11-ին «Շանհայ Էքսպո-2010»-ում բացվեց Եգիպտոսի ազգային տաղավարը, որում եգիպտական ազգային 8 զանճ ցուցադրվեց: Այս մասին տե՛ս Национальные сокровища Египта

представлены на ЭКСПО-2010 в Шанхае. [http://www.kitaichina.com/se/txt/2010-05/13/content\\_272235.htm](http://www.kitaichina.com/se/txt/2010-05/13/content_272235.htm).

<sup>47</sup> David H. Shinn, նշվ. աշխ., էջ 14:

<sup>48</sup> China-Egypt 10-Year Strategic Cooperation, Mutual Benefit and Win-Win Cooperation, նշվ. աշխ.:

<sup>49</sup> Egyptian-Chinese Relations, նշվ. աշխ.:

<sup>50</sup> China Hails Egypt's Role in the Peace Process Arabic News, 1.21.2002. <http://www.arabicnews.com/ansub/Daily/Day/020121/2002012145.html>; Egypt. African Economic Outlook, նշվ. աշխ., էջ 243:

<sup>51</sup> Egypt Signs Three Cooperation Agreements with China, Arabic News, 4.23.2002. <http://www.arabicnews.com/ansub/Daily/Day/020423/2002042331.html>.

<sup>52</sup> David H. Shinn, նշվ. աշխ., էջ 14:

<sup>53</sup> <http://eg.china-embassy.org/eng/zaigx/t150975.htm>. Տյանցզինը (ՉԺՀ-ի կենտրոնական ենթակայությանը 4 քաղաքներից մեկը) Եգիպտոսի Սուեզի տնտեսական և առևտրային համագործակցության գոտում (այն զբաղեցնում է 7 քառ. կմ տարածք և գտնվում է Եվրոպա, Աֆրիկա ու Ասիա մայրցամաքների խաչմերուկում, Սուեզի ջրանցքի հարավային ծայրում, Կահիրեից 140 կմ, Սուեզ քաղաքից 40 կմ հեռավորության վրա) 2 մլրդ չինական յուանի ներդրում է կատարել: Այս մասին տե՛ս <http://www.eg-teda.com/portal/introduction>.

<sup>54</sup> China-Egypt 10-Year Strategic Cooperation, Mutual Benefit and Win-Win Cooperation, նշվ. աշխ.:

<sup>55</sup> Мамед-заде П.Н., Египет и перспективы развития межаарабского газопровода, Ближний Восток и современность, Вып. 20, М., 2003, стр. 157. 2000թ. դեկտեմբերին Եգիպտոսի, Սիրիայի և Լիբանանի միջև պայմանագիր ստորագրվեց միջառաքական գազամուղի կառուցման վերաբերյալ, որին 2001թ. փետրվարին միացավ Հորդանանը: ՄԱ-ում ձևավորվեց գազամուղային մոդ ցանց, որում Եգիպտոսն առանցքային դեր է խաղում:

<sup>56</sup> David H. Shinn, նշվ. աշխ., էջ 14:

<sup>57</sup> Волович А.А., Китай на энергетическом рынке Ближнего Востока, Институт Ближнего Востока, 22.09.2004. <http://www.iimes.ru/rus/stat/2004/22-09-04.htm>.

<sup>58</sup> Xinhua News Agency, Cairo, 18.06.2006; Президент Египта встретился с премьером Госсовета КНР, Жэнминь Жибао онлайн, 19.06.2006. <http://russian.people.com.cn/31520/4498000.html>.

<sup>59</sup> Египет надеется, что к 2010 году Китай станет его крупнейшим торговым партнером, նշվ. աշխ.:

- <sup>60</sup> The Egyptian Gazette, 07.11.2006; Египет признал за Китаем статус страны с полной рыночной экономикой, Жэнминь Жибао онлайн, 06.11.2006. <http://russian.people.com.cn/31521/5004506.html>.
- <sup>61</sup> Министр Египта о мировом значении развития Китая, 62վ. աշխ.; China-Egypt 10-Year Strategic Cooperation, 62վ. աշխ.:
- <sup>62</sup> Xinhua News Agency, Cairo, 31.10.2006.
- <sup>63</sup> Египет надеется на привлечение инвестиций из Китая, 62վ. աշխ.:
- <sup>64</sup> Мамед-заде П.Н., Основные направления египетско-китайского сотрудничества в начале XXI века, 62վ. աշխ., էջ 81:
- <sup>65</sup> Министр Египта о мировом значении развития Китая, 62վ. աշխ.:
- <sup>66</sup> David H. Shinn, 62վ. աշխ., էջ 14:
- <sup>67</sup> China-Egypt Ties, Model of South-South Co-op, Chinese Government's Official Web Portal, GOV.cn, 15.06.2006.
- <sup>68</sup> В отношениях стратегического сотрудничества между Китаем и Египтом достигнуты плодотворные результаты, Жэнминь Жибао онлайн, 18.05.2007. <http://russian.people.com.cn/31520/5748750.html>.
- <sup>69</sup> China-Egypt 10-Year Strategic Cooperation, 62վ. աշխ.: ԵԱՀ-ում «Հիմաստանի Արտահանող-մերկրող բանկը» 20 մլն ԱՄՆ դոլար փոխառություն է տրամադրել Կահիրեի Միջազգային Համաժողովների կենտրոնի (CICC) վերանորոգման և նրա հյուրանոցի կառուցման համար: Հիմաստանի մեծագույն պետական «Մի-րիզրուպ» կորպորացիան նախատեսում էր 800 մլն ԱՄՆ դոլար ներդնել Իսմահիլայի ալյումինի գործարանում, որի եկամտի մեծ մասը պատկանելու է ԶԺՀ-ին: «Հիմաստանի Ազգային բիմիական ինժեներական ընկերությունը» Քուվեյթի «Ալ-Խալիֆ»-ի հետ պայմանագիր ունի Եգիպտոսի Ֆայյումի բիմիական գործարանում 700 մլն ԱՄՆ դոլար ներդրում կատարելու վերաբերյալ: Այս մասին տե՛ս Jon B. Alterman, 62վ. աշխ., էջ 67:
- <sup>70</sup> Число китайских туристов в Египет растёт, Жэнминь Жибао онлайн, 07.09.2006. <http://russian.people.com.cn/31518/4789553.html>.
- <sup>71</sup> Jon B. Alterman and John W. Garver, 62վ. աշխ., էջ 82:
- <sup>72</sup> Мамед-заде П.Н., Основные направления египетско-китайского сотрудничества в начале XXI века, 62վ. աշխ., էջ 82:
- <sup>73</sup> Chris Zambelis, Public Diplomacy in Sino-Egyptian Relations, 62վ. աշխ.:
- <sup>74</sup> China-Egypt 10-Year Strategic Cooperation, 62վ. աշխ.:



## ԵՎԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

### ՃԱՊՈՆԻԱՅԻ ՄԵՐԶԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՆՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՉԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀԵՏՄԱՌԸՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1991-2001թթ.)

1960-ականների սկզբին Ճապոնիան դարձավ երկրորդ ամենագարգացած տնտեսություն ունեցող պետությունն աշխարհում<sup>1</sup>: Նրա տնտեսության զարգացումն ամփօշականորեն կապված է նավթային ներկրումներից<sup>2</sup>, քանդի առաքվող հում նավթն ապահովում է Ճապոնիայի էներգիայի պահանջարկի 77.4%-ը<sup>3</sup>: Այսպես, «ծագող արևի երկրի» նավթային պահանջարկի 99%-ը ներկրվում է, որից 90%-ը՝ Մերձավոր Արևելքի (ՄԱ) երկրներից<sup>4</sup>: Հարկ ենք համարում նշել, որ թեև Տոկիոյի՝ ՄԱ-ի երկրներից ունեցած նավթային մեծ կախվածության, մինչ 1970-ականները «ծագող արևի երկիրը» փորձում էր հնարավորինս չեզոք դիրք գրավել մերձավորարևելյան խնդիրների նկատմամբ<sup>5</sup>: Ճապոնիայի չեզոք դիրքորոշումը կամ «թույլ քաղաքական դիմագիծը»<sup>6</sup> բխում էր նախ և առաջ այն հանգամանքից, որ մինչ 1970-ականները ողջ նավթն առաքվում էր «Յոթ քույրեր» միջազգային նավթային ընկերությունների միջոցով<sup>7</sup>, զերծ պահելով Տոկիոյին հանքավայրերի հետախուզման և նավթամշակման աշխատանքներին մասնակցելուց<sup>8</sup>: Այսպիսով, միջնորդավորված տարբերակով իր տնտեսության համար կենսական նշանակություն ունեցող վառելանյութի ձեռքբերումը, հնարավորություն էր տալիս Տոկիոյին չեզոք դիրք գրավել տարածաշրջանի խնդիրների նկատմամբ:

Թեև առաջին նավթային ճգնաժամը ստիպեց Տոկիոյին «դուրս գալ կուլիաներից» և քաղաքական բանակցությունների մեջ մտնել արաբների հետ՝ որոշակի փոփոխություններ մտցնելով Ճապոնիայի՝ ՄԱ-ի քաղաքական խնդիրների նկատմամբ ունեցած դիրքորոշման մեջ<sup>9</sup>, այնուամենայնիվ «ծագող արևի երկրի» մերձավորարևելյան քաղաքականությունը մեծամասամբ սահմանափակվում էր տարածաշրջանի երկրներին Պաշտոնական Զարգացման Աջակցության (ODA) ծրագրի միջոցով<sup>10</sup> տրա-



մաղդվող օգնություններով<sup>11</sup>, հետամուտ լինելով պասիվ քաղաքականության իրականացմանը:

Տոկիոյի պասիվությունը մերձավորարևելյան քաղաքական խնդիրների նկատմամբ պահպանվեց մինչև 1990-ականների սկիզբը, որը պայմանավորված էր մի շարք արտաքին և ներքին գործոնների առկայությամբ: Նախ «Մառը պատերազմի» տարիներին, երկու խոշոր գերտերությունների միջև առկա մրցակցության պայմաններում, իր երկրի անվտանգության նկատառումներից ելնելով, Ճապոնիան ձգտում էր պահպանել դաշնակցային հարաբերություններ ԱՄՆ-ի հետ, իսկ մյուս կողմից՝ փորձում էր չփչացնել բարիդրացիական հարաբերություններն արաբական երկրների հետ, որոնք ապահովում էին երկիրը կենսական նշանակություն ունեցող վառելանյութով<sup>12</sup>: Բացի այդ 1955 թվականից ի վեր Լիբեռալ Դեմոկրատական կուսակցության (ԼԴԿ) ձեռքում կենտրոնացած իշխանությունը և երկրում գործող սահմանադրությունը թույլ չէին տալիս Տոկիոյին ակտիվ մասնակցություն ցուցաբերել երկրից դուրս տեղի ունեցող քաղաքական գործընթացներում<sup>13</sup>:

Խորհրդային Միության փլուզմամբ և «Մառը պատերազմի» ավարտմամբ փոխվեց ողջ միջազգային-քաղաքական մթնոլորտը, որն իր արտացոլումը գտավ մաս Ճապոնիայի մերձավորարևելյան նոր քաղաքականության և մոտեցումների ձևավորման մեջ<sup>14</sup>:

Նշենք, որ Ճապոնիայի հեռառոպատերազմյան քաղաքականության ակտիվացման համար խթանիչ գործոն հանդիսացավ 1990թ. Պարսից ծոցի ճգնաժամը, որն առաջացել էր Իրաքի կողմից Զուվեյբի բռնազավթման արդյունքում<sup>15</sup>: Այս միջադեպը մեծ անհանգստություն էր առաջացրել ոչ միայն տարածաշրջանի երկրներում, այլև Ճապոնիայում, քանզի վերջինս, ունենալով մեծ կախում մավթային ներկրումներից, Մերձավոր Արևելքում խաղաղության հաստատման ջատագովներից մեկն էր:

Այսպիսով, Ճապոնիան առաջինն էր այն պետություններից, որը պատրաստակամություն հայտնեց միանալ Իրաքի դեմ կիրառվող պատժամիջոցներին<sup>16</sup>: Ավելին, տարածաշրջանի խաղաղության վերականգնման նպատակով 1990թ. օգոստոս և հոկտեմբեր ամիսներին Ճապոնիայի արտգործնախարար Տարո Նակայաման և վարչապետ Տոսիկի Կաի-

Ֆուն այցելեցին Իրաքի հարևան երկրներ՝ Սաուդյան Արաբիա, Օման, Հորդանան, Եգիպտոս, Թուրքիա և Սիրիա, որի ընթացքում վերոնշյալ երկրների առաջնորդները պատրաստակամություն հայտնեցին ջանքեր չխնայել խնդրին շուտափույթ լուծում տալու համար<sup>17</sup>։ Այնուհետև Ճապոնիայի արտաքին գործերի փոխնախարար Հիսասի Օվադան համդիպեց Իրաքի արտգործնախարարի հետ՝ «համոզելով» վերջինիս ընդունել Միացյալ Ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Անվտանգության խորհրդի (ԱԽ) բանաձևերը և դուրս բերել զորքերը Քուվեյթի տարածքից<sup>18</sup>։ Ավելին, Ճապոնիան, շահագրգռված լինելով Պարսից ծոցի տարածաշրջանում շուտափույթ խաղաղության հաստատմամբ և Քուվեյթի ու հարևան պետությունների անվտանգության ապահովմամբ, 1991թ. 2.5 մլն ԱՄՆ դոլար ֆինանսական աջակցություն տրամադրեց ՄԱԿ-ի Հատուկ Հանձնաժողովին։ Վերջինս, հիմնվելով ՄԱԿ-ի 687 բանաձևի վրա<sup>19</sup>, 45 հոգանոց խումբ ուղարկեց Իրաք՝ մասսայական ոչնչացման զենքի հայտնաբերման նպատակով<sup>20</sup>։ Բացի այդ Տոկիոն «Քիմիական զենքի հետազոտման» կազմակերպության անունից մի խումբ փորձագետներ ուղարկեց Իրաք՝ քիմիական զենքի ստեղծումը կանխելու համար<sup>21</sup>։

Զնայած Իրաքի կողմից Քուվեյթի բռնազավթմանը վերջ դնելու ուղությամբ իրականացվող բոլոր միջոցառումներին, ոչ մի դրական արդյունք չարձանագրվեց, որի պատճառով միջազգային հանրությունը որոշեց խնդրին ռազմական լուծում տալ բազմազգ ուժերի միջամտությամբ<sup>22</sup>։

Ճապոնիայի սահմանադրության դրույթները թույլ չէին տալիս Տոկիոյին մասնակցել որևիցե ռազմական գործողություններում, այդ պատճառով «ծագող արևի երկիրը» իր մասնակցությունն այդ միջոցառման մեջ ցուցաբերեց ֆինանսական ներդրումների տեսքով՝ տրամադրելով ՄԱԿ-ի բազմազգ ուժերին 11 մլրդ ԱՄՆ դոլարի ֆինանսական աջակցություն և լրացուցիչ 2 մլրդ ԱՄՆ դոլար՝ Իրաքի կողմից հարևան երկրներին հասցրած վնասները փոխհատուցելու համար։ Ավելին, Տոկիոն 1991-1993թթ. ընթացքում Քուվեյթին տրամադրեց 468.8 մլն ԱՄՆ դոլարի փոխառություն և 1.1 մլն ԱՄՆ դոլարի դրամաշնորհ՝ տնտեսությանը հասցված վնասների փոխհատուցման և ևս 13 մլրդ ԱՄՆ դոլարի օգնություն՝ Պարսից ծոցի ականազերծման նպատակով<sup>23</sup>։

Հարկ է նշել, որ Տոկիոյի՝ Քուվեյթի բռնազավթմանը վերջ դնելու և վերջինիս վնասված տնտեսությունը շուտափույթ վերականգնելու ուղղությամբ կիրառած ջանքերը չգնահատվեցին ըստ արժանվույն Քուվեյթի կառավարության կողմից: Վերջինս բաց էր թողել Ճապոնիայի անունն այն երկրների ցանկից, որոնց հայտնում էր իր խորին շնորհակալությունը և երախտագիտությունը՝ պատերազմի ընթացքում աջակցություն ցուցաբերելու համար<sup>24</sup>: Ըստ շատ քաղաքագետների կարծիքի՝ այս հանգամանքը խթան հանդիսացավ Ճապոնիայի համար վերանայելու իր մերձավորարևելյան քաղաքականությունը և կտրուկ փոփոխման ենթարկելու տարածաշրջանի խնդիրների նկատմամբ ունեցած իր մոտեցումները<sup>25</sup>: Ճապոնիան հասկացավ, որ քաղաքական գործընթացներին չմիջամտելու քաղաքականությունը վնասում է իր երկրի շահերին և սկսեց ավելի մեծ ակտիվություն ցուցաբերել մերձավորարևելյան տարածաշրջանի քաղաքական գործընթացներում:

Անշուշտ անհրաժեշտ է նշել նաև հետաառըպատերազմյան շրջանում ստեղծված աշխարհաքաղաքական մոր մթնոլորտի մասին, ինչը ևս խթանիչ գործոն էր Տոկիոյի մերձավորարևելյան մոր քաղաքականության ձևավորման գործում: Այսպես, մի կողմից միաբևեռ համակարգի հաստատումն էր, իսկ մյուս կողմից՝ միաբևեռ համակարգին զուգահեռ ձևավորվող բազմաբևեռ համակարգն էր<sup>26</sup>, ինչը Ճապոնիայի համար տնտեսական լուրջ մրցակցություն էր ստեղծում ՄԱ-ի տարածաշրջանում: Շատ կարևոր է այստեղ նշել նաև Ճապոնիայի դաշնակցի՝ ԱՄՆ-ի մոտեցման մասին, որը լիովին խրախուսում էր ՄԱ-ի խաղաղության գործընթացներում Տոկիոյի ակտիվ մասնակցությունը և գնահատում էր վերջինիս մեծ ներուժը ՄԱ-ի խնդիրներին մոր և թարմ լուծումներ առաջարկելու հարցում<sup>27</sup>:

Ի դեպ մերձավորարևելյան մոր քաղաքականության ձևավորմանը մեծապես նպաստեց նաև երկրի ներքին խմորումները. դա մի կողմից 1990-ականների սկզբին երկրում քաղաքական մոր ուժերի իշխանության գալն էր<sup>28</sup>, որը վերջ դրեց Լիբերալ Դեմոկրատական կուսակցության մեծաշնորհին<sup>29</sup>. փոփոխություններ մտցնելով միջազգային հարաբերություններում Տոկիոյի պահպանողական քաղաքականության մեջ, իսկ մյուս կողմից՝ երկրում սկսված տնտեսական ճգնաժամն էր<sup>30</sup>, որն իր

հերքին շահագրգռում էր Ճապոնիային ՄԱ-ի քաղաքական գործընթացների շուտափույթ լուծման հարցում, ինչը երկրի խոցված տնտեսության համար նավթային ներկրումների անխափան հոսքի երաշխիք կհանդիսանար:

Այսպիսով, արդեն իսկ 1991թ. Մադրիդյան համաժողովից հետո Ճապոնիան սկսեց բավական ակտիվ քաղաքականություն դրսևորել՝ գլխավորելով շրջակա միջավայրի խնդիրների լուծմանը նվիրված բազմակողմանի բանակցությունները, մասնակցելով ջրային ռեսուրսների, տարածաշրջանային տնտեսական զարգացումների և փախստականների խնդիրներին նվիրված աշխատանքային խմբերում: Ավելին, Տոկիոն մոտ 77 դիտորդ ուղարկեց 1996թ. Պաղեստինյան ընտրությունները վերահսկելու և 45 զինվոր՝ Գոլանի բարձրունքներում ՄԱԿ-ի խաղաղապահ ուժերի կողմից իրականացվող գործողություններում մասնակցելու համար<sup>31</sup>: Նշենք, որ դա Ճապոնիայի առաջին խաղաղապահ առաքելությունն էր Հարավային Ասիայի սահմաններից դուրս<sup>32</sup>:

Հարկ է նշել, որ մերձավորարևելյան մոր քաղաքականության ձևավորման պահից ի վեր Ճապոնիան մեծ տեղ է տալիս ՄԱԿ-ի ԱԽ մշտական անդամ դառնալու խնդրին<sup>33</sup>, ինչը թույլ կտար վերջինիս կարևոր դեր խաղալ ինչպես մերձավորարևելյան, այնպես էլ միջազգային խաղաղության պահպանման և անվտանգության խնդիրների լուծման հարցերում<sup>34</sup>:

Այսպիսով, ամփոփելով, կարելի է գալ այն եզրակացության, որ Ճապոնիայի մերձավորարևելյան քաղաքականության ձևավորման մեջ թե՛ սառը, թե՛ հետսառը պատերազմյան շրջանում միշտ առկա են եղել երկու հիմնական գործոններ. մի կողմից նավթային գործոնն է, իսկ մյուս կողմից՝ ԱՄՆ-ի հետ դաշնակցային հարաբերությունների պահպանման ձգտումը: Այս երկու հիմնական գործոնները, տիրող աշխարհաքաղաքական և ներքաղաքական մթնոլորտների ներքո ձևավորել են Ճապոնիայի մերձավորարևելյան քաղաքականությունը:

## RESUME

YEVA HARUTYUNYAN

### *THE FORMATION OF JAPAN'S MIDDLE EASTERN NEW POLICY DURING THE POST-COLD WAR ERA (1991-2001)*

In the beginning of 1960s Japan has the second developed economy in the world. Japan's economy depends on oil imports, as crude oil provides 77.4% of its energy demand. It is important to note that the Middle East is not only a source of petrochemical imports but also a great market for Japan's exports.

As Japan's foreign policy in the Middle East has been characterized by its tendency to align with America's policy in the region which has made it possible for Japan to remain politically uncommitted to the Middle East. By not taking concrete political actions towards conflicting and unresolved regional issues, Japan has been free from risking or jeopardizing its national interests in the region of Middle East. Though under certain circumstances alignment and identification with US, Middle Eastern policies has been perceived to be harmful for Japanese interests in the region, as it reflected negatively on Japan during the first oil crisis. Although Japan's political involvement has been increasing since the first oil shock, and there was incremental movement towards greater economic involvement in the region during the 1980s, a low political commitment remained till the early 1990s.

It is noteworthy to mention that various internal and external factors have contributed to the low Japanese political engagement in the Middle East during the Cold War. *First of all*, the legacy of the Second World War directed the Japanese way of thinking toward not only concentrating on economy, but also refusing remilitarize or any expansion to the scope of foreign policy. Therefore, there was a general agreement among Japanese people on the peaceful nature of the constitution. *And the second*, the conditions of Cold War and the struggle between the superpowers associated with the US-Japan alliance represented restrictions on the Japanese foreign behavior.

However, since the beginning of 1990s, Japanese foreign policy toward the Middle East has been witnessing important transformations. There are signs that Japan's historic policy toward the region is now changing. The most important changes which left critical impacts possibly on the whole Japanese foreign behavior, appeared directly after the demise of bipolarity concurrent with the end of the Gulf

War in 1991. In spite of its generous contributions to the costs of that war, Japan has not received the appreciation or thankfulness it deserved. This fact created a chock among the Japanese who started to seriously believe that reluctant policy or keeping its head down was not practical and therefore would not be useful in the long run. Japan accordingly should play a more active role in the international arena and enhance its political involvement in the Middle East. Truly, Japan started to move and there have been various events demonstrating a new approach. Japan's participation in the Madrid conference in 1991, its leading role in the multilateral negotiations in the Middle East, its growing role in the United Nations peacekeeping missions, participating in the disengagement troops in the Golan Height, dispatching self defense soldiers to the region for the first time and also the diplomatic engagement between conflicting parties are all evidences that Japan has altered its traditional policy toward the region.

As a final conclusion, it is noticed that the basic components that have constantly played a major role in Japan's policy towards the Middle East during (low involvement) and after (higher involvement) the Cold War, are the oil factor on one hand, and the American factor, on the other, which are formatting Japan's policy towards the Middle Eastern countries regarding to external and internal factors.

#### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

<sup>1</sup> Նշենք, որ 1960-1970-ականների ընթացքում Ճապոնիայի տարեկան միջին տնտեսական աճը կազմում էր 9%, իսկ 1980-ականներին՝ 4%: Այս մասին տե՛ս The Boom and the Bust of the Japanese Economy: A Quantitative Look at the Period 1980–2000, Japan and the World Economy, Volume 21, Issue 1, January 2009, p. 116; <http://www.state.gov/r/pa/ei/bgn/4142.htm>.

<sup>2</sup> 1955թ. Ճապոնիան ներկրում էր 9,27 միլիոն կիլոյիսր հում մավթ, իսկ արդեն 1973թ. մավթային ներկրումների քանակը կազմում էր 288,49 միլիոն կիլոյիսր: Այս մասին տե՛ս Takafusa Nakamura, Economic Development of Modern Japan, Japan, 1985, p. 73; Yukiko Miyagi, Japan's Middle East Security Policy Theory and Cases, London, 2008, pp. 1-2.

<sup>3</sup> Takafusa Nakamura, նշվ. աշխ., էջ 75:

<sup>4</sup> The Middle East and North Africa, Diplomatic Bluebook, Tokyo, 2006, p. 18; [http://www.mofa.go.jp/region/middle\\_e/arab\\_e.pdf](http://www.mofa.go.jp/region/middle_e/arab_e.pdf).

Նշենք ավելին, որ ՄԱ-ից առաքվող հում նավթի 70%-ը ներկրվում է Պարսից ծոցի Համագործակցության Խորհրդի (ԾՀԽ) երկրներից: Այս մասին տե՛ս <http://www.mofa.go.jp/policy/other/bluebook/1996/III.html#F>.

<sup>5</sup> Douglas R. Ostrom, Trends in Japanese Trade with the Middle East, Japan and the Middle East, Washington, D.C.: Middle East Institute, 1990, p. 18; <http://www.passia.org/seminars/99/japan/politicalrelation.htm>.

<sup>6</sup> Սովորաբար այս տերմինով են նկարագրում 1970-1990-ականների ճապոնիայի քաղաքական դիրքորոշումը ՄԱ-ի երկրների նկատմամբ: Այս մասին տե՛ս <http://japanfocus.org/-Raquel-Shaoul/1573>.

<sup>7</sup> Այսպիսի անվանում են ստացել յոթ խոշոր նավթային ընկերությունները («Տեկսակոն», «Գալֆ», «Էքքսոն», «Մոբիլ», «Սոկալ»՝ Ստանդարտ օյլ օֆ Կալիֆորնիա, «Ռոյալ Դատչ Շելլ» և «Բրիթիշ Պետրոլիում»), որոնց մեծամասնությունն ամերիկյան և անգլիական նավթային ընկերություններ էին և պաշտպանում էին վերջիններիս շահերը մերձավորարևելյան տարածաշրջանում: Այս մասին տե՛ս Peterson J., The Politics of Middle Eastern Oil, Washington, 1983, p. 3.

<sup>8</sup> Akifumi Ikeda, Political Relations Between Japan and the Middle East, Jerusalem: Palestinian Academic Society for the Study of International Affairs, 1999, p. 15.

<sup>9</sup> Մանրամասն առաջին ճգնաժամի ընթացքում ճապոնիայի մերձավորարևելյան քաղաքականության վերաբերյալ տե՛ս Հարությունյան Ե., Ճապոնիայի քաղաքականությունը մերձավորարևելյան երկրների նկատմամբ 1973թ. նավթային ճգնաժամի ընթացքում, Արևելասիական ուսումնասիրություններ, I, 2009, էջ 129-137:

<sup>10</sup> Պաշտոնական Զարգացման Աջակցությունը (ODA) - դա Տնտեսական Համագործակցության և Զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) ծրագրերից է, որն աջակցություն է տրամադրում, զարգացող երկրներին: Նշենք, որ ՏՀԶԿ-ը միջազգային տնտեսական կազմակերպություն է, որը ստեղծվել է 1961թ. և քաղկացած է 34 պետություններից: Այն Եվրոպական Տնտեսական Համագործակցության Կազմակերպության (ԵՏՀԿ) իրավահաջորդն է, որը ստեղծվել էր 1948թ. Մարշալի պլանի համաձայն՝ երկրորդ համաշխարհային պատերազմի արդյունքում տուժած եվրոպական երկրներին աջակցելու նպատակով: Սակայն ժամանակի ընթացքում երկրներին աջակցություն տրամադրելու ցանկը գնալով ընդլայնվում էր՝ ներառելով նաև ոչ-եվրոպական երկրների, որի արդյունքում 1961թ. այդ կազմակերպությունը վերանվանվեց Տնտեսական Համագործակցության և Զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ): Հարկ է նշել, որ Ճապոնիայի դերն այս կազմակերպության մեջ գնալով մեծանում է: 1991 թվականից ի վեր Տոկիոն ՊԶԱ-յում կատարած ներդրումների քանակով առաջին եռյակի մեջ է մտնում: Հատկանշական է, որ 2000թ. Ճապոնիայի ներդրումը ՊԶԱ-յում կազմել է 13 միլիարդ դոլար՝ ետևում բողոնելով ԱՄՆ-ին՝ 9.6 մլրդ դոլար



ներդրումով: Այս մասին տե՛ս Masahiro Kawai, Shinji Takagi, Japan's Official Development Assistance: Recent Issues and Future Directions, No. 97, July 2001, p. 2.

<sup>11</sup> Այսպես, Ճապոնիայի Պաշտոնական Ջարգացման Աջակցության միջոցով ՄԱ-ի երկրներին տրամադրած օգնությունը 1970թ. կազմել է 10.6 միլիոն ԱՄՆ դոլար, 1975թ.՝ 89.2 միլիոն ԱՄՆ դոլար, իսկ արդեն 1978թ.՝ 339.8 միլիոն ԱՄՆ դոլար: Այս մասին տե՛ս [http://www.mofa.go.jp/region/middle\\_e/relation/coop.html](http://www.mofa.go.jp/region/middle_e/relation/coop.html).

<sup>12</sup> С.И. Вербицкий, Япония: время сложных перемен, Москва, 1974г., с. 47.

<sup>13</sup> M. Abo-Kazleh, Japanese Foreign Policy towards the Middle East: Determinants and Motives,

Cairo, October 2008, pp. 18-29.

<sup>14</sup> Japan's Role in the International Community, Current Situation of the World Economy and Japan's position, Diplomatic Bluebook, Tokyo, 1992, p. 303; <http://www.passia.org/seminars/99/japan/jpolicy.htm>.

<sup>15</sup> Հարկ է նշել, որ Իրաքն ու Քուվեյթն իրար հետ ապահովում էին համաշխարհային մավթային արդյունաբերության 7%-ը: Այս մասին տե՛ս International Energy Agency, Monthly Oil Market Report: April, Paris: IEA, 1991, p. 25; [http://stockholm.sgir.eu/uploads/Chakarova\\_SGIR-Stockholm.pdf](http://stockholm.sgir.eu/uploads/Chakarova_SGIR-Stockholm.pdf).

<sup>16</sup> <http://www.passia.org/seminars/99/japan/politicalrelation.htm>.

<sup>17</sup> The Gulf Crisis and Japan's Foreign Policy, Diplomatic Bluebook, Tokyo, 1991, p. 38.

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 39:

<sup>19</sup> The Gulf Crisis and Japan's Foreign Policy, Adoption of the U.N. Security Council Resolution 687, Diplomatic Bluebook, Tokyo, 1991, p. 40; <http://www.fas.org/news/un/iraq/sres/sres0687.htm>.

<sup>20</sup> Հետաադրաատերագմյան շրջանում բավական ակտիվացել էր ՄԱԿ-ի խաղաղապահ ուժերի գործողությունները: Այսպես, ՄԱԿ-ի 28 խաղաղապահ գործողություններից 15-ն իրականացվել էր 1988թ.-ից հետո:

<sup>21</sup> The Middle East, Overview of the Middle East Situation after the Gulf Crisis, Diplomatic Bluebook, Tokyo, 1992, p. 307.

<sup>22</sup> Cheveland W., A History of the Modern Middle East, Boulder, 1994, p. 161; Khadduri M., Ghareeb E., War in the Gulf (1990-1991), The Iraq-Kuwait Conflict and Its Implications, New York, 1997, pp. 169-179.

<sup>23</sup> Sezai Özcelik, The Japanese Foreign Policy of the Middle East between 1904-1998: Resource, Trade and Aid Diplomacy, Humanity and Social Sciences Journal, 2008, p. 140; Japan's Response to the Post-Gulf Crisis Problems, Diplomatic Bluebook, Tokyo, 1991, p. 55-56.

<sup>24</sup> Akifumi Ikeda, նշվ. աշխ., էջ 5:



<sup>25</sup> Armitage, Richard L., U.S.-Japan Relations in the Middle East, Washington, D.C.: The Middle East Institute, 1998, p. 7; Shinoda, Tomohito, Becoming More Realistic in the Post-Cold War: Japan's Changing Media and Public Opinion on National Security, Japanese Journal of Political Science, No. 8, June 2007, p. 172-174, Akifumi Ikeda, Seeking a Say for Her Pay, Middle East Dialogue, November 1994, p. 5.

<sup>26</sup> Muzaffer Ercan Yilmaz, The New World Order: An Outline of the Post-Cold War Era, Alternatives: Turkish Journal of International Relations, Vol. 7, No. 4, Winter 2008, p. 46.

<sup>27</sup> <http://old.japanfocus.org/-Raquel-Shaoul/1990>.

<sup>28</sup> Warwick J. McKibbin, The Macroeconomic Experience of Japan since 1990: An Empirical Investigation, Washington DC, November 1996, p. 4.

<sup>29</sup> Նշենք, որ 1955-1993թթ. երկիրը կառավարվում էր Լիբերալ-դեմոկրատական կուսակցության (ԼԴԿ) կողմից: 1994թ. հունիսին իշխանության եկավ Ճապոնիայի Սոցիալիստական կուսակցությունը, որը, միանալով Լիբերալ դեմոկրատական կուսակցության հետ, կազմեց կոալիցիոն կառավարություն՝ վերանվանվելով Ճապոնիայի Սոցիալ-դեմոկրատական կուսակցության: Այս մասին տե՛ս Warwick J. McKibbin, նշվ. աշխ., էջ 18; Молодяков В., Молодякова Э., Маркарьян С., История Японии. XX век, М., 2007, с. 431-440.

<sup>30</sup> Այսպիսով, 1960-ականներից ի վեր Ճապոնիայի արագ տնտեսական աճը հանգեցրել էր արհեստական ճանապարհով ուռճացրած տնտեսության ձևավորմանը, ինչը 1990-ականների սկզբին երկրում տնտեսական ճգնաժամի առաջացման պատճառ հանդիսացավ: Այս մասին տե՛ս <http://www.state.gov/r/pa/ei/bgn/4142.htm>.

<sup>31</sup> 1992թ. Միջազգային խաղաղության համագործակցության օրենքի ընդունումից ի վեր Ճապոնիան սկսեց ինքնապաշտպանական ուժեր ուղարկել զանազան "տաք գոտիներ", ինչպիսին է Կոմորոջիան, Մոզամբիկը, Ջաիրը և Գոլանի քարձրությունները: Այս մասին տե՛ս <http://old.japanfocus.org/Raquel-Shaoul/1990>.

<sup>32</sup> Alan Dowty, Japan and the Middle East: Signs of Change?, Middle East Review of International Relations, Vol. 4, No. 4, December 2000, p. 72; Michael Berger, Japan Debates a New Role: Facing the Mideast Crisis, The New Leader, No. 73, September 17, 1990, p. 5.

<sup>33</sup> Հարկ է նշել, որ մինչ օրս Ճապոնիան ՄԱԿ-ի ոչ-մշտական անդամ է ընտրվել 10 անգամ: Վերջին անդամակցությունը եղել է 2009-2010թթ.: Այս մասին տե՛ս <http://www.un.org/sc/members.asp>.

<sup>34</sup> [http://www.mofa.go.jp/policy/q\\_a/faq5.html](http://www.mofa.go.jp/policy/q_a/faq5.html).

## ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

## ՆԱԻՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՏԱԼՍԱՐԱՆԻ ԿՈՆՖՈՒՅԻՈՒՄԻ  
ԻՆՍՏԻՏՈՒՏԸ

Այսօր Չինաստանի հետ հարաբերությունների զարգացումը գերակա խնդիր է ՀՀ արտաքին քաղաքականության համար, և երկկողմյան հարաբերություններն արդեն ցույց են տվել գերազանց դինամիկ զարգացում: Հարկ է նշել, որ բարձր մակարդակի քաղաքական երկխոսությունները, ակտիվ համագործակցությունը հասարակական, քաղաքական, տնտեսական, մշակութային և կրթական ոլորտներում, փոխադարձ աջակցությունը բազմակողմանի ձևաչափերով բարձրացրել են փոխըմբռնման և վստահության մակարդակները: Չինաստանի և Հայաստանի միջև մնան հարաբերությունների ձևավորման և կայացման գործընթացում իր ներդրումն ունի մաս Կոնֆուցիուսի ինստիտուտը. մեր գործունեությունը ծավալվում է ողջ Հայաստանով մեկ՝ հանդիսանալով կրթական ու մշակութային կապող օղակ երկու երկրների եղբայրական հարաբերությունների սերտացման և մշակութային երկխոսության ծավալման ու մերձեցման համար:

Այսօր տնտեսական բոլոր զարգացման և բարեփոխումների քաղաքականություն վարելու հետ մեկտեղ՝ Չինաստանի կառավարությունը շինարեն լեզուն և մշակույթը լայնորեն տարածելու համար մշակել է հատուկ ծրագիր՝ «Կոնֆուցիուսի ինստիտուտներ», որն իրականացվում է Չինարենի տարածման գլխամասային գրասենյակի՝ Հանբան կազմակերպության կողմից: Գլխամասային գրասենյակը գտնվում է ՉԺՀ մայրաքաղաք Պեկինում:


Կոնֆուցիուսի ինստիտուտների առաքելությունն է խթանել չինարեն լեզվի և չինական մշակույթի տարածմանն աշխարհով մեկ՝ ի նպաստ

այլ երկրների հետ ստեղծված բարեկամական փոխհարաբերությունների ամրապնդմանը:

Աշխարհում առաջին Կոնֆուցիուսի ինստիտուտի բացումը տեղի է ունեցել Հարավային Կորեայի մայրաքաղաք Մեուլում 2004թ. մայիսի 21-ին: 2010 թվականի տվյալներով՝ աշխարհի 96 երկրներում գործում են 322 Կոնֆուցիուսի ինստիտուտներ և 369 Կոնֆուցիուսի Դասասենյակներ: Չինարեն լեզվի տարածման գլխամասային գրասենյակի (Hanban) տվյալների համաձայն՝ աշխարհում ավելի քան 40 միլիոն մարդ ուսանում է չինարեն լեզուն: Համաձայն ՉԺՀ կրթության մախարարության տվյալների՝ 2010 թվականին մոտավորապես 100 միլիոն օտարերկրացիներ ուսանել են չինարենը որպես օտար լեզու:

Համբաճն առաջիկայում մախատեսում է հիմնադրել մոտ 500 Կոնֆուցիուսի ինստիտուտներ, իսկ մինչ 2020 թվականը՝ հասցնել այդ քիվը 1000-ի:

### Աղյուսակ 1



## Կոնֆուցիուսի ինստիտուտների հիմնական նպատակն է կազմակերպել՝

- չինարեն լեզվի և մշակույթի դասընթացներ,
- մշակութային միջոցառումներ,
- գիտական կոնֆերանսներ, մրցույթներ, սեմինարներ, ֆորումներ, դասախոսություններ
- չինարեն լեզվի միջազգային որակավորման ըննություն (HSK),
- ՉԺՀ-ում սովորելու ծրագրեր,
- դասախոսների վերապատրաստման ծրագրեր Չինաստանում:

Երևանի Վ. Բրյուսովի անվան Պետական Լեզվաբանական Համալսարանի Կոնֆուցիուսի ինստիտուտը, լինելով Կոնֆուցիուսի ինստիտուտների համաշխարհային ընտանիքի անդամ, հանդիսանում է փոքրիկ պատուհան՝ դեպի Չինաստանի հարուստ և բազմադարյա պատմությունն ու մշակույթը:

## Երևանի պետական լեզվաբանական համալսարանի Կոնֆուցիուսի ինստիտուտի գործունեությունը

Երևանի Վ. Բրյուսովի անվան Պետական Լեզվաբանական Համալսարանի Կոնֆուցիուսի ինստիտուտը մշակութային և կրթական կենտրոն է, որը ստեղծվել է 2008թ. ՀՀ և ՉԺՀ կառավարությունների միջև ստորագրված միջպետական համաձայնագրի շրջանակներում՝ չինարեն լեզվի և չինական մշակույթի ստրաժման և հայկական ու չինական մշակույթների միջև միջմշակութային համագործակցության պայմաններ ստեղծելու նպատակով: Ինստիտուտի գործունեությունը նույնպես ուղղված է ԵՊՀ-ի և Շանսիի Համալսարանի (ԵՊՀ գործընկեր համալսարան, ք. Թայյուան, ՉԺՀ), Չինաստանի այլ համալսարանների և մշակութային կենտրոնների միջև ընդհանուր կրթական և գիտական ծրագրերի զարգացմանը: Այս տեսակ ընդհանուր ծրագրերը կկարողանան բավարարել բազմաթիվ ուսանողների ցանկությունը՝ մասնագիտորեն ուսումնասիրել չինարեն լեզուն և մշակույթը, կբարելավեն ընդհանուր գիտական հետազոտությունների հնարավորությունները և մակարդակը: Երևանի պետական լեզվաբանական համալսարանի Կոնֆուցիուսի ինս-

տիտուտը փաստացի գործում է 2009թ. փետրվարից՝ համաձայն Չինաստանի ԿԳՆ-ին աղընքեր «Չինարեն լեզվի տարածման» գլխամասային գրասենյակի (Hanban), Երևանի պետական լեզվաբանական համալսարանի և Շանսիի համալսարանի միջև կնքված համաձայնագրի: ԵՊԼՀ Կոնֆուցիուսի ինստիտուտում չինարենի դասավանդումն իրականացնում է մանդարինյան չինարենով (պուտոնխուա)՝ օգտագործելով դասավանդման մորագույն ինտերակտիվ մեթոդները:

Երևանի պետական լեզվաբանական համալսարանի Կոնֆուցիուսի Ինստիտուտի դռները բաց են ոչ միայն ուսանողների համար, այլ բոլոր այն անձանց, ովքեր ցանկություն են հայտնում սովորել չինարեն լեզուն և ուսումնասիրել չինական մշակույթը: Պատրաստ լինելով համագործակցել տարբեր բուհերի, ուսումնական հաստատությունների և տարբեր կազմակերպությունների հետ՝ ԵՊԼՀ ԿԻ-ն էլ ավելի է ընդլայնվում իր գործունեության ասպարեզը:

ԵՊԼՀ-ի ԿԻ-ում գործում է մաս չինական մշակույթի փորձարարական կենտրոն, որը հնարավորություն է ընձեռում ուսանողներին ծանոթանալ չինական մշակույթին, դիտել ֆիլմեր բնագրով, և իհարկե, օգտվել փորձարարական կենտրոնում գործող գրադարանից, որտեղ առկա է ավելի քան 4000 օրինակ գիրք: Մշակութային կենտրոնում կազմակերպվում են չինական քեյի արարողություններ, ուսուցանվում է չինական հիերոգլիֆներ գրելու հնագույն արվեստը՝ իր ողջ հմտություններով և գաղտնիքներով, կազմակերպվում են այլ բազմաբնույթ միջոցառումներ: ԿԻ մշակութային կենտրոնը հազեցած է մորագույն սարքավորումներով՝ ներդրված հրաշք ծրագրերով: Կենտրոնում առկա են մաս բազմաթիվ ինտերակտիվ նյութեր: Եվ այս ամենն էլ հնարավոր է դարձնում մորագույն դասավանդման մեթոդների կիրառումը ժամանակակից ուսումնական գործընթացում, շնորհիվ որի ԿԻ Մշակութային կենտրոնում ստեղծվում է մի յուրահատուկ կոլորիտ՝ համեմված չինական երանգներով:

### **ԵՊԼՀ-ի Կոնֆուցիուսի ինստիտուտի առաքելությունը**

- փոխըմբռնման ընդլայնումը Հայաստանի և Չինաստանի Ժողովրդավարական Հանրապետության միջև,

- աջակցումը Հայաստանում չինարեն լեզվի և մշակույթի տարածման գործընթացին,
- քաղաքակրթության բարոյական և մշակութային արժեքների պահպանումն ու զարգացումը,
- չինարեն լեզվի և մշակույթի ուսուցման այնպիսի որակի ապահովում, որը համապատասխանում է համաշխարհային չափանիշներին, որոնք հաստատված են Կոնֆուցիուսի ինստիտուտների կենտրոնական գրասենյակի կողմից հասարակայնության լայն շերտերի համար,
- հիմնարար և կիրառական գիտության՝ որպես որակյալ կրթության հիմքի, մշտական զարգացումը,
- կրթության, գիտության և մշակույթի միջազգայնացումը, համաշխարհային կրթական, գիտական և մշակութային միջավայրի մեջ ինտեգրումը,
- կրթության, գիտության և համաշխարհային հանրության կյանքի այլ ոլորտների մեջ մեր տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը և տեխնոլոգիաների շարունակական զարգացումը:

#### **Ուսանողական վերապատրաստումներ և ուսուցում Չինաստանի առաջատար բուհերում**

ԵՊՀ ԿԻ-ն լեզվական գիտելիքների բարելավման նպատակով իրականացնում է ամենամյա կրթաթոշակային ծրագրեր 1 տարի, 6 ամիս և 4 շաբաթ տևողությամբ և բացառիկ հնարավորություն տալիս առաջադեմ ուսանողներին սովորել չինարեն լեզուն Չինաստանի առաջատար բուհերում:

Ամեն տարի ամռանը ԿԻ-ն իրականացնում է «Ամառային ճամբար» ծրագիրը, որի շրջանակներում լավագույն ուսանողները հնարավորություն են ստանում Չինաստանում անմիջականորեն ծանոթանալ չինական մշակույթին և հմտացնել իրենց լեզվական գիտելիքները:

#### **Ծանոթություն Չինաստանի հարուստ մշակույթին**

ԵՊՀ-ի ԿԻ-ին իրականացնում է դասախոսություններ և գործնական պարապմունքներ չինարենի, չինական հիերոգլիֆներ գրելու հնագույն

արվեստի (կալիգրաֆիա) և մարտարվեստի վերաբերյալ: Հարկ է նշել, որ օրեցօր աճում է Կոնֆուցիուսի ինստիտուտում շինարեն լեզու, կալիգրաֆիա և շինական ուշու՝ քայծի ցուան, սիննի ցուան, ցիգուն սովորողների թիվը: Այսօր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի «Կոնֆուցիուսի ինստիտուտում» շինարեն լեզու են ուսումնասիրում յոթ տարեկանից սկսած մինչև հասուն տարիքի տարբեր մասնագիտությունների տեղ մարդիկ: Իսկ մասնագիտությունների և տարիքային տարբերությունների մասին մոռացվում են հաճախակի անցկացվող տարատեսակ միջոցառումների ժամանակ:

### ԵՊԼՀ կարևոր իրադարձություններ

Կոնֆուցիուսի ինստիտուտը 2010թ. կազմակերպել էր շինական գրքերի մեծ ցուցահանդես, որի բացումը տեղի ունեցավ հունիսի 9-ին: Ցուցահանդեսի բոլոր գրքերը նվիրատվություն էին Չինաստանի կառավարության կողմից: Այնուհետև հաջորդեց գրքերի ցուցահանդես Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտում, որը նույնպես մեծ հաջողություն ունեցավ:

Կարևորագույն է համարվում նաև 2011թ. մարտի 12-ին կայացած շինարեն լեզվի միջազգային որակավորման HSK քննության հանձնումը: Չինարեն լեզվի միջազգային որակավորման քննությունը մեծ ձեռքբերում է ԿԻ գործունեության համար: Հարկ է նշել, որ ԵՊԼՀ ԿԻ-ն միակն է տարածաշրջանում, որին Հանքանի կողմից իրավունք է ընձեռվել անցկացնել HSK քննությունը: Քննություն հանձնողները Չինաստանից ստանում են իրենց գիտելիքը հաստատող միջազգային մոնոլի վկայականներ, որոնք ուժի մեջ են երկու տարի: ԵՊԼՀ-ի ԿԻ-ում HSK քննության հանձնման համար հայտ են ներկայացնում նաև ուսանողներ տարածաշրջանից՝ մասնավորապես Վրաստանից:

Ողջ Հայաստանի համար շատ կարևոր էր 2011թ. ապրիլի 11-ին Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կոմկուսի կենտկոմի քաղբյուրոյի մշտական հանձնաժողովի անդամ Լի Չանչունի այցը Հայաստան, և մասնավորապես ԵՊԼՀ Կոնֆուցիուսի ինստիտուտ, որտեղ

նա ինստիտուտին մվիրաբերեց չին մեծն փիլիսոփա Կոնֆուցիուսի կիսանդրին: Լի Չանչունը նշեց, որ չնայած Հայաստանն ու Չինաստանը տարածքով միմյանցից հեռու են, սակայն երկու երկրների ավանդական բարեկամությունը շարունակվում է:

Կիսանդրու բացման հանդիսավոր արարողությանը և Կոնֆուցիուսի ինստիտուտի երկամյա գործունեությանը նվիրված միջոցառմանը ներկա էին նաև Չինարենի տարածման գլխամասային գրասենյակի պատվիրակությունը և Շանսիի համալսարանի ներկայացուցիչները:

### **Ծանոթություն ավանդական և ժամանակակից չինական հասարակությանը**

Չինաստանի պատմությանը և մշակույթին նվիրված դասախոսությունները հատուկ հրավիրված հայտնի չինագետների կողմից հնարավորություն են ընձեռում բավականաչափ և ավելի խորը գիտելիք ձեռք բերել Չինաստանի մասին:

### **Հագեցած և բազմազան մշակութային կյանք**

ԵՊՀ «Կոնֆուցիուսի ինստիտուտ»-ի կողմից չեն մոռացվում հեռավոր Չինաստանում իրականացվող տոները: Միջոցառումներն անցկացվում են չինական բոլոր սովորույթներով: Հայ հետաքրքրասերների շրջանակներում արդեն մեծ համբավ են վայելում չինական «Լուսնի» տոնը (աշնան կամ բերքահավաքի տոն), չինական Նոր տարին, «Լապտերների» տոնը և այլն:

### **ԵՊՀ-ի Կոնֆուցիուսի ինստիտուտում անցկացվում են հետևյալ դասընթացները՝**

- Չինարեն լեզու
- Կալիգրաֆիա
- Ուշու (թայ ծի ցուան, սիննի ցուան, ցիգուն)




- Կորպորատիվ դասընթացներ
- Կրթություն ՉԺՀ-ում
- Ամառային ճամբար ՉԺՀ-ում (Summer Camp)
- HSK քննության նախապատրաստում և հանձնում
- Չինարենի դասախոսների վերապատրաստում ՉԺՀ-ում

ԵՊՀ Կոնֆուցիուսի ինստիտուտում ուսուցումն իրականացվում է Չինաստանից ժամանած բարձր որակավորում ունեցող մասնագետների կողմից՝ չինարենի ուսուցման մորազույն մեթոդների կիրառմամբ:

Պարբերաբար կազմակերպում են կոնֆերանսներ, սեմինարներ, ցուցահանդեսներ, չինական մշակութային փառատոններ, այլ միջոցառումներ:

## Աղյուսակ 2

ԵՊՀ-ի Կոնֆուցիուսի ինստիտուտի ուսումնական գործընթացը



ԵՊԼՀ-ի ԿԻ-ն նախատեսում է իրականացնել նաև չինարեն լեզվի հեռահար ուսուցումը, որը հանդիսանում է 21-րդ դարի ուսուցման նորագույն տեսակներից:

Առաջնորդվելով հայ և չինացի ժողովուրդների միջև կապերի ամրապնդման, կրթության բնագավառում համագործակցության զարգացման մղումով, ԵՊԼՀ Կոնֆուցիուսի ինստիտուտը իրապես մեծ խթան է հանդիսանում երկու երկրների միջև կրթական և մշակութային կապերի ամրապնդման գործում:

Կոնֆուցիուսի ինստիտուտը հանդիսանում է այցեքարտ հայ երիտասարդների, ուսանողների և հայ հասարակության համար անմիջապես մեր հայրենիքից բացահայտելու չինական մշակույթը և Չինաստանը:

## RESUME

NAIRA GRIGORIAN

CONFUCIUS INSTITUTE AT THE YEREVAN STATE  
LINGUISTIC UNIVERSITY AFTER V. BRUSOV

Confucius Institutes are non-profit public institutions that aim to promote Chinese language and culture, support local Chinese teaching internationally, as well as facilitating cultural exchanges. Confucius Institutes around the world have the primary goals of teaching the Chinese language of standard Mandarin, as well as to promote cultural exchange and facilitate business activity between China and participating countries. With its headquarters (Hanban) located in Beijing the Confucius Institutes fall under the jurisdiction of the Office of Chinese Language Council International. The first official Confucius Institute was opened in Seoul, the capital city of the Republic of Korea. Other institutes followed in quick succession and by July 2010, there were 316 Confucius Institutes and 337 Confucius Classrooms located in 94 countries and regions. Conservative estimates are that there are around 100 million people around the world, outside of China, learning Chinese and Hanban has set a goal of establishing 1,000 of these institutes by the year 2010.

In October 2008 under the support of Hanban, Shanxi University and Yerevan State Linguistic University after V. Brusov jointly signed agreement to establish

Confucius Institute at Yerevan State Linguistic University after V. Brusov. On February 27, 2009, Armenian Confucius Institute had its opening ceremony. In 2010 Confucius Institute at YSLU opened "Chinese Cultural Experience Center". It is a corner, presenting elements of Chinese culture, including parts of costumes, musical instruments, silverware and ceremonial procedure of drinking tea and will always be open for those wishing to visit the corner.

Confucius Institute at YSLU organizes

- The Chinese language lessons
- Wushu ( tai ji chuan) lessons
- Calligraphy lessons
- Training and passing HSK exam
- Education in PRC
- Trainings for Chinese language teachers in PRC

Chinese classes are conducted by qualified teachers from China. Education is carried out using the latest teaching materials and programs. Regularly forums, seminars, exhibitions and other activities are organized.

The establishment of Armenian Confucius Institute improved Armenian-Chinese learning upsurge, promoted the two countries in various fields such as education and cultural exchanges and cooperation, and enhance the two peoples for friendship and understanding. The Armenian Confucius Institute will continue to work hard, to do the work of Chinese teaching, improving teaching quality, to organize the Chinese cultural activities for Chinese teaching and promotion service, to expand and strengthen Chinese teaching research category for students to learn the Chinese language and culture. The Confucius Institutes aim is the future cooperation between our two countries due to the excellent language knowledge which is very important for fundamental understanding.

## ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՉԺՀ-Ի ԱՐԴԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՅԸ ՀԱՅԱՍՏԱՆ

2011թ. ՄԱՅԻՄԻ 15-18-Ը

2011թ. մայիսի 15-18-ը ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի հրավերով Հայաստանում էր գտնվում Չինաստանի Արդի միջազգային հարաբերությունների ակադեմիայի պատվիրակությունը /ՉԱՄՀԱ/: ՉԱՄՀԱ-ի փոխնախագահի՝ Ցզի Չժիյեի գլխավորած պատվիրակությունը: Մայիսի 15-ին պատվիրակությունն այցելեց Հայոց ցեղասպանություն ինստիտուտ-թանգարան, Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում հարգանքի տուրք մատուցեց Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին, եղավ Էջմիածնում:

Մայիսի 16-ին պատվիրակությունը հյուրընկալվեց Գիտությունների Ազգային Ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտում, հանդիպում ունեցավ ինստիտուտի տնօրեն Ռ.Սաֆրաստյանի, տնօրենի խորհրդական, Արևելյան Ասիայի երկրների բաժնի վարիչ Ն.Հովհաննիսյանի, նույն բաժնի ավագ գիտաշխատող Ա.Հարությունյանի հետ: Հանդիպման վերջում ստորագրվեց համագործակցության պայմանագիր: Պատվիրակությունը հանդիպում ունեցավ նաև ՀՀ ԳԱԱ-ի ակադեմիկոս-քարտուղար Վլադիմիր Բարխուդարյանի և ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանի հետ: Նույն օրը պատվիրակությունն այցելեց Երևանի Կովկասի ինստիտուտ, հանդիպում ունեցավ ինստիտուտի տնօրեն Ա.Իսկանդարյանի հետ:

Մայիսի 17-ին չինացի հյուրերը հանդիպում ունեցան ՀՀ ԱԳՆ-ի փոխնախարար Ս.Մանասեթյանի, Հայաստանի Հանրային խորհրդի նախագահ Վ.Մանուկյանի, Հանրապետական կուսակցության փոխնախագահ Մ.Լալայանի, Հայաստանի Ազգային Ժողովի գիտության, կրթության և մշակույթի գծով հանձնաժողովի հետ:

ՀԱՄՀԱ-ն միջազգային համակոորդմանի ուսումնասիրություններով զբաղվող գիտահետազոտական կենտրոն է, հիմնադրվել է 1980թ. և 2003թ. վերակազմավորվել Հիմնաստանի Արդի Միջազգային Հարաբերությունների Ակադեմիայի: ՀԱՄՀԱ-ն ունի 380 աշխատակից, որոնցից 107-ը գիտաշխատողներ:

### **Ակադեմիայի կառուցվածքը**

1. Ակադեմիայի նախագահություն
2. Մարդկային ռեսուրսների /կադրերի/ վարչություն
3. Միջազգային հարաբերությունների վարչություն
4. ՀԱՄՀԱ-ի ամսագրի խմբագրություն
5. Միջազգային տեղեկատվական կենտրոն

### **Ակադեմիայի կազմում կա 7 ինստիտուտ և 3 վարչություն՝**

1. Ռուսաստանի ինստիտուտ
2. Ամերիկայի ինստիտուտ
3. Եվրոպայի ինստիտուտ
4. Ճապոնիայի ինստիտուտ
5. Ասիայի և Աֆրիկայի ինստիտուտ
6. Անվտանգության և Ռազմավարության ինստիտուտ
7. Համաշխարհային տնտեսության ինստիտուտ
8. Կենտրոնական Ասիայի վարչություն
9. Լատինական Ամերիկայի վարչություն
10. Կորեական բերակղզու վարչություն

### **10 գիտական կենտրոն**

1. Անդր-ատլանտյան ուսումնասիրությունների կենտրոն
2. Էթնիկ և կրոնական ուսումնասիրությունների կենտրոն
3. Երրորդ աշխարհի երկրների հետազոտությունների կենտրոն

4. Ռազմավարական հետազոտությունների կենտրոն
5. Թարգմանչական ծառայության կենտրոն
6. Հակաահաբեկչական ուսումնասիրությունների կենտրոն
7. Շնչափամերի կառավարման ուսումնասիրությունների կենտրոն
8. Տնտեսական Անվտանգության հետազոտությունների կենտրոն
9. Թայվանին առնչվող հետազոտությունների կենտրոն
10. Հոնգ Կոնգին և Մակաոյին առնչվող հետազոտությունների կենտրոն

ՉԱՄՀԱ-ի գիտահետազոտական աշխատանքների ոլորտներն են համաշխարհային ռազմավարական, քաղաքական, տնտեսական և անվտանգության վերաբերյալ հետազոտությունը, այլ երկրների հետ Չինաստանի հարաբերությունների խնդիրների ուսումնասիրությունը: Գիտահետազոտական աշխատանքները իբրև զեկույց ներկայացվում են համապատասխան գերատեսչությունների կամ տպագրվում են ակադեմիական պարբերականներում: ՉԱՄՀԱ-ն մաս չինացի կամ արտերկրի գործընկերների հետ իրականացնում է ընդհանուր գիտահետազոտական մախագծեր:

Նա ակադեմիական հարաբերություններ ունի բազմաթիվ գիտահետազոտական ինստիտուտների հետ, տարեկան հարյուրավոր արտասահմանցի փորձագետներ և գիտնականներ մասնակցում են ՉԱՄՀԱ-ի հովանավորությամբ կազմակերպվող սեմինարներին: Ակադեմիան մաս բազմաթիվ գիտնականներ է գործուղում արտասահման՝ ուսման, գիտահետազոտական աշխատանքների իրականացման, դասախոսությունների և միջազգային գիտաժողովների մասնակցության մալատակով:

### III

## Գ Ր Ա Խ Ո Ս ՈՒ Թ Յ ՈՒ Ն

*ԱԶԱՏ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, ՀԱՅԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, Չինաստանի  
Էներգետիկ անվտանգության ռազմավարությունը և դրա  
նշանակությունը Կենտրոնական Եվրասիայում, (7 քարտեզ, 5  
աղյուսակ), Երևան, 2010, 198 էջ:*

ՀՀ ԳԱԱ-ի Արևելագիտության ինստիտուտը լույս է ընծայել Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում (ՉԺՀ) ՀՀ առաջին դեսպլան Ազատ Մարտիրոսյանի և քաղաքագիտական գիտությունների թեկնածու Հայկ Մարտիրոսյանի «Չինաստանի էներգետիկ անվտանգության ռազմավարությունը և դրա նշանակությունը Կենտրոնական Եվրասիայում» աշխատությունը: Առաջին անգամ հայ ընթերցողի դատին է հանձնվել մի աշխատություն, որում համգամանալիորեն ներկայացվել են Չինաստանի գլոբալ տնտեսական ինտեգրման ու արտաքին ներդրումների առանձնահատկությունները, էներգետիկ անվտանգության ապահովման ռազմավարական մոտեցումները, էներգետիկ ոլորտում արտաքին ներդրումների առանձնահատկություններն ու ռազմավարությունը: ՉԺՀ-ի էներգետիկ անվտանգության ապահովման առումով առանձնակի ուշադրություն է դարձվել Կենտրոնական Եվրասիայի էներգակիրների նշանակությանը՝ դրանց ունեցած միջազգային դերի և կարևորության համատեքստում, տարածաշրջանում ՉԺՀ-ի կողմից իրականացվող էներգետիկ դիվանագիտությանն ու քաղաքականությանը: Այլ ազդեցիկ գլոբալ ուժերի հետ հարաբերությունների համատեքստում վերլուծվել են ՉԺՀ-ի քաղաքականության, ռազմավարության և էներգետիկ անվտանգության ապահովման հիմնական առանձնահատկությունները Կենտրոնական Ասիայում: Կատարվել է Կենտրոնական Եվրասիայի էներգակիրների արտահանումների և ՉԺՀ-ի էներգետիկ անվտանգության ապահովման աշխարհաքաղաքական և տարածաշրջանային զարգացումների հեռանկարի վերլուծություն:

Աշխատանքի առաջին գլխում՝ «ՉԺՀ էներգետիկ անվտանգության ռազմավարությունը» (էջ 9-34), Չինաստանի արագընթաց տնտեսական աճի գերակա նպատակների և հիմնական ուղղությունների, Համախառն ներքին արտադրանքի (ՀՆԱ) կառուցվածքային փոփոխությունների և այլ գործոնների համեմատական վերլուծության համատեքստում, ներկայացվում է ՉԺՀ-ի տնտեսությունում առաջացած որակապես նոր իրավիճակը, «ինչն արտահայտվեց երկրում առաջնային էներգիայի արտադրության և պահանջարկի միջև հարաճուն քացասական հաշվեկշռի անշրջելի առկայությամբ», և որպես հետևանք՝ արտաքին վերահսկողության տակ գտնվող սաշարների՝ հատկապես էներգակիրների ներմուծումից ՉԺՀ-ի խորացող կախվածությունը: Չինաստանի տնտեսության հիմնական բնութագրիչների և ներկա գլոբալ դիրքի գնահատման համատեքստում ներկայացվում են ՉԺՀ-ի էներգետիկ պահանջարկի աճի և հիմնական էներգիա սպառող երկրների էներգետիկ պահանջարկի փոփոխությունների համեմատական գնահատականները: Մանրամասն ներկայացվում է Չինաստանի առաջնային էներգիայի կառուցվածքը, էներգետիկ համակարգի ներկա իրավիճակը և զարգացման հիմնական միտումները, իրականացվող բարեփոխումները, ոլորտում վարվող քաղաքականությունն ու էներգետիկ անվտանգության ապահովման ՉԺՀ-ի ռազմավարությունը:

Աշխատանքի երկրորդ գլխի՝ «Չինաստանի արտաքին ներդրումներն ու էներգետիկ անվտանգությունը: էներգետիկ ոլորտում արտաքին ներդրումների առանձնահատկություններն ու ռազմավարությունը» (էջ 35-74), քննության նյութն է 1997թ. վերջից ՉԺՀ-ում սկզբնավորված «Գնալ դուրս» ազգային ռազմավարությունը, որով չինական ձեռնարկություններին տրվեց արտերկրում ձեռնարկատիրական գործունեության զարգացման և ներդրումների իրականացման իրավասություն ու հանձնարական, որը «զարգանալով ձեռնարկությունների կառավարման համակարգի կատարելագործման ու ազատականացման ուղղությամբ, հետագայում վերածվեց Չինաստանի գլոբալ տնտեսական ինտեգրման հիմնական մեխանիզմի»: Ռազմավարության առանձնահատկությունների համատեքստում չինական ընկերությունների կողմից արտերկրում կատարվող ուղղակի ներդրումների շոշափելի ակտիվացման ու դրանց աշխարհագ-



ության ու ծավալների ընդարձակման, ՉԺՀ-ի տնտեսական գլոբալ ներգրավվածության և դրա հեռանկարային զարգացման խնդիրների առումով աշխատանքում կատարված համակողմանի վերլուծությունն առանձնակի արդիական նշանակություն ունեցող թեմա է: Հիմնականում հենց այդ զարգացումների համատեքստում է Արևմուտքում դիտարկվում Չինաստանի «Մեծ ռազմավարության» և դրա հետևանքով՝ «չիմական սպառնալիքի» հետագա առաջացման հնարավորությունը, ինչն առանձնապես ցայտուն է արտացոլվում էներգետիկ պաշարների ոլորտում:

"Գնալ դուրս" ռազմավարության կիրառման շրջանակներում ներկայացվել և վերլուծվել է չիմական Անդրազգային ընկերությունների՝ հատկապես Չինաստանի ազգային մավթային ընկերությունների ձևավորման, դրանց կողմից արտերկրում կատարվող ներդրումների իրականացման և աշխարհագրական ծավալման մեխանիզմների, Միաժույժան ու Ֆեռքերման (ՄՉ) գործառույթների առանձնահատկությունները: Էներգետիկ ոլորտում արտերկրյա ներդրումների ու ՄՉ գործառույթների աշխարհագրական ծավալման, ինչպես նաև էներգակիրների անվտանգության ապահովման ՉԺՀ-ի լուծումների գլոբալ նշանակության և հետևանքների համատեքստում ներկայացվել և վերլուծվել են արտերկրից էներգակիրների ապահովման ՉԺՀ-ի դիվանագիտությունն ու քաղաքականությունը, ինչպես նաև՝ ներմուծման անվտանգության ապահովման հիմնախնդիրներն ու դրանց լուծման հիմնական ուղղությունները:

Աշխատանքի երրորդ գլուխը՝ «Կենտրոնական Ասիայի էներգակիրների նշանակությունը և առկա իրավիճակը» (էջ 75-107), նվիրված է Կենտրոնական Եվրասիայի էներգակիրների նշանակությանը և առկա իրավիճակի բազմակողմանի վերլուծությանը: Նավթի և գազի արդյունահանման ավանդական կենտրոններից գլոբալ (կամ տարածաշրջանային, ինչպես նաև որոշ երկրների մեծածավալ էներգետիկ պաշարների պահանջարկից) կախվածության շարունակական աճի հետ՝ հեռանկարային համեմատության ենթատեքստում վերլուծվում է կասպյան էներգակիրների ապացուցված և ենթադրվող պաշարների նշանակությունը՝ միջազգային էներգետիկ անվտանգության առումով: Վերլուծությունն արված է ինչպես ընդհանուր տարածաշրջանային, այնպես էլ՝ աժխաջ-

րաձմնային պաշարներ արդյունահանող առանձին երկրների էներգետիկ պաշարների ունեցած դերի և նշանակության ենթատեքստում:

Աշխատանքում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել Կենտրոնական Եվրասիայի էներգետիկ պաշարների գլխավոր դերի և նշանակության վերլուծությանը էներգակիրների սպառման հիմնական շուկաների՝ ԱՄՆ-ի, Եվրոպայի, Չինաստանի, Ճապոնիայի և Հնդկաստանի համար: Վերլուծվել են Կենտրոնական Եվրասիայում ինչպես զլոբալ դերակատարների, այնպես էլ տարածաշրջանի ածխաջրաձմնային պաշարներ արդյունահանող երկրների էներգետիկ քաղաքականությունն ու դրա հիմնական առանձնահատկությունները զարգացումների արդի փուլում և հեռանկարում:

Աշխատանքի չորրորդ գլխում՝ «ՉԺՀ էներգետիկ դիվանագիտությունը և քաղաքականությունը Կենտրոնական Ասիայում» (էջ 107-135), վերլուծվում է ՉԺՀ-ի էներգետիկ դիվանագիտության և քաղաքականության առանձնահատկությունները Կենտրոնական Եվրասիայում: Մանրամասնորեն ներկայացվել է Կենտրոնական Եվրասիայի երկրների էներգակիրների արտադրության ոլորտում Չինաստանի ընդգրկվածության մակարդակը, առանձնահատկություններն ու դրա ծավալման հեռանկարային հնարավոր զարգացումները: Բազմակողմանիորեն վերլուծվել է տարածաշրջանում խոշորագույն նախագծի՝ Անդրասիական գազատարի դերը ՉԺՀ-ի էներգետիկ անվտանգության ապահովման առումով և դրա տարածաշրջանային-աշխարհաքաղաքական նշանակությունը՝ էներգակիրների արտահանման և սպառման մյուս կենտրոնների համար: Չորրորդ գլխի վերջին պարագրաֆում վերլուծվել են Չինաստանի քաղաքականության, ռազմավարության և էներգետիկ անվտանգության ապահովման հիմնական առանձնահատկությունները Կենտրոնական Ասիայում՝ ՉԺՀ-ի էներգետիկ անվտանգության ընդհանրական ապահովման և՛ այլ զլոբալ ազդեցիկ ուժերի հետ հարաբերությունների համատեքստում:

Հինգերորդ գլխում՝ «Չինաստանի էներգետիկ անվտանգության քաղաքականությունը Կենտրոնական Ասիայում: Էներգետիկ անվտանգության աշխարհաքաղաքական և տարածաշրջանային զարգացումների հեռանկար» (էջ 135-163), ներկայացվել են ՉԺՀ-ի արտաքին քաղա-

քականության ու ռազմավարության առանձնահատկությունները Կենտրոնական Ասիայում՝ հետսառաքյալատերազմյան շրջանի հիմնական աշխարհաքաղաքական-տարածաշրջանային զարգացումների համատեքստում: Բազմակողմանիորեն վերլուծվել են Կենտրոնական Եվրասիայում Չինաստանի էներգետիկ անվտանգության ապահովման հիմնախնդիրները, դրանց լուծման առումով ՉԺՀ-ի կողմից վարվող քաղաքականությունը և վերջինիս արդի ու հեռանկարային նշանակությունը տարածաշրջանում:

Կենտրոնական Եվրասիայի էներգետիկ պաշարների սպառման ձևավորված գլխավոր կենտրոնների և էներգակիրների արտահանումների վերահսկմամբ շահգրգիռ ազդեցիկ ուժերի միջև խողովակաշարային աշխարհաքաղաքական մրցակցության համատեքստում ներկայացվել է տարածաշրջանից էներգակիրների արտահանումների և ՉԺՀ-ի էներգետիկ անվտանգության ապահովման աշխարհաքաղաքական և տարածաշրջանային զարգացումների հեռանկարի վերլուծություն:

Աշխատանքի յուրաքանչյուր գլխում ներկայացված խնդիրներն ունեն առանձնահատուկ բովանդակային նշանակություն և դրանցում ներկայացված բազմաթիվ հարցեր կարող են դառնալ հետագա հետազոտությունների առարկա: Գրքում օգտագործված է արևմտյան, ռուսական և չինական հետազոտական կենտրոնների հրատարակած գիտական և վերլուծական նշանակություն ունեցող հարուստ գրականություն, ինչը շատ կարևոր է առկա տեսակետների բազմազանության ըմբռնման, ինչպես նաև աշխատանքում կատարված վերլուծությունների և եզրակացությունների ընդհանրականության տեսանկյունից:

Հարկ ենք համարում նկատել, որ աշխատանքը մեծապես կշահեր, եթե գրքում օգտագործված աղբյուրներն ու գրականությունը ներկայացվեին գիտական հետազոտությանը խիստ անհրաժեշտ ծանոթագրությունների տեսքով:

Գիրքը մախատեսված է մասնագետների, վերլուծաբանների, ուսանողների, դիվանագետների և ընթերցող լայն շրջանների համար:

**Աղավնի Հարությունյան,**  
*պատմական գիտությունների թեկնածու*

# ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

## СОГЛАШЕНИЕ

о научных обменах и сотрудничестве между  
Китайской Академией современных международных отношений  
и Институтом востоковедения Национальной Академии Наук  
Республики Армения

Китайская Академия современных международных отношений и Институт востоковедения Национальной Академии Наук Республики Армения, руководствуясь желанием установить двусторонние дружеские связи, провели консультации и приняли решение развивать научный обмен и сотрудничество между двумя учреждениями на основе принципов равенства и взаимной выгоды. Стороны договорились о нижеследующем:

### I. Объемы, условия и тематика сотрудничества

1. Регулярно осуществлять обмен научными сотрудниками и делегациями.
2. Периодически обмениваться информацией о научных конференциях и изданиях.
3. Содействовать публикации в изданиях каждой из Сторон материалов, предоставляемых для этого другой Стороной.
4. Осуществлять совместные научные проекты.
5. Предоставлять возможную помощь приезжающим ученым и специалистам другой стороны.
6. Вопросы о расходах, связанных с выполнением соответствующих обязательств, будут решаться в ходе двусторонних консультаций.

### II. Сроки действия настоящего Соглашения

1. Настоящее Соглашение заключается сроком на пять лет, начиная со дня подписания. Если Стороны не выразят желания прекратить действие соглашения, оно будет автоматически продлено еще на пять лет.

2. Если в течение срока действия настоящего Соглашения одна из Сторон пожелает прекратить его действие, то она должна уведомить об этом другую Сторону в письменной форме.

### III. О языках Соглашения

Настоящее Соглашение составлено на русском языке в двух аутентичных экземплярах, каждый из которых является оригиналом.

### IV. Юридические адреса Сторон

Китайская Академия современных международных отношений:

Китайская Народная Республика, г. Пекин, 100081, район Хайдянь, Ваныноусы А-2.

Институт востоковедения Национальной Академии Наук Республики

Армения:

Республика Армения, г. Ереван, 0019, пр. Маршала Баграмяна, 24/4

Институт востоковедения  
Национальной Академии Наук  
Республики Армения

Китайская Академия современных  
международных отношений

Рубен Сафрастян



Джи Жийе



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՐՀԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՏԵՂԱՇԱՐԺԸ ԱՐԵՎՄՈՒՏՔԻՑ ԱՐԵՎԵԼԸ .....	5
--	---

## I

### ՀՈԴՎԱԾՆԵՐ

ԱՐԾՎԻ ԲԱՆԶԻՆՅԱՆ ՄԻՆԱԿԱՏԱ ԿՈՒՄԳՈՒՍՈՒՆ ԵՎ ՆՐԱ ՀԵՏԱԲՐԶՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՆԴԵՊ .....	29
ԱՐՄԵՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ ՀԱՅ-ՀՆԴԱԿԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԲԱՂԱԲԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ .....	37
ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ ՀԱՅԵՐԻ ՇՓՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԱՎ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՄԻԱՅԻ ՈՒ ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ .....	57
ԳԱՎԻԹ ԿՆՅԱԶՅԱՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԻԱՅԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՋԱՐԳԱՅՄԱՆ ՈՐՈՇ ԱՄՊԵԿՏՆԵՐԻ ԵՎ ԱՅԴ ՀԱՐՅՈՒՄ ՀՆԴԱՍՏԱՆԻ ԴԵՐԻ ՇՈՒՐՋԸ .....	71
ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԶԻՆ-ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱՌԵՎՏՐԱՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ .....	87
ԵՎԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՃԱՊՈՆԻԱՅԻ ՄԵՐՋԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՆՈՐ ԲԱՂԱԲԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀԵՏԱՌԸՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1991-2001pp.) .....	104

## II ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ՆԱԻՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐԶՈՒՄՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՈՆՖՈՒՅԻՈՒՄԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ .....	114
ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՉԺՀ-Ի ԱՐԴԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՅԸ ՀԱՅԱՍՏԱՆ 2011թ. ՄԱՅԻՍԻ 15-18 .....	124

## III ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱԶԱՏ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, ՀԱՅՎ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, ՉԻՆԱՍՏԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿՈՄԻՏԵՍԻ ՄԱՍԻՆ ԴԱՏԱՎԱՐՈՒՄԻՆ ԵՎ ՊՐԱ ԵՆԴԱՆԱԿՈՒՄԻՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՎՐԱՍԻԱՅԻՆ, ԵՐԵՎԱՆ, 2010, 198 էջ .....	127
---	-----

## IV ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

### Соглашение

о научных обменах и сотрудничестве между Китайской Академией современных международных отношений и Институтом востоковедения Национальной Академии Наук Республики Армения .....	132
--	-----

## CONTENTS

**NIKOLAY HOVHANNISYAN**

RADICAL CHANGES IN CONTEMPORARY INTERNATIONAL RELATIONS: TRANSFER OF WORLD CENTER FROM WEST TO EAST .....	5
---	---

### I

#### ARTICLES

**ARTSVI BAKHCHINYAN**

MINAKATA KUMAGUSU AND HIS INTEREST IN ARMENIAN LANGUAGE .....	29
--	----

**ARMEN BAIBOURTIAN**

THE SHAPING OF THE ARMENIAN- INDIAN INTERSTATE AND POLITICAL RELATIONS: DIPLOMACY IN ACTION .....	37
--	----

**VAHAN BAIBURTIAN**

FROM THE HISTORY OF CONTACTS OF THE ARMENIANS WITH THE SOUTH AND SOUTH-EASTERN ASIAN AND FAR EASTERN COUNTRIES IN THE LATE MIDDLE AGES .....	57
--	----

**DAVID KNYAZYAN**

SOUTH ASIAN ASSOCIATION FOR REGIONAL COOPERATION. CERTAIN ASPECTS OF ITS DEVELOPMENT AND THE ROLE OF INDIA .....	71
--	----

**AGHAVNI HARUTYUNYAN**

ON SINO-EGYPTIAN TRADE-ECONOMIC COOPERATION .....	87
---	----

**YEVA HARUTYUNYAN**

THE FORMATION OF JAPAN'S MIDDLE EASTERN NEW POLICY DURING THE POST-COLD WAR ERA (1991-2001) .....	104
--	-----



## **II SCIENTIFIC INFORMATION**

**NAIRA GRIGORIAN**

CONFUCIUS INSTITUTE AT THE YEREVAN STATE

LINGUISTIC UNIVERSITY AFTER V. BRUSOV ..... 114

**AGHAVNI HARUTYUNYAN**

THE VISIT OF THE DELEGATION OF CHINA'S ACADEMY OF  
CONTEMPORARY INTERNATIONAL RELATIONS TO

ARMENIA IN MAY 15-18, 2011 ..... 124

## **III REVIEW**

**AGHAVNI HARUTYUNYAN**

AZAT MARTIROSYAN, HAYK MARTIROSYAN,

China's Strategy of Energy Security and Its Importance

in Central Eurasia, Yerevan, 2010, 198 p. .... 127

## **IV DOCUMENT**

### **Agreement**

On scientific exchange and cooperation between the Chinese Academy  
of contemporary international relations and institute of Oriental Studies,  
National Academy of Sciences, Republic of Armenia ..... 132

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA  
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

## EASTERN ASIAN STUDIES

### II

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐԵՎԵԼԱՍՄԻԱԿԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### II

Ստորագրված է տպագրության՝ 20.10.2011: Չափեր՝ 60 x 84 1/32:  
Թուղթը՝ օֆսեթ № 1: Տպագրությունը՝ օֆսեթ: 8,625 տպ. մամուլ:  
Տպաքանակը՝ 200 օրինակ:

---

Տպագրվել է «Գևորգ - Հրայր» ՍՊԸ



հրատարակչությունում

Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:

Հեռ.՝ 52-79-74, 52-79-47:

Էլ. փոստ՝ [lusakn@rambler.ru](mailto:lusakn@rambler.ru)

ԳՍՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



**FL0277486**

A	8
	99273